

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՎԵԼԻ ԹԱՄՈՅԱՆ

**ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽԱՂԻՐՆԵՐԻ
ԼՈՒՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ ԹՅԱՆ ԲԱԴԵՆ-
ՎՅՈՒՐՏԵՆԲԵՐԳԻ ՀՈՂԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ)**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունը տնտեսագիտություն թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման համար

**Գիտական ղեկավար՝
տնտեսագիտություն դոկտոր, պրոֆեսոր
Էդուարդ Սերգեյի Ղազարյան**

ԵՐԵՎԱՆ – 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ1. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....11

- 1.1 Խաղողագործության վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում.....11
- 1.2 Խաղողագիտագործական արտադրության սոցիալ-տնտեսական նշանակությունը ՀՀ-ում.....31

ԳԼՈՒԽ2. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ51

- 2.1. Վայոց ձորի մարզի բնատնտեսական պայմանները և դրանց նպաստավորությունը խաղողագործության զարգացման համար.....51
- 2.2. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը և դրա օգտագործման հիմնահարցերը.....59
- 2.3. Վայոց ձորի մարզի խաղողագիտագործական համալիրի վիճակը.....72

ԳԼՈՒԽ3. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ.....81

- 3.1. Խաղողագործության զարգացման հիմնախնդիրները ՀՀ Վայոց ձորի մարզում.....81
- 3.2. ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բաղես-Վյուրտենբերգի հողի խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծությունը.....95
- 3.3. Խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ Վայոց ձորի մարզում.....110

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....142

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....153

ՍՈՍՏԱԲԱՆ

Յետագոտություն թեմայի արդիականությունը:

Յայ աստանի Յանրապետությունում խաղողագործությունը մշտապես առաջնակարգ տեղ է զբաղեցրել: Խաղողագիտագործական արտադրանքները մեծ սպառողական պահանջարկ ունեն, ինչով էլ պայմանավորված է դրանց սոցիալ-տնտեսական նշանակությունը: Յանրապետությունում տարբեր բնատնտեսական գոտիների, այդ թվում նաև Վայոց ձորի մարզի բնական և կլիմայական պայմաններում հնարավոր է արտադրել տարբեր հասունացման ժամանակահատվածների սեղանի և տեխնիկական սորտերի խաղող:

Խաղողագործության զարգացման մակարդակը պայմանավորված է երկրում առկա արտադրատնտեսական հարաբերություններով, ինչպես միկրո, այնպես էլ՝ մակրոմակարդակներում: Խաղող արտադրող տնտեսավարողների առջև ծառայած են մի շարք խնդիրներ: Գրեթե բոլոր տնտեսությունները գտնվում են ծանր ֆինանսական վիճակում: Ստեղծված վիճակն ունի բազմաթիվ օբյեկտիվ հիմքեր, որոնցից էական դերակատարություն ունեն ոլորտի հատկապես, արտադրական ենթակառուցվածքների վերարտադրության գործընթացների բացակայությունը, պետական աջակցության թուլացումը, երկրում խաղողի այգետարածքների զգալի կրճատումը և, ի վերջո խաղողի արտադրության արդյունավետության ցածր մակարդակը:

Խաղողագործությունը ՅՅ ագրոպարենային համակարգի առանցքային ճյուղերից մեկն է համարվում և ունի կարևոր տնտեսական նշանակություն: Խաղողագործության զարգացման մակարդակից է կախված երկրի տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի ճյուղերի կենսունակությունը, ինչպիսիք են ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ճյուղերը:

Խաղողագիտագործական համալիրը բացի խաղողի արտադրությունից ներառում է նաև հումքի երկրորդային և առաջնային մշակման կազմակերպությունները, ինչպես նաև պատրաստի արտադրանքի արտադրության, գնումների,

պահեստավորման, տեղափոխման և վաճառքի գործընթացներով զբաղվող կազմակերպությունները:

Նշված բոլոր օղակները փոխկապակցված են տեխնոլոգիական, կազմակերպական և տնտեսական կապերով, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կատարում է հստակ սահմանված գործառույթ միայն որոշակի տեխնոլոգիական գործընթացում, հետևաբար, նշված կապերի խախտումը հանգեցնում է արդյունավետ հարաբերակցություն ձախողման:

Խաղողի այգու հիմնման համար կապիտալ ներդրումները համեմատաբար բարձր եկամտաբերության շնորհիվ հատուցում ապահովում են 4-5 տարում: Խաղողի արտադրությունը միավոր հողատարածության հաշվով ապահովում է համեմատաբար ավելի շատ աշխատատեղեր և համախառն արտադրանք, քան բուսաբուծության մյուս ճյուղերի մեծ մասը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 100 հատարածքով խաղողի այգու հիմնմամբ ստեղծվում է առնվազն 40 աշխատատեղ:

Այնուամենայնիվ, խաղողագործության զարգացումը պահանջում է մեծ ծավալի ներդրումներ, սակայն ամենակարևորը արտադրության միջոցների ռացիոնալ ու գիտականորեն հիմնավորված ներդրումն է, որպեսզի հետագայում հնարավոր լինի ստանալ համապատասխան վերադարձելիություն: Դրա համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել զարգացած խաղողագործությունը ունեցող երկրների փորձը և որոշակիորեն առաջնորդվել դրանով:

Խաղողագործության զարգացման համար անչափ կարևոր է, որպեսզի գինեգործական արտադրության հիմնական սուբյեկտները հումքային բազայի զարգացման համատեքստում կատարելագործեն հարաբերությունները խաղող արտադրող տնտեսվարողների հետ, ինչը կերաշխավորի միջազգային շուկայում բարձրորակ արտադրանքով ներկայանալու, հետևաբար նաև բարձր մրցունակություն և ապահովելու հնարավորությունը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է խաղողագործության և գինեգործության ոլորտների արդյունավետ ինտեգրման և փոխկապակցված զարգացման կառուցակարգերի մշակում և ներդրում:

Խաղողի տարբեր սորտերի վերամշակումից ստացվում են ալկոհոլային խմիչքներ՝ գինի, շամպայն, կոնյակ, օղի, Լիկյոր, ինչպես նաև ոչ ալկոհոլային արտադրանքներ՝ խաղողի հյուս, ջեմ, չամիչ, մարինադներ, կոմպոտ, և այլ վերամշակված արտադրանքներ:

Վերջին տարիներին հիմնականում թույլ հումքային բազայի առկայությամբ պայմանավորված, երկրում նվազել է խաղողի որակյալ գինիների և կոնյակների արտադրությունը:

Խաղողագործությունը եղել և մնում է ՀՀ գյուղատնտեսության առաջատար, հեռանկարային և տնտեսական բարձր արդյունավետությունն ապահովող ճյուղերից մեկը և որոշակի դեր է խաղում, ինչպես ամբողջ տնտեսության, վերամշակող արդյունաբերության, այնպես էլ խաղողի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների զարգացման և ֆինանսական կայունության ամրապնդման գործում:

Խաղողագործության զարգացման ներկավիճակը բնութագրվում է արտադրական գործընթացների ինտենսիվացման ցածր մակարդակով, արտադրողների ֆինանսական անկայունությամբ, արտադրատնտեսական ռիսկերի բարձր մակարդակով, որոնք էլ պայմանավորում են երկրի խաղողագործության արտադրական ցուցանիշների բացասական միտումները: Այս խնդրի լուծումը պահանջում է ենթակառուցվածքների բարելավման արդյունավետ գործընթացների իրականացում և դրանց առաջադրման հիմնարար կառուցակարգերի մշակում:

Արդյունաբերական խաղողագործության արտադրական կառուցվածքի բարդությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին գործոնների փոփոխվող ազդեցություններին հարմարվողականության մակարդակի բարձրացման կառուցակարգերը պահանջում են այդ արտադրական համակարգի խորը և համակողմանի տնտեսական վերլուծություն, դրա բարելավման համար գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակման համար:

Հանրապետությունում խաղողի պահանջարկն ամբողջությամբ բավարարվում է տեղական արտադրության հաշվին, սակայն հետաքրքիր է, որ ներկայումս զգալի տեսակարար կշիռ են կազմում խաղողի վերամշակումից ստացված, արտերկրից ներմուծված

արտադրատեսակները՝ կոնյակ, գինի, շամպայն և այլն: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում, այդ թվում՝ Վայոց ձորի մարզում առկա է զգալի չօգտագործված ներուժ՝ ինչպես թարմ խաղողի, այնպես էլ դրա վերամշակումից ստացված արտադրանքների գծով տեղական պահանջարկն ամբողջությամբ բավարարելու, ինչպես նաև արտահանման ծավալների էապես ավելացման ուղղությամբ: Ներկայումս, երբ հանրապետության խաղողագործությունը և գինեգործությունը տևական ճգնաժամից հետո զարգացման նոր փուլ են մտել, առաջնային խնդիր է համարվում ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը և դրանց հաղթահարման կարողակարգերի մշակումը:

Խաղողագործության զարգացման և խաղողագինեգործական արտադրանքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում բարձրացնելու նպատակով անչափ կարևոր է խաղողագործության և գինեգործության ճյուղերի արդյունավետության բարձրացումը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները:

Հետազոտության հիմնական նպատակը ՀՀ Վայոց ձորի մարզի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողագինեգործական համալիրների վիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման հիման վրա ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանն ուղղված համապատասխան առաջարկությունների մշակումը և միջոցառումների իրականացումն է, որոնք առկա ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմամբ կնպաստեն խաղողագործության զարգացմանը մարզում:

Նշված նպատակների իրագործման համար ատենախոսությունում առաջարկվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- վերլուծել ՀՀ խաղողագործության զարգացման առկա միտումները և գնահատել խաղողագինեգործական արտադրանքի տնտեսական նշանակությունը երկրի համար,

- վերլուծել ԳԴՅ և ԳԴՅ Բադեն-Վյոլտենբերգի հողի խաղողագործության զարգացման միտումները երկարաժամկետ կտրվածքով և գնահատել զարգացման դինամիկան,
- ուսումնասիրել մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը և բացահայտել դրա օգտագործման հիմնարկերը,
- ուսումնասիրել և վերլուծել մարզի խաղողագործության և գինեգործության արդի վիճակը,
- բացահայտել խաղողագործության և գինեգործության զարգացման սոցիալ տնտեսական նշանակությունը մարզում,
- մշակել խաղող արտադրող տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների կատարելագործման կառուցակարգեր,
- վերլուծել ՀՀ խաղողագինեգործական արտադրանքի շուկայի վիճակն ու առկամիտումները,
- ուսումնասիրել խաղողագինեգործական արտադրանքի գնագոյացման կառուցակարգերն ու առանձնահատկությունները ԳԴՅ Բադեն-Վյոլտենբերգի հողում,
- ուսումնասիրել ԳԴՅ Բադեն-Վյոլտենբերգի հողի խաղողագինեգործության ոլորտին ուղղվող պետական աջակցության մակարդակը և առաջարկել պետական քաղաքականության իրականացման առաջնահերթությունները ՀՀ Վայոց ձորի մարզում,
- ուսումնասիրել ԳԴՅ Բադեն-Վյոլտենբերգի հողի խաղողագինեգործության ոլորտի զարգացման փորձը, ինովացիաների կիրառումը և գնահատել ՀՀ Վայոց ձորի մարզում դրաց ներդրման հնարավորությունները,
- մշակել մարզի խաղողագինեգործական արտադրանքի իրացման համակարգի կատարելագործման արդյունավետ կառուցակարգեր,
- բացահայտել ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրները
- առաջարկել ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները:

Յեռագրում թյան օբյեկտը և առարկան:

Յետազոտութեան օբյեկտէն հանդիսացել ՅՅ Վայոց ձորի մարզի և ԳԴՅ Բաղէն-Վյուրտենբերգի հողի խաղողագործական տնտեսութեան նկատմամբ և խաղողագիտագործական արտադրանքի շուկան:

Յետազոտութեան առարկան խաղող արտադրող տնտեսութեան նկատմամբ ֆինանսական, նյութատեխնիկական ապահովման, սպասարկման ենթակառուցվածքների կատարելագործման, խաղող արտադրող և վերամշակող տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերութեան կարգավորման, խաղողագիտագործական արտադրանքի շուկայի կարգավորման հիմնահարցերն են:

Յետազոտութեան տեսական, տեղեկատվական և մեթոդականական հիմքերը:

Յետազոտութեան նույնպէս առաջարկված խնդիրների լուծման համար տեսական հիմք են ծառայել արտասահմանյան և հայ տնտեսագետների աշխատութեան նկատմամբ խաղողագիտագործական համալիրի արտադրատնտեսական հարաբերութեան նկատմամբ, տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերութեան նկատմամբ, ոլորտում առկա հիմնախնդիրների վերլուծութեան և ոլորտի զարգացման հարցերին:

Կիրառվել են հետազոտութեանն առնչվող ընդհանուր գիտական մեթոդները՝ ինդուկցիա, դեդուկցիա, դասակարգումներ, ընդհանրացումներ, խմբավորումներ, կառուցվածքային նկարագրութեան, տրամաբանական և տնտեսամաթեմատիկական մոդելավորման, բազմագործուն, համեմատական և տնտեսաչափական վերլուծութեան նկատմամբ:

Յետազոտութեան համար հիմք են հանդիսացել առկա օրենսդրական և նորմատիվային ակտերը, ազգային վիճակագրական ծառայութեան տվյալները, որոնք վերաբերում են Յայաստանի Յանրապետութեան, Վայոց ձորի մարզի և Գերմանիայի Դաշնային Յանրապետութեան ու Բաղէն-Վյուրտենբերգի հողի խաղողագիտագործական արտադրութեան դինամիկային, մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվութեան նկատմամբ վերլուծական նյութերը, միջազգային կազմակերպութեան նկատմամբ տեղեկագրերը և տեղեկատվական նյութերը: Որպէս տեղեկատվական հիմք՝ օգտագործվել են ատենախոսական հետազոտութեան նկատմամբ, մենագրութեան նկատմամբ, գիտական հոդվածներում,

պարբերականներում, հաստատությունների տեղեկատվական և վերլուծական նյութերում առկա տվյալները, տարբեր գիտնականների և հետազոտողների փորձագիտական վերլուծությունները և հետազոտությունները, ինչպես նաև էլեկտրոնային հարթակում (համացանցում) հրատարակված պաշտոնական տեղեկատվությունը:

Յետագոտության գիտական նորույթ:

Ատենախոսության ունում իրականացված հետազոտության ունեներն ու վերլուծության ունեները հանգեցրել են մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Բադեն-Վյուրտեմբերգի հողի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղի հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծության և դրանց ժամանակային շարքերի տրենդների մոդելավորման հիման վրա բացահայտվել են զարգացման միտումները:
- Բացահայտվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Բադեն-Վյուրտեմբերգի հողի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Վայոց ձորի մարզի խաղողի համախառն բերքի վրա այգիների տարածության ունեների և բերքատվության մակարդակի ազդեցության աստիճանը և տրվել է դրանց տնտեսա-չափական գնահատականը:
- ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ոլորտում կատարված ուսումնասիրության ունեների և SWOT վերլուծության արդյունքում բացահայտվել են ոլորտի արդի հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները:
- Վայոց ձորի մարզի խաղողագործության ոլորտում առկա հիմնախնդիրների և մարզում խաղողագործության զարգացման բնատնտեսական ու ռեսուրսային ներուժի համակողմանի գնահատման ու վերլուծության հիման վրա մշակվել են ոլորտի հեռանկարային զարգացման հիմնական ուղղության ունեները:

Յետագոտության գիտագործնական նշանակության ու նր:

Ատենախոսության ունում ստացված արդյունքների և առաջարկվող կառուցակարգերի գործնական կիրառության ունը կնպաստի ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության գիտագործնական նշանակության ունը կայանում է նրանում, որ հիմնական դրույթները կարող են

օգտագործվել խաղողագիտագործության ոլորտում կատարվող հետազոտությունների արդյունքների և արդյունքների մեծ ծավալ, որի հետևանքով հետազոտության արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են քննարկվել են Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Ազրարային Էկոնոմիկայի, Ագրոֆիզիկայի կառավարման և ազրարային քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում, իսկ արդյունքները հրատարակվել են հեղինակի 8 գիտական հոդվածներում:

Առենախոսությունները պարունակում է վիճակագրական տվյալների և վերլուծությունների մեծ ծավալ, որի հետևանքով տվյալ հետազոտության նյութերը կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես գյուղատնտեսության նախարարության, ինչպես նաև ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետարանի կողմից խաղողագործության ոլորտում համապատասխան քաղաքականության մշակման գործում:

Յեռագոտության արդյունքների փորձարկումը և հրատարակումները:

Առենախոսության հիմնական դրույթները, կատարված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են քննարկվել են Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Ազրարային Էկոնոմիկայի, Ագրոֆիզիկայի կառավարման և ազրարային քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում, իսկ արդյունքները հրատարակվել են հեղինակի 8 գիտական հոդվածներում:

Առենախոսության կառուցվածքը և ծավալը:

Առենախոսությունները բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից: Ծարարված է 159 էջ ծավալով, պարունակում է 17 աղյուցակ, 12 նկար և 21 գծապատկեր:

**ԳԼՈՒԽ 1. ԽԱՂՈՂԱԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՅՄԱՆ
ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

1.1. Խաղողագործության վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում

Խաղողագործությունը համարվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճյուղ և հնուց ի վեր համարվել է տնտեսության ավանդական և զարգացած ճյուղերից մեկը:

Հայերը հնուց ի վեր զբաղվել են խաղողագործությամբ և պտղաբուծությամբ: Հայկական «արևահամ» կոնյակների և գինիների բարձր որակը մեծապես պայմանավորված է խաղողի տեղական սորտերի առանձնահատկություններով: Դեռևս անցյալ դարի 80-ական թվականների կեսերից Խորհրդային Միությունում իրականացված հակաակոհոլային պայքարի, իսկ 1990-97թթ. գինու և կոնյակի արտահանման դժվարությունների հետևանքով մեծապես տուժեց խաղողագործության ճյուղը: Քանդվեցին ավելի քան 7 հազ. հեկտար խաղողի այգիներ: 1998 թվականից հետո խաղողի իրացման հետկապված դժվարություններն աստիճանաբար հաղթահարվեցին: Ներկայումս տարեցտարի մեծանում է այդ արժեքավոր հումքի պահանջարկը¹:

Ըստ «խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում խաղողի մշակության տարածաշրջաններն են Արարատի, Ար-մավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և Երևանի խաղողագործական տարածաշրջանները: Խաղողի տնկարկները դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների՝

- խաղողի արտադրական տնկարկ,
- խաղողի սորտերի տնկարան,
- խաղողի մայրուտ,
- խաղող արտադրողի անձնական կարիքների համար նախատեսված խաղողի տնկարկ,

¹ Ավետիսյան Ս. Ս. «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը»: Երևան: «Լիմուշ» հրատարակչություն, 2010թ., էջ 44

- Խաղողագործության և գինեգործության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նախատեսված տնկարկ:

Խաղողի արտադրական տնկարկները դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների՝

- երիտասարդ արտադրական տնկարկ, երբ այն մինչև 3 տարեկան է,
- պտղաբերության մեջ մտնող արտադրական տնկարկ, երբ այն 3 - 4 տարեկան է,
- արտադրական լիարժեք տնկարկ, երբ այն նվազագույնը 5 տարեկան է:

Խաղողի սորտերը դասակարգվում են ըստ՝

- օգտագործման ուղղությունների՝ գինեմետ, համապիտանի և սեղանի սորտերի,
- մաշկի կամ պտղահյութի գույնի՝ սպիտակ, վարդագույն և սևապտուղ սորտերի,
- պտղի բուրմուռների՝ չեզոք բուրմուռ և բուրավետ սորտերի,
- հասունացման ժամկետների՝ վաղահաս, միջահաս և ուշահաս սորտերի²:

Հայաստանի Հանրապետության Խաղողագործության մասնագիտացումը և սորտերի տեղաբաշխումն ըստ այգետարածքների և բնակլիմայական պայմանների բազմազանության ունի հետևյալ պատկերը³.

1. Արարատյան հարթավայրում Խաղողագինեգործությունը մասնագիտացված է.

ա Սեղանի Խաղողի արտադրություն՝ թարմ օգտագործման, չորացման, արտահանման և երկարատև պահպանման համար: Տեղաբաշխված (շրջանացված) սորտերն են. վաղահասներ՝ Անուշիկ, Մուսկատ Երևանյան, Սասուն, Սպիտակ Արաքսենի: Միջահասներ՝ Այվազյանի մուսկատենի, Դեղին և Վարդագույն Երևանիներ, Սև Քիչմիչ, Էրեբունի: Ուշահասներ՝ Անահիտ, Արևատ, Արարատի, Այվազյանի վարդաբույր, Այվազյանի

² «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2008 թվականի հունիսի 10-ին, էջ 7-8:

³ Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - Խաղողագործություն և սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ.», Երևան, 2003թ. - էջ 35-36:

խոշորապտուղ, Այվազյանի պահուենի, Այվազյանի բերքատու, Յայրենիք, Յայաստան, Մասիս, Ծահուամյանի, Պողարոկ Ռոսիի, Վանի, Տոկուեն, Կարմիր իծապտուկ:

բ. Սեղանի սպիտակ անապակ, թուենդ, կարմիր, թնդեցրած քաղցր, աղանդե-րային, լիկյորային գինիներ, կոնյակի գինենյուեն և խաղողահյուեն պատրաստելու համար տեղաբաշխված են՝ Ազատենի, ԱՐՄՍԽԻ, Գառան Դմակ, Կանգուեն, Կախեթ, Յաղթանակ, Մուսկատ հայկական, Այվազյանի բերքատու, Մսխալի, Նոենենի, Ռսկեհատ, Սափերավի, Տիգրանի, Կարմրահյուեն, Մեղրաբույր: Պետք է նշել, որ Անահիտը, Այվազյանի մուսկատենին, Այվազյանի վարդաբույրը, Մսխալին, Մուսկատ բերքատուեն, Վանին՝ համապիտանի սորտեր են: Դրանց բերքը կարելի է օգտագործել ինչպես թարմ վիճակում, այնպես էլ վերամշակել՝ խաղողահյուեն, գինիներ, կոնյակի գինենյուեն (բացառույթյամբ մուսկատային սորտերի) պատրաստելու համար:

2. Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտու խաղողագինեգործույուենը մասնագիտացված է.

ա Սեղանի խաղողի արտադրույուենն՝ թարմ օգտագործման, չորացման, արտահանման և երկարատու պահպանման համար (գոտու ցածրադիր տարածքներում): Տեղաբաշխված սորտերն են. վաղահաս՝ Անուշիկ: Միջահասներ՝ Այվազյանի մուսկատենի, Սպիտակ Արաքսենի, Դեղին և Վարդագույն երևանիներ, Սև քիշմիշ: Ուշահասներ՝ Անահիտ, Այգեգարդ, Յայաստան, Ծահուամյանի, Պողարոկ Ռոսիի, Տոկուեն, Կարմիր իծապտուկ:

բ. Սեղանի սպիտակ անապակ, կարմիր շամպայն, խերես տիպի, թնդեցրած քաղցր, կիսաքաղցր գինիների և կոնյակի գինենյուենի արտադրույուեն: Տեղաբաշխված սորտերն են՝ Անահիտ, ԱՐՄՍԽԻ, Գառան Դմակ, Կանգուեն, Յաղթանակ, Նոենենի, Ռսկեհատ, Սև Արենի:

3. Յուուսիս-արևելյան գոտում խաղողագինեգործույուենը մասնագիտացված է.

ա. Սեղանի թեթև անապակ, շամպայն գինիների և կոնյակի գինենյուենի արտադրույուեն: Տեղաբաշխված սորտերն են՝

Ալիգոտե, Բանանց, Լալվարի, Կան-գուեն, Կարմրահյուղ, Յաղթանակ, Նոնենի, Պինոսև, Ռքածիթելի, Սափերավի, Սևակի: ք. Սեղանի խաղողի արտադրությունն տեղում՝ թարմ սպառման համար: Տեղաբաշխված սորտերն են՝ Այգեգարդ, Այվազյանի մուսկատենի, Բուլգար, Կարդի-նալ, Յայաստան:

4. Դարայագյագի գոտում խաղողագիտագործությունը մասնագիտացված է.

ա Սեղանի կարմիր և կիսաքաղցր գինիների արտադրություն: Տեղաբաշխված սորտերն են՝ Սև Արենի, Յաղթանակ, Նոնենի, Կարմրահյուղ:

բ. Սեղանի խաղողի արտադրությունն տեղում՝ թարմ օգտագործման համար: Տեղաբաշխված սորտերն են՝ Անահիտ, Շահումյանի, Դեղին և Վարդագույն երևանիներ, Իծապտուկ և Սպիտակ Արաքսենի, Պոդոբոկ Ռոսիի:

5. Չանգեգուրի գոտում խաղողագիտագործությունը մասնագիտացված է.

ա. Սեղանի անապակ, կիսաքաղցր, աղանդերային և լիքյորային գինիների արտադրություն: Տեղաբաշխված սորտերն են՝ Արևիկ, Խնդողնի, Կարմիր կոթենի, Յաղթանակ, Սպիտակ Ալդարա:

բ. Սեղանի խաղողի արտադրությունն տեղում՝ թարմ սպառման համար: Տեղաբաշխված սորտերն են՝ Շահումյանի, Մուսկատ Սուսանա:

20-րդ դարասկզբին Յայաստանում խաղողագործության ճյուղը, չնայած այն հանգամանքին, որ գործում էր փոքր չափերով, ուներ զարգացման որոշակի մակարդակ և արդյունաբերական նշանակություն: 1913 թվականին խաղողի այգետարածք-ները կազմում էին 9200 հեկտար, որից բերքատու՝ 7800 հա: Մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմում էր 75g/հա, համախառն բերքը՝ 58.5 հազ. տոննա: Առաջին Յամաշխարհային պատերազմի և քաղաքացիական պատերազմի տարիներին Յայաստանում խաղողագործությունն անկում ապրեց: Կրճատվեց այգի-ների տարածությունը և 1919թ. այն կազմեց 5.1 հազ. հեկտար: Խորհրդային իշխանության տարիներին կուլտիվ և խորհտնտեսությունների ձևավորումը, ոռոգման նոր ցանցերի կառուցումը հնարավորություն ստեղծեցին

խաղողագործության բուռն զարգացման համար: Ձևավորվեցին մասնագիտացված խորհտնտեսության ունեեր: 1940 թվականին խաղողի այգի-ների տարածությունն արդեն հասել էր 16.3 հազ. հեկտարի, համախառն բերքը՝ 65.6 հազ. տոննայի: Խաղողագործությունը հանրապետությունում առավել մեծ զարգացում ապրեց 50-ական թվականներին և դրանից հետո: Ձևավորվեցին խաղողագործական նոր գոտիներ, ստեղծվեցին մասնագիտացված խաղողագործական նոր տնտեսություններ, որոնք միաժամանակ զբաղվում էին խաղողի հումքի վերամշակմամբ: Վերակառուցվեցին հին այգիները, բարձրացվեց արտադրության ինտենսիվացման մակարդակը, ձևավորվեց խաղողագործության ճյուղի կենսունակությունն ապահովող համապատասխան ենթակառուցվածքներ: 1970-1980-ական թվականներին խաղողի այգետարածքները կազմում էին 35-36 հազ. հա, իսկ բերքատու տարածությունը՝ 25-29 հազար հեկտար: Խաղողի տարեկան համախառն բերքը միջին հաշվով կազմում էր 250 հազ. տոննա: Հանրապետությունում խաղողի համախառն բերքի ռեկորդային ցուցանիշ արձանագրվել է 1981 թվականին՝ 361 հազ. տոննա, միջին բերքատվությունը՝ շուրջ 125.1 g/հա⁴:

Արտադրության նման տեմպն առաջին հերթին արդյունք էր գիտատեխնիկական նվաճումների և առաջադիմական տեխնոլոգիաների մշակման ու ներդրման: Հանրապետությունում ստեղծվեց գիտական և փորձարարական հիմնարկների լայն ցանց: Գիտական հիմքի վրա դրվեց խաղողի սելեկցիան, ստեղծվեցին գոտիական մասնագիտացված տնկարանային տնտեսություններ: Տեղի էր ունենում խաղողի արտադրության և վերամշակման ոլորտների ինտեգրացիոն գործընթացներ: Խաղողագործության և գինեգործության ներդաշնակ զարգացման հարցերը դիտարկվում էին մեկ ընդհանուր՝ խաղողագինեգործական համալիրում: Ագրոտեխնիկական միջոցառումները և ընդհանուր առմամբ արտադրության կառավարման գործընթացներն իրականացվում էին պատշաճ մակարդակով: Սակայն, 1985թ. սկսվեց ճյուղի անկումը և խաղողի տարածությունների կրճատման միտումը, քանի որ ԽՍՀՄ

⁴ Խաղողագործության զարգացման հիմնահարցերը Արագածոտնի մարզում: Ատենախոսություն/Դանիելյան Վահե. Երևան 2007. – էջ 10-11:

կառավարության կողմից հարբեցողության և ակոհոլիզմի դեմ պայքարի հետ կապված տնտեսական ու քաղաքական առումով չհիմնավորված որոշում ընդունվեց և դրվեց գործողության մեջ, ինչն էլ մեծ վնաս հասցրեց նաև մեր հանրապետության խաղողագիտագործական համալիրին ամբողջությամբ: Նշված գործընթացն էապես ազդեց Հանրապետության գյուղատնտեսության ընդհանուր ցուցանիշների վրա, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում ճյուղն ուներ մեծ մասնաբաժին⁵:

1985-1990թթ. հանրապետությունում խաղողի այգիների տարածությունը 1981-1985թթ. համեմատությամբ նվազեց 3.5 հազար հեկտարով, այդ թվում բերքատու տարածությունը՝ 1.7 հազ. հեկտարով: Քանդվեցին ոչ միայն բերքատու հին այգիները, այլև բերքատվության մեջ չմտած 1.8 հազ. հաերի տասարդ, դեռ հիմնման ծախսերը չհատուցած այգետարածքներ: Նույն ժամանակատվածում խաղողի համախառն բերքը նվազեց 75.1 հազ. տոննայով կամ 29.8%-ով, միջին բերքատվությունը 90.4 գ/հա-ից նվազեց՝ դառնալով 68.9 գ/հա:

Հայաստանի Հանրապետության խաղողի այգետարածքների, միջին բերքատվության և համախառն բերքի տվյալները 1981-2018թթ. կտրվածքով ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

ՀՀ-ում խաղողագործության վիճակը 1981-2018թթ.⁶

Տարիները	Տարածությունը (հազ. հա)	Համախառն բերքը (հազ. տոննա)	Բերքատվություն ընդ g/հա
1981-1985	35.0	252.1	90.4
1986-1990	31.5	177.0	68.9
1991-1995	25.2	167.1	68.5
1996-2000	17.2	120.5	70.1
2001-2005	14.1	132.5	94.0
2006-2010	16.4	207.5	143.8

⁵ Խաղողագործության զարգացման հիմնահարցերը Արագածոտնի մարզում: Ատենախոսություն/Դանիելյան Վահե. Երևան 2007. – էջ 10-11:

⁶ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն 1982-2019թթ. տարեգրքեր:

2011-2018	15.6	230.1	161.0
-----------	------	-------	-------

Խաղողագործության զարգացման վրա խիստ բացասական ազդեցությունն թո-ղեց մթերող և վերամշակող կազմակերպությանն ենթի տնտեսական ու ֆինանսական ծանր վիճակը: Վերամշակող ձեռնարկությունները մթերված խաղողի դիմաց ոչ միայն ուշացնում էին մթերումների դիմաց կատարվող վճարումները, այլ երբեմն պարտավորությունների մի մասը կամ ամբողջապես փոխհատուցում էին ապրանքներով՝ առաջացնելով խաղող արտադրողների զանգվածային դժգոհություններ:

Ստեղծված իրավիճակում գյուղացիական տնտեսությունները խաղող արտադրելով ոչ միայն շահույթ չէին ստանում, այլ առանձին դեպքերում կատարված ծախսերը չէին հատուցվում: Երկրում արձանագրվեց պարենի, հատկապես հացահատիկի խիստ պակաս, ինչը հազարավոր հեկտար խաղողի այգետարածքների քանդման պատճառ դարձավ, քանի որ գյուղացիական տնտեսությունները, քանդելով խաղողի այգիները, դրանք փոխարինում էին հացահատիկային մշակաբույսերով, ինչը Հանրապետության ազգային հարստության վրա խիստ բացասաբար անդրադարձավ:

Երբեմնի բարձր տնտեսական արդյունավետությունն ապահովող խաղողագործությունը գյուղացիական տնտեսությունների համար սկսեց կորցնել հետաքրքրությունը, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- վերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողի գնումների ծավալի կրճատմամբ,
- խաղողի մթերման ցածր գներով,
- խաղողի այգիների փոքր չափերի պատճառով մեքենաների օգտագործման ցածր արդյունավետությամբ, մեքենայական աշխատանքների բարձր գներով,
- բարձրորակ տնկիների բացակայությամբ,
- խաղողի այգու հիմնադրման համեմատաբար մեծ կապիտալ ատարությունամբ,
- մյուս մշակաբույսերի համեմատությամբ խաղողի վազի բերքատվության մեջ ուշ մտնելով և ծախսերի ուշ հատուցմամբ:

Չնայած այս ամենին, գյուղացիական տնտեսությունների մեծ մասը տնտեսական ծանր վիճակի պատճառով պատշաճ չէին կատարում խաղողի մշակության աշխատանքները, շարունակվում էր խաղողի վազի մշակության գործընթացների ոչ լիարժեք կատարումը: Առանձին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններում խաղողի այգետարածքների 2/3-ում այգեթաղ չի կատարվել: Ինչի արդյունքում էլ տևական և ուժեղ սառնամանիքների պատճառով լրիվ և մասնակի ցրտահարվել են այգեթաղ չկատարված այգիների վազերի 70%-ը⁷:

Խաղողագործության զարգացման բեկումնային տարի կարելի է համարել 2004թ., երբ խաղողի համախառն բերքը կազմեց 148.9 հազ. տոննա և առաջին անգամ գերազանցեց 1990թ. գրանցված ցուցանիշը 5600 տոննայով կամ 3.9%-ով, իսկ 2000 թվականի ցուցանիշից 33.1 հազ. տոննայով ստացվեց ավելի՝ 1300 հեկտարով պակաս այգետարածքների դեպքում: Յատկանշական է այն, որ 1990թ. հետո առաջին անգամ կասեցվեց խաղողի այգիների տարածությունների կրճատման միտումը. 2004 թվականին 2003 թվականի նկատմամբ այն ավելացավ 1900 հեկտարով կամ 14.6%-ով: Բացի այդ խաղողի համախառն բերքի ավելացումն առաջին անգամ ապահովվեց, ինչպես բերքատվության մակարդակի շուրջ 77.3%-ով բարձրացման, այնպես էլ այգետարածքների շուրջ 22.7%-ով ավելացման հաշվին: 1990 թվականից 15 տարի անց՝ 2004թ., գրանցվեց միջին բերքատվության ամենաբարձր մակարդակը՝ 108.9 ց/հա, ինչը 1990 թվականի ցուցանիշից բարձր էր 2.2 անգամ⁸:

ՀՀ խաղողագործական հինգ գոտիներից չորսը՝ Արարատյան հարթավայրը, դրա նախալեռնային գոտին, Դարալյազազի և Չանգեզուրի գոտիների խաղողի այգիները ֆիլոքսերայով վարակված չեն, իսկ մեկ գոտում՝ Յյուսիս-արևելյան տարածքներում, այգիները համատարած վարակված են և վազերի մշակությունը տարվում է ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների վրա: Յիվանդություններից տարածված են միլդյուն, օիդիումը, իսկ վնասատուներից՝ հատկապես

⁷ Գյուղատնտեսության նախարարության տարեկան հաշվետվություն, 2003թ.:
⁸ Խաղողագործության զարգացման հիմնահարցերը Արագածոտնի մարզում: Ատենախոսություն/Դա-նիելյան Վահե. Երևան 2007. – Էջ 10-11:


ողկուճակերը, որոնց դեմ պայքարի միջոցառումներ են կազմակերպվում⁹:

Խաղողի այգիների տարածության, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում 2007-2018թթ. արտացոլված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ Խաղողի այգետարածքների միջին ցուցանիշը 2007-2016թթ. 1991-2000թթ. միջին ցուցանիշի նկատմամբ էապես կրճատվել է, սակայն վերջին 10 տարիներին, մասնավորապես 2007-2016թթ. գրեթե չեն փոփոխվել, իսկ 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է շուրջ 1300 հեկտարով: Գծապատկերի վերլուծությունից պարզ է դառնում նաև, որ 2008-2015թթ. համախառն բերքի ցուցանիշը ունեցել է հիմնականում աճի միտում, ինչով էլ պայմանավորված է նաև բերքատվության միջին մակարդակի աճի միտումը, քանի որ այգետարածքները հիմնականում չեն փոփոխվել:

Ինչ վերաբերում է 2016թ. բերքատվության, հետևաբար նաև համախառն բերքի կտրուկ անկմանը, ապա վերջինս բացատրվում է 2016թ. ցրտահարության և կարկտահարության մասշտաբային բնույթով, իսկ 2017 թվականին, չնայած Խաղողի ընդհանուր այգետարածքների շուրջ 1300 հեկտարով կրճատմանը նախորդ տարվա նկատմամբ, գրանցվել է համախառն բերքի կտրուկ աճ, ինչը արդյունք է բարենպաստ կլիմայական պայմաններով և կատարված ագրոտեխնիկական միջոցառումներով պայմանավորված բերքատվության մակարդակի բարձրացման:

⁹ Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - Խաղողագործությունն սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ», Երևան, 2003թ. - էջ 36:



Գծապատկեր 1. Խաղողի այգիների տարածությունը, համախառն բերքը և բերքատվությունը ՀՀ-ում 2007-2018թթ.¹⁰

Ինչ վերաբերում է 2018 թվականի տվյալների վերլուծությանը, ապա հարկ է նշել, որ չնայած այգետարածքների 2017թ. նկատմամբ շուրջ 300 հեկտարով աճին, համախառն բերքի և բերքատվության մակարդակի միջին ցուցանիշի գծով նկատվել է անկում, ինչը բացատրվում է բնակլիմայական անբարենպաստ պայմանների, ինչպես նաև կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների համեմատաբար ցածր մակարդակի:

Այսպիսով, կատարված վերլուծությունից առավել քան ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության զարգացման համար կենսական նշանակություն ունեցող խաղողագործության ոլորտի զարգացման տեմպերը խիստ անկայուն են, ինչը, անկասկած վկայում է ոլորտում ծառայած բազում հիմնախնդիրների առկայության մասին:

Խաղողագործության հետագա զարգացմանն ուղղված կարևորագույն միջոցառումներից կարելի է համարել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում» ծրագիրը, որի շրջանակներում 2017

¹⁰ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության 2008-2019թթ. տարեգրքեր:

թվականին արտերկրից հանրապետություն է ներմուծվել խաղողի ֆիլոքսերադիմացկուն 6 սորտերի պատվաստակալների 14500 կտրոն: Ներմուծված կտրոններով կիլչեցումից հետո «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնվել է 2 հաֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների մայրուտն 0.1 հատնկարան¹¹:

Վերջին տարիներին խաղողի այգետարածքների և բերքատվության միջին մակարդակի աճի միտումները, մեր գնահատմամբ ինչ-որ չափով արդյունք է նաև ՀՀ Կառավարության կողմից խաղողագործության ոլորտի զարգացմանն ուղղված որոշակի ջանքերի գործադրման:

Երկրում առավելապես մշակվում է տեխնիկական սորտերի խաղող, որն օգտագործվում է գինու և կոնյակի արտադրության համար, սակայն լայն տարածում ունեն նաև սեղանի խաղողի տեղական սորտերը: ՀՀ-ում լայն տարածում գտած խաղողի սորտերից են ոսկեհատը, գառան դմակը, զվարթնոցը, տոկունը, արենին, լալվարը, մսխալին, իսկ ներկրվածներից՝ կախեթին, ռկածիթելին և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին ժամանակներս խաղողի սորտերից բարձր պահնջարկ է ձևավորվել կոնյակի արտադրության համար մթերվող կանգուն խաղողի սորտերի նկատմամբ՝ ռկածիթելին, մսխալին, որոնց ծավալները, ցավոք, քիչ են, իսկ գինու արտադրության մեջ կիրառվող կարմրահյուն թ սորտերն իրենց ծավալներով, նույնպես փոքր են: Հանրապետության խաղողագործական հյուսիսարևելյան հատվածում տարածված է խաղողի բանանց սորտը:

Հայաստանի Հանրապետության խաղողագործական տարածքներում հիմնականում կիրառվում է խաղողի այգիների մշակության երկու համակարգ՝ թմբային և շարատունկ շալերային:

Թմբային այգիները հիմնականում նախախորհրդային շրջանի ժառանգությունն են: Դրանց հիմնական հատկանիշը վազերի բազմաճյուղ-բազմաթև ձևավորումն է, որը տարբեր տեղերում արտահայտվում է անկանոն պարույրի, գետնատարած հովհարի, գետնատարած կորդոնի տեսքով և այլն: Թմբային այգիների

¹¹ Գյուղատնտեսության նախարարության տարեկան հաշվետվություն, 2017թ., էջ 36: minagro.am/public/uploads/2018/01/05Hashvetvutyun2017.pdf

առավել ությունը վազերի երկարակեցությունն է (100-150 տարի և ավելի) և բարձր բերքատվությունը (100-250 g/հա): Բայց քանի որ այդ այգիները հնարավոր չէր մշակել մեքենայացված եղանակով, ուստի դրանք աստիճանաբար փոխարինվեցին շալ էրային այգիներով: Այժմ թմբային այգիները զբաղեցնում են սահմանափակ տարածք: Թմբային այգիներում վազերը հենակավորում (խչմարում) են: Յենակները դնում են վազերի թևերի և ենթաթևերի տակ այնպես, որպեսզի բերքատու մասերը գտնվեն հողի մակերևույթից որոշակի բարձրության վրա և հավասարաչափ դասավորվեն տարածության մեջ: Մեկ վազի համար, ելնելով դրա թևերի և ենթաթևերի քանակից, պահանջվում է 5-8 հենակ¹²:

Խաղողի այգու նորմալ աճը, զարգացումն ու բարձր բերքատվությունն ապահովելու հիմնական պայմաններն ագրոտեխնիկական և ֆիտոտեխնիկական միջոցառումների որակով ու ժամանակին կատարումն է: Խաղողի այգում կատարվող հիմնական աշխատանքներն են.

- վազերի էտն ու ձևավորումը,
- վազերի հենակավորումը (լարային այգում շալ էրայի հիմնում),
- կանաչ հատումները (հատկապես շվատումը),
- այգու հողի մշակությունը,
- այգու պարարտացումը և սնուցումը,
- այգու ոռոգումը,
- վազի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարը,
- խաղողի բերքահավաքը:

Խաղողի այգի հիմնելիս չափազանց կարևոր է սորտերի ընտրությունը, մասնավորապես հարավային, հարավարևմտյան և արևմտյան թեքություններ ունեցող տարածքներում նպատակահարմար է տնկել սեղանի խաղողի, ինչպես նաև արժեքավոր աղանդերային գինիների և ոչ ալկոհոլային արտադրանքի համար

¹² Բարսեղյան Յու. 2. - Խաղողագործություն./ Լարորատոր-գործնական պարամունքների ձեռնարկ. Եր.: ՅՊԱՅ, 2010. – էջ 78:

պիտանի սորտեր: Մնացած տարածքները կարող են օգտագործվել որպես սեղանի գինիների արտադրության հումքի բազա:

Խաղողի այգի հիմնելու համար հողամաս ընտրելիս կարևոր է հաշվի առնել նաև տարածքի ռելիեֆը, դիրքը, մակրո և միկրոկլիմայական, հողային պայմանները, ստորգետնյա ջրերի խորությունը, բաղադրությունը, մոլախտերով, հիվանդություններով և վնասատուների հարուցիչներով վարակվածությունը, ոռոգման ջրով ապահովվածությունը և բերքի իրացման հնարավորությունները: Մեծ հողամասերը պահանջվում է բաժանել բաժանմունքների, բաժանմունքները՝ տնկամասերի, վերջիններս՝ վանդակների, հիմնել անտառաչերտ:

Այնուհետև, պետք է հերթականությամբ իրականացնել հետևյալ աշխատանքները,

1. Հողամասը մաքրել քարերից, բուսական մնացորդներից, թփուտներից և հարթեցնել:
2. Մեկ հեկտարի հաշվով հողի մակերևույթին շաղ տալ 30-40տ կիսապտած գոմաղբ, 1000-1200 կգ սուլֆերֆոսֆատ և 300 կգ կալիումական աղ:
3. Տնկումից 1-1,5 ամիս առաջ հողամասը հիմնաշրջել 60-70 սմ խորությամբ: Գարնանը տնկումներ կատարելու համար նպատակահարմար է հողը հիմնաշրջել առանը, իսկ հոկտեմբերի 3-րդ տասնօրյակում տնկումներ կատարելու համար՝ օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի առաջին տասնօրյակում:
4. Տնկման նախօրյակին հողամասը կրկնավարել 18-20 սմ խորությամբ՝ հիմնաշրջմանը հակառակ ուղղությամբ, քարերը և այլ մնացորդները հավաքելուց հետո հարթեցնել ու տեղաձևել: Տեղաձևելիս շարքերի ուղղվածությունը պետք է լինի հյուսիսից հարավ, իսկ տնկման սխեման՝ շարքային¹³:

Խաղողագործությունը տեղաբաշխված է ուղղաձիգ գոտիականության տարբեր հողային և կլիմայական պայմաններում: Խաղողի այգիների ավելի քան 80%-ը գտնվում է այգեթաղ պահանջող

¹³ Ֆերմեր «Գործնական ձեռնարկ», Եր.: ՀԱԱՀ, 2018. – Էջ 157

տարածքում՝ Արարատյան հարթավայր, դրա նախալեռնային գոտի, մասամբ՝ Վայոց ձոր¹⁴:

Ուղղաձիգ գոտիականության շնորհիվ մրգերի հասունացումը տեղի է ունենում տարբեր ժամկետներում, որը հնարավորություն է տալիս երկարաձգել թարմ մրգերի շուկայահաման ժամանակահատվածը և նվազեցնել վերամշակող կազմակերպության ներքին հումքի մթերման սեզոնային լարվածությունը: Տարբեր բարձրություններում բնակլիմայական պայմանների առանձնահատկությունների շնորհիվ Հայաստանի Հանրապետության բնությունը պարզևում է մրգերի ու հատապտուղների առանձնահատուկ համային հատկանիշներ ունեցող տեսակներ¹⁵:

Հայաստանի հանրապետությունում արդյունաբերական խաղողագործությունը զարգացած է Արարատյան հարթավայրի և դրա նախալեռնային գոտիներում՝ ծովի մակերևույթից 800-1400մ, հյուսիս-արևելյան գոտում՝ 400-1000մ, Վայոց ձորում՝ 1000 մ-ից մինչև 1400-1600մ, Մեղրիում՝ 500 մ-ից մինչև 1500-1600մ, Գորիսի տարածքում՝ 700-1200մ բարձրության վրա: Վայոց ձորի և Չանգեզուրի տարածաշրջաններում, խաղողի վազի մշակությունը կարելի է իրականացնել ծովի մակերևույթից մինչև 1700մ բարձրության վրա, հատկապես հարավային և հարավ-արևմտյան թեքություններում:

Արարատյան հարթավայրի ոռոգվող հողերի գյուղատնտեսական նշանակությունն անչափ մեծ է, իսկ խաղողագործության համար անփոխարինելի են և առանձնանում են բարձր արդյունավետությամբ: Հանրապետության խաղողի այգիների ընդհանուր տարածություն 69-70%-ը կենտրոնացած են Արարատյան գոտում: Խաղողագործությունը գոտում տարածված է տարբեր բարձրությունների՝ ծովի մակերևույթից 800-ից մինչև 1400մ վրա: Ակտիվ ջերմաստիճանների գումարը, սկսած բողբոջումից, մինչև խաղողի հասունացումը Հայաստանի պայմաններում, կազմում է վաղահաս տեսակների համար 2200-ից մինչև 2600 աստիճան միջահաս տեսակների համար՝ 2800-3100 աստիճան, ուշահասների համար՝ 3300-4000

¹⁴ Հայաստանի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն: Ուսումնական ձեռնարկ/Վ. Գրիգորյան, Ա. Ոսկանյան. – Եր.: Մեկնարկ, 2016.- Էջ 14:

¹⁵ Ավետիսյան Ս. Ս. «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը»: Երևան: «Լիմոն 2» հրատարակչություն, 2010թ., էջ 45:

աստիճան, որը համապատասխանաբար կազմում է մինչև 130, 130-140, 140-160 և ավելի օրեր¹⁶:

Հայաստանի Հանրապետության նույն խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018թ., ըստ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը ըստ ՀՀ մարզերի (2018թ.)¹⁷

	Տարածությունը, հա		Համախառն բերքը, ց		1 հա-ի միջին բերքատվությունը, ց
	Ընդամենը	որից՝ պտղատու հասակի	Ընդամենը	որից՝ պտղատու հասակի տնկարկների	
ք. Երևան	96	96	3100	3100	32.3
Արագածոտն	1451	1451	74451	74451	51.3
Արարատ	4647	4470	703102	701852	157.0
Արմավիր	6924	6246	853748	853685	136.7
Լոռի	67	67	1460	1460	21.8
Կոտայք	156	100	2261	2261	22.6
Սյունիք	180	180	4834	4834	26.9
Վայոց ձոր	1214	1014	54558	54558	53.8
Տավուշ	1364	1325	99167	99167	74.8
ՀՀ	16099	14949	1796681	1795368	120.1


¹⁶ Ն. Բ. Կազումով, Կ. Ն. Կազումյան - Հայաստանի խաղողի ու պտղահատապտղային գիտիչների տեխնոլոգիա. Երևան: Առաջընթաց, 1992. – էջ 7-8:

¹⁷ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին, Երևան 2019թ., էջ 74:

ՀՀ-ում խաղողի արտադրությամբ են զբաղվում ընդհանուր առմամբ 416 համայնք, որոնցից շուրջ 45%-ը (187 համայնք) գտնվում են Արարատի և Արմավիրի մարզերում: Խաղողի տարածությունները ՀՀ-ում վերջին տարիներին կազմել են շուրջ 17 հազ. հեկտար, որից բերքատու հասակինը՝ 16 հազ. հեկտար: Խաղողի տարածությունների շուրջ 70%-ը գտնվում են Արարատյան հարթավայրում (մոտ 12 հազ. հեկտար), որն իր մեջ ներառում է Արարատի և Արմավիրի մարզերը: Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերին բաժին է ընկնում խաղողի տարածությունների շուրջ 24%-ը:

Աղյուսակ 2-ի տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ խաղողի այգիների տարածությամբ առաջատարներն են Արմավիրի և Արարատի մարզերը, համապատասխանաբար՝ 6924 և 4647հա, իսկ ամենաքիչ այգետարածքները Լոռու մարզում են, ինչ վերաբերում է ծիրակի և Գեղարքունիքի մարզերին, ապա նշված մարզերում խաղողի այգետարածքներն ընդհանրապես բացակայում են, ինչը պայմանավորված է խաղողի մշակության համար բնակլիմայական անբարենպաստ պայմաններով:

Խաղողի միջին բերքատվության ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի արտացոլված է գծապատկեր 2-ում:




Գծապատկեր 2. Խաղողի միջին բերքատվությունն ըստ ՀՀ մարզերի 2018 թվականին¹⁸:

Գծապատկերի 2-ի ուսումնասիրությունն ինչ ակնհայտ է դառնում, որ Խաղողի միջին բերքատվության ցուցանիշներն ըստ մարզերի էապես տարբերվում են: 2018թ. տվյալներով ՀՀ մարզերից բերքատվության մակարդակով առաջատարը Արարատի մարզն է՝ 157ց/հա, որով գերազանցում է Վայոց ձորի և Արագածոտնի մարզերի նույն ցուցանիշին շուրջ 3 անգամ, իսկ Տավուշի մարզի նույն ցուցանիշին 2 անգամ:

Համախառն բերքի մասնաբաժինը ՀՀ Խաղողի համախառն արտադրանքի կառուցվածքում ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 3-ում: Դրավերլուծությունն ինչ պարզ է դառնում, որ 2018 թվականին ՀՀ Խաղողի համախառն արտադրանքի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը զբաղեցնում է Արմավիրի մարզը՝ 47.5%, իսկ Արարատի մարզը, որը Արմավիրի մարզից շուրջ 1776 հեկտարով պակաս բերքատու հասակում գտնվող Խաղողի այգետարածք ունի, համախառն բերքի մասնաբաժնի ցուցանիշով Արմավիրի մարզից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 39.1%:

¹⁸ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունն, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին, Երևան 2019թ., էջ 74:




Գծապատկեր 3. Համախառն բերքի մասնաբաժինը ՀՀ խաղողի համախառն արտադրանքի կառուցվածքում ըստ մարզերի 2018 թվականին¹⁹:

Փաստորեն, միայն Արմավիրի և Արարատի մարզերը միասին ապահովում են ՀՀ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 86.6%-ը:

Մարզերի խաղողի այգիների տարածությունների մասնաբաժինը ՀՀ խաղողի այգետարածքների կառուցվածքում 2018թ. ներկայացված է գծապատկեր 4-ում: Դրավերլուծություներից պարզ է դառնում, որ խաղողի այգիների տարածությամբ ՀՀ մարզերից առաջատար է Արմավիրի մարզը՝ 41.8%, որը նշված ցուցանիշով էապես գերազանցում է հանրապետության մյուս մարզերի նույն ցուցանիշներին: Բավական է նշել, որ Արմավիրի մարզը խաղողի այգետարածքների տեսակարար կշռով երկրորդ տեղում գտնվող Արարատի մարզին գերազանցում է շուրջ 1.4 անգամ:

¹⁹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին, Երևան 2019թ., էջ 74:



Գծապատկեր 4. Մարզերի խաղողի այգետարածքների մասնաբաժինը ՀՀ խաղողի այգետարածքների կառուցվածքում 2018 թվականին²⁰:

Փաստորեն, Արմավիրի և Արարատի մարզերի խաղողի այգիների տարածույթի մասնաբաժինը հանրապետության խաղողի այգիների ընդհանուր տարածույթի կառուցվածքում կազմում է շուրջ 71.7%-ը, նշված ցուցանիշով 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղերը զբաղեցնում են Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերը, համապատասխանաբար՝ 9.7; 7.9 և 6.8%: Մյուս մարզերը, որտեղ առկա են խաղողի այգետարածքներ զբաղեցնում են հանրապետության խաղողի այգետարածքների ընդամենը 2.9%-ը, դրանք են՝ Կոտայքի, Մյուսիքի, Լոռու մարզերը և Երևան քաղաքի խաղողագործական շրջանը, իսկ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում խաղողի այգետարածքներն ընդհանրապես բացակայում են, ինչը բացատրվում է նշված մարզերում խաղողի մշակույթի համար կլիմայական պայմանների անսպաստավորությամբ:

2009 թվականին ՀՀ գյուղական բնակավայրերում տեղի ունեցած ընտրանքային հետզոտության արդյունքում պարզ է դարձել, թե ըստ

²⁰ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունն, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին, Երևան 2019թ., էջ 74:

մարզերի որքան է տվյալ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակութային զբաղվող գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինը մարզի ընդհամենը տնտեսությունների կառուցվածքում, ինչպես նաև արտադրված արտադրանքի բաշխումն ըստ ուղղությունների, որոնց, մասնավորապես խաղողագործության վերաբերյալ տվյալները, ըստ ՀՀ հինգ հիմնական խաղողագործական մարզերի, բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Խաղողի արտադրության զբաղվող գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինը մարզի ընդամենը տնտեսությունների կառուցվածքում 2009թ.²¹

Մարզը	Խաղողի այգիների տարածությունը, հա	Խաղողի մշակութային զբաղվող տնտեսությունների մասնաբաժինը մարզի ընդամենը տնտեսությունների կառուցվածքում, %	Արտադրանքի սպառումը սեփական կարիքների համար, %	Վաճառված կամ փոխանակված արտադրանքը, %
Արագածոտն	575	9.6	54.0	46.0
Արարատ	1006	27.4	19.5	80.5
Արմավիր	1003	12.6	13.3	86.7
Տավուշ	750	29.0	30.4	69.6
Վայոց ձոր	442	42.2	30.0	70.0

Աղյուսակ 3-ի տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ մարզերում ընդամենը տնտեսությունների կառուցվածքում խաղողի մշակութային զբաղվող տնտես-

²¹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Գյուղական համայնքների հետազոտության հիմնական արդյունքների մասին հաշվետվություն, Երևան 2009թ. – էջ 28-32:

սուբյուկտների մասնաբաժնի ցուցանիշով առաջատարը Վայոց ձորի մարզն է, ինչը հաստատում է այն պնդումը, որ մարզն իրավամբ խաղողագործական է և ունի խաղողագործության զարգացման և ավագույն փորձ, ավանդույթներ և չօգտագործված հսկայական ներուժ:

Հայաստանի Հանրապետությունում մշակվող խաղողի սորտերն, ըստ օգտագործման նպատակի, հետևյալն են.


1. Տեխնիկական սորտեր` Ռքածիթելի, Կանգուն, Արենի, Ոսկեհատ, Մեղրաբույր, Բանանց, Հաղթանակ, Գառան դմակ, Կարմրահյուլ, Մուդովական, Ներկենի, Տիգրանի, Կարմիր Կախեթ, Սափերավի, Արևիկ, Ալդարա, Անթեյ, Կարաբուրնու, Իզաբելլա, Պինոսև, Ալիգոտե, Շարդոնե, Սիրահ, Մեռնոտ, Անչելլոտտա, Կաբերնե Ֆրան, Կաբեր-Նե սովինյոն, Շենին, Կոլոմբարդ, Կոտ Ն. Մալբեկ, Ֆոլ Բլանշ, Մալբեկ, Մառսելան, Մելլոտ, Մոնտեպուլչիանո, Մուսկաթ օտտոնել, Պետիտ վեռդոն, Պինոգրի, Ռեդ գլոբ, Սովինյոն բլանշ, Թաննատ, Ուգնի բլանք, Վինիտե:

2. Սեղանի սորտեր` Սև քիշմիշ Սպիտակ, Այվազյանի խոշորապտուղ, Իծապտուկ, Մուսկատ Երևանի, Երևանի վարդագույն, Հայրենիք, Շահումյանի, Կարդինալ, Արարատի, Թավրիզենի, Արմենիա, Բուլղար, Լալվար, Հայաստան, Թայֆի վարդագույն, Պադարոկ Ռոսիի, Մխիթարի, Մեղրու վաղահաս,:

3. Ունիվերսալ սորտեր` Մուսկատ Սուսաննա, Անահիտ, Վանի, Մսխալի, Կախեթ:

Խորհրդային տարիներին Հայաստանում մշակվում էին հիմնականում տեխնիկական սորտի խաղողներ, որոնք միջին հաշվով կազմում էին ՀՀ-ում արտադրված խաղողի մինչև 95%-ը: Ներկայումս խաղողի համախառն բերքի, ինչպես նաև խաղողի այգիների տարածությունների կառուցվածքն ըստ խաղողի օգտագործման ուղղությունների ունի հետևյալ պատկերը` տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքները կազմում են ընդամենը խաղողի 73.8%-ը, սեղանի սորտերը` 18.4%-ը և ունիվերսալ սորտերը` 7.8%-ը:

ՀՀ-ում և ՀՀ հիմնական խաղողագործական մարզերում խաղողի այգիների տարածությունների տեսակարար կշիռներն ըստ տեսակների ներկայացված է գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. ՀՀ-ում և հիմնական խաղողագործական մարզերում խաղողի այգիների տարածությունների տեսակարար կշիռներն ըստ տեսակների, %²²:

Գծապատկեր 5-ի ուսումնասիրությունն ինչ պարզ է դառնում, որ տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքների մասնաբաժնով հանրապետությունում առաջատարը Տավուշի մարզն է, սեղանի՝ Արարատի, իսկ ունևիվերսալ խաղողի սորտերի մասնաբաժնով՝ Արագածոտնի մարզը: Իսկ նշված սորտերի՝ տեխնիկական, սեղանի և ունևիվերսալ, խաղողի այգետարածքների ամենացածր մասնաբաժիններն ունեն համապատասխանաբար՝ Արարատի, Տավուշի և Արմավիրի մարզերը:

²² Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի Գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները:

1.2 Խաղողագիտագործական արտադրության սոցիալ -տնտեսական նշանակությունը ՀՀ-ում

Համաձայն տարբեր պատմագրական աղբյուրների՝ Հայաստանի Հանրապետությունը համարվում է այն վայրերից, որտեղ դեռևս մ.թ.ա. 7-րդ դարում լայն տարածում են ունեցել խաղողագործությունն ու գինեգործությունը: Հնագիտական պեղումների արդյունքում հաստատվել է, որ Ուրարտուի խաղողագործությունն ու պտղաբուծությունը բարձր մակարդակի վրա են գտնվել, իսկ Ուրարտական աղբյուրներում բավականին հաճախ հիշատակվում է խաղողի այգիների մասին:

«Կարմիր բլուր» ամրոցի պեղումների ժամանակ գտնված հարուստ նյութերը վկայում են, որ մեր թվարկությունից առաջ 7-րդ դարում հայկական լեռնաշխարհի տարածքում, մասնավորապես Արարատյան դաշտավայրում, խաղողագործությունն ու գինեգործությունն այնքան մեծ նշանակություն են ունեցել, որ Ուրարտուի կառավարիչները զբաղվել են ոռոգման համակարգերի հողահարթակների կառուցմամբ և գինեգործական սարքերի թողարկմամբ²³:

Խաղողագործությունը և գինեգործությունը ՀՀ տնտեսության առաջատար, մեծ համբավ ու բարձր եկամտաբերությունն ապահովող ճյուղերից են և մեծ դեր են խաղում հանրապետության խաղող արտադրող տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության արդյունավետության բարձր մակարդակի ապահովման գործում: Առհասարակ, խաղողագիտագործական արտադրության դերը բազմանշանակ է և անհրաժեշտ է այն դիտարկել ինչպես արտադրական ու տնտեսական, այնպես էլ սոցիալ -մշակութային տեսանկյուններից: Դրանցից, ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հետևյալները.

- Խաղողի վազի տնկման և աճեցման վրա կատարվող ծախսումները սկսվում են հետգնվել չորրորդ տարվանից, իսկ հետո, ճիշտագրորոտեխնիկա կիրառելիս ամեն տարի ստացվում է բարձր

²³ Ն. Բ. Կազումով, Կ. Ն. Կազումյան - Հայաստանի խաղողի ու պտղահատապտղային գինիների տեխնոլոգիա: Եր., Առաջընթաց, 1992. – էջ 4:

Եկամուտ: Վերջինիս նպաստում է նաև այն հանգամանքը, որ խաղողը պտղաբերության պարբերականության գրեթե չունի և ըստ տարիների՝ այլ հավասար պայմաններում ապահովվում է հարաբերականորեն համաչափ քանակությամբ մակարդակ:

- Խաղողի արտադրությանը մշտապես եղել և ներկայումս էլ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կարևոր ոլորտներից մեկը: Խաղողի տարածությունները վերջին 10 տարիներին միջին հաշվով կազմել են ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 0.8%-ը, մշակելի հողատարածքների (վարելահողեր և բազմամյա տնկարկներ) 3.6%-ը իսկ խաղողի համախառն արտադրանքն ընդամենը գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 4.5 %-ը: Երկրում խաղողագործության զարգացումն էականորեն նպաստում է նաև հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը:
- Խաղողի վազն արժեքավոր է նաև նրանով, որ մշակվում է, գրեթե բոլոր տեսակի հողերում, բացի աղակալած և ճահճացած հողերից: Այն կարող է մշակվել լանջերում, թեք տարածքների վրա, ինչը հնարավորություն է տալիս հողը պաշտպանել էրոզիայից, արդյունավետ օգտագործել ավազային և կավավազային հողերը: Խաղողի վազն աճում և առատ բերք է տալիս նույնիսկ քիչ սննդանյութեր պարունակող հողերում, որոնք գրեթե պիտանի չեն այլ մշակաբույսերի համար²⁴:
- Խաղողը սննդարար, համեղ պտուղ է՝ օժտված բարձր կալորիականությամբ, որն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ վիտամիններ, ածխաջրեր, օրգանական թթուներ, միկրոտարրեր, ինչպես նաև մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ այլ պիտանի նյութեր: Հաշվարկված է, որ 1կգ խաղողը սննդային էներգետիկ արժեքով միջին հաշվով պարունակում է 700-1200 կկալ: 17% շաքարայնությամբ 1կգ խաղողն իր կալորիականությամբ կարող է բավարարել մարդու օրական սննդի պահանջի 15%-ը կամ հավասարվել 1190գ կարտո-

²⁴ Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - Խաղողագործությունն սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ.», Երևան, 2003թ., էջ 12:

Ֆիլի, 1165գ կաթի, 887գ մսի, 227գ հացի և այլն: 1 լիտր խաղողի հյութը միջին հաշվով պարունակում է 16-30% շաքար՝ գլխավորապես գլյուկոզա և ֆրուկտոզա, 0.3-1.5% ազոտային նյութեր, 0.5-1.4% տարբեր թթուներ, 2-3գ. հանքային նյութեր՝ կալցիումի, կալիումի, ֆոսֆորի և այլնի տեսքով:

- Թարմ խաղողի օգտագործումը հանգստացնում է մարդու նյարդային համակարգը, վերականգնում է ծանր վիրահատություն տարած մարդու ուժը և երիկամների բնական գործունեությունը, բարերար ազդեցություն է ունենում տուբերկուլյոզով հիվանդների բուժման, աղեստամոքսային և սրտային հիվանդությունների դեմ պայքարելիս: Թույլ երեխաներին, սնելով թարմ խաղողով, մեկ ամսում կարելի է նրանց քաշն ավելացնել 1.5-4 կիլոգրամով, ուստի խաղողի հյութը երբեմն համեմատվում է մոր կաթի հետ: Սևապտուղ սորտերի և կարմիր գինիների դաբաղանյութերը մանրէասպանող հակառազայ թիչ ազդեցություն ունեն: P և K1 վիտամինները կանոնավորում են արյունատար անոթների գործունեությունը, չամիչի նույնիսկ ոչ մեծ քանակությունը վերացնում է մարդու հոգնածությունը, ակտիվացնում է ուղեղի գործունեությունը: Թարմ խաղողի հաճախակի օգտագործումը նպաստում է նաև նյութափոխանակության լավացմանը, իսկ խաղողի հյութը իր սննդային արժեքավորությամբ համեմատվում է նաև մայրական կաթի հետ: Բացի վերը նշվածներից, խաղողի վազն օգտագործվում է նաև որպես դեկորատիվ բույս: Բնակավայրերի, տաղավարների շուրջը խաղողի վազերի առկայությունը նախ և առաջ ունի հիգիենիկ, ինչպես նաև գեղագիտական նշանակություն²⁵:
- Գինեգործական արդյունաբերության հիմնական, իսկ կոնյակագործության միակ հումքը խաղողն է, որի վերամշակումից ստացվում են սեղանի, աղանդերային (քաղցր, լիկյորային), փրփուր և գազավորված գինիներ:

²⁵ Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - խաղողագործությունը սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ.», Երևան, 2003թ. - էջ 4-5:

Սափ տակապտուղ խաղողի սորտերից պատրաստում են կոնյակի գինեկոթ, որի թորումից ստանում են կոնյակի սափրտ²⁶:

- Սեղանի թեթև գինիներից ստացվում է բարձրորակ քացախ, խաղողի վերամշակման մնացորդներից՝ գինեթթվակիր, գինեքար, խաղողի սափրտ, սև ներկ, պոտաշ, իսկ սերմերից՝ թանկարժեք յուղ, տանին, սուրճի սուրագաթ, ֆերմենտներ ու վիտամիններ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1 տոննա խաղողի վերամշակման թափոններից հնարավոր է ստանալ 2.1 կգ գինեքար, 3.1 լ իտր էթիլ սափրտ, 2.8 կգ խաղողի յուղ, 1.6 կգ տանին, 8.9 կգ հեղուկ ներկանյութ և այլն^{27 28}:
- Խաղողագործությունը կարևոր դեր է խաղում հանրապետության աշխատանքային ռեսուրսների զբաղվածության ապահովման գործում: Եթե դրան ավելացնենք խաղողի երկարատև պահպանման, վերամշակման և խաղողագինեգործական արտադրանքի իրացման ոլորտներում զբաղվածներին, ապա զգալի է դառնում խաղողագինեգործական ենթահամալիրի դերը աշխատանքային ռեսուրսների զբաղվածության ապահովման գործում:
- Խաղողագործության զարգացումը, բացի վերոնշյալ սոցիալ-տնտեսական նշանակություն տարբեր ուղղություններից, մեծապես նպաստում է նաև խաղողի հումքով ավելի կոհողային և ոչ ավելի կոհողային խմիչքների արտադրության զարգացմանը՝ դրանով իսկ, ապահովելով արտահանման ծավալների ավելացում, ինչպես թարմ խաղողի, այնպես էլ գինու և կոնյակի գծով: Փաստորեն խաղողագինեգործական համալիրը և դրա հետագա զարգացումը մեծ նշանակություն ունի ՀՀ արտաքին առևտրի, մասնավորապես արտահանման կառուցվածքի բարելավման գործում:

²⁶ Նոյն տեղում, էջ 12:

²⁷ Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - Խաղողագործություն և սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ.», Երևան, 2003թ. - էջ 12:

²⁸ Գրիգորյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Կ., Մանասարյան Ա. Ա. - Խաղողի արտադրության, վերամշակման էկոնոմիկայի և մարքեթինգի հիմնահարցերը ագրարային բարեփոխումների անցումային փուլում, ՀԳԱ, Երևան, 2000թ. - էջ 44:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին նկատվում է քիչ միջային սորտերի խաղողի պահանջարկի կտրուկ աճ, ինչը հիմնականում պայմանավորված է արտահանման ծավալների ավելացմամբ: Բացի այդ, բարձրացել են նաև քիչ միջային սորտերի խաղողի գները, մասնավորապես վերջին երկու տարիներին արտադրողների կողմից քիչ միջային սորտերի խաղողը իրացվել է 450-700 դրամով: Քիչ միջային սորտերի խաղողը հիմնականում արտահանվում է ԱՊՀ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն և Ուկրաինա, որը պայմանավորված է նախկին խորհրդային երկրներում հայկական բերքի բարձր համբավով և այդ սորտերի խաղողի համային հատկանիշներով: Սեղանի խաղողի սպառման ծավալներով Ռուսաստանն աշխարհում զբաղեցնում է յոթերորդ, ներմուծման ծավալներով՝ երրորդ տեղը, իսկ Ուկրաինան համապատասխանաբար ութերորդ և տասներորդ տեղերը:

Ռուսաստանի Դաշնությունը համարվում է աշխարհի խոշորագույն խաղող ներկրողներից մեկը՝ տարեկան շուրջ 400 հազար տոննա: Ռուսական խաղողի շուկայի խոշորագույն «մատակարարը» Թուրքիան է, որտեղից ներկրվում է խաղողի Քիչ միջային սորտերի խաղողի ավելի քան 42 տոկոսը, այնուհետև հաջորդում են Ուզբեկստանը, Իտալիան և Լատինական Ամերիկայի երկրները: Ներկրված խաղողի գները ռուսական շուկայում կախված սեզոնից, սորտից և որակից տատանվում են 2.20-3.95 ԱՄՆ դոլար/կգ: Հայկական քիչ միջային սորտերի խաղողը այդ շուկաներում գտնվում է բարձր գին ունեցող խաղողի սեգմենտում: Քիչ միջային սորտերի խաղողը միաժամանակ կարող է հումք հանդիսանալ բարձրորակ չամիչի և գինու արտադրության համար, ինչը հնարավորություն է կտանք բավարար ապրանքային տեսք ունեցող խաղողը վերամշակել և իրացնել չամիչի և գինու տեսքով²⁹:

Հայաստանի Հանրապետությունում գինեգործության ճյուղը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը և իր ուրույն տեղն

²⁹ «Հայկական բերքի առաջմղման կենտրոն» ՓԲԸ, Քիչ միջային սորտերի խաղողի արտադրության ընդլայնման ծրագիր, Երևան 2013. – Էջ 14-15:

ուևսի գյուղատնտեսության ռազմավարական ուղղություններին ցմեկի՝ խաղողագործության ճյուղի, զարգացման համար:

Հայաստանի Հանրապետությունում գործում է խաղողի վերամշակման շուրջ 54 կազմակերպություն, որոնցից 12-ը՝ համեմատաբար խոշոր («Երևանի կոնյակի գործարան», «Արտաշատ վինկոն» ՓԲԸ-ներ, «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ, «Պռոշյանի կոնյակի գործարան», «Արարատի գինու գործարան», «Ավշարի գինու գործարան», «Շահումյան վին», «Գինու կոնյակի տուն», «Շահնազարյան», «Ա.Կ.Զ.» «Սամկոն», «Արմենիա վայն գործարան», «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ներ): Ընդհանուր արտադրական հզորությունը՝ տարեկան շուրջ 265 հազար տոննա խաղողի վերամշակում: Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 2912³⁰:

Հայաստանի Հանրապետությունը խաղողագործության և գինեգործության ոլորտում ունի հարուստ պատմություն, մինչդեռ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, դեռևս առկա է լրջագույն խնդիր հայկական գինու ներկայացման, արտադրության ծավալների մեծացման և արտահանման խթանման ուղղությամբ: Հայկական գինին որքան էլ մեծ սպառում ունի եվրոպական շուկայում, այդուհանդերձ, մեր համոզմամբ, դրա նկատմամբ պահանջարկը շատ ավելի մեծ է, քան իրական ծավալներն են: Գինեգործության զարգացմանն ուղղված ամենամյա փառատոնները նպատակ ունեն խթանել արտաքին շուկաներում հայկական գինու սպառումը և ներկայացնել Հայաստանը որպես գինեգործության մշակույթի կարևորագույն վայր:

Երևանից ոչ հեռու գտնվող Կարմիր բլրի վրա իրականացված պեղումների ընթացքում հնագետները հայտնաբերել են խաղողի սերմերի 12 տարբեր տեսակ, որոնք մինչև օրս օգտագործվում են գինու արտադրությունում, ինչպես նաև գինու, ավելի քան 400 հին տակառ:

Պատմական փաստերը վկայում են, որ խաղողագործությունը և գինեգործությունը զարգացած էին Հարավային Կովկասյան տարածաշրջանում դեռևս մ.թ.ա. 5-րդ հազարամյակում, ինչը, ըստ

³⁰ <http://minagro.am>:

Է ու թյան Չայաստանի Չանրապետությունը դարձնում է գինեգործության բնօրրաններից մեկը, քանի որ այստեղ առկա են խաղողի յուրօրինակ, տեղական սորտեր, որոնք չեն հանդիպում այլ տարածաշրջաններում:

Այսպիսով, չնայած բարենպաստ բնական պայմաններին և պատմական ժառանգությանը, արդի պայմաններում հայկական գինեգործությունը կանգնած է բազմաթիվ հիմնախնդիրների ու մարտահրավերների առջև: Դրանցից են թույլ զարգացած խաղողագործությունը, խաղողի բերքի ոչ բարձր որակը, հին, ավանդական տեխնոլոգիաների կիրառումը և համապատասխան բարձր որակավորմամբ կադրերի անբավարարությունը: Չնայած այս ամենին, պաշտոնական տվյալների համաձայն, 2000 թվականից սկսած գրանցվել է Չայաստանից գինու արտահանման ծավալների կայուն աճ, այդուհանդերձ արտահանվող գինու որակը հիմնականում գիջում է միջազգային ստանդարտներին:

Գինու և կոնյակի արդյունաբերությունը Չայաստանի տնտեսության ռազմավարական կարևորագույն ճյուղերից է: Թեև, հայկական գինեգործությունը սկիզբ է առել անտիկ ժամանակներից, սակայն երկրում արդյունաբերական գինեգործությունը սկսվել է 1870-ականներին: Երկրում կոնյակի արդյունաբերությունը ստեղծվել է 1887թ., որից կարճ ժամանակ անց, իր անգուգական համուհոտի և որակական այլ հատկանիշների շնորհիվ, հայկական կոնյակը հասավ Եվրոպա՝ դիվանագիտական ճաշերի և բարձրաշխարհիկ ընդունելությունների համար³¹:

Երկրի հողակլիմայական պայմանների մեծ բազմազանությունը հնարավորություն է ընձեռում մշակելու խաղողի հարուստ տեսականի: Թուևի և աղանդերային գինիների խաղողագործական հիմնական շրջանները գտնվում են Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան հատվածում, թուևի գինիներ արտադրող միայն մեկ շրջան (Աշտարակի) տեղաբաշխված է հանրապետության նախալեռնային գոտում: Արարատյան հարթավայրը գինեգործության արդյունաբերության բազան է, որտեղ թուևի և աղանդերային

³¹ Ավետիսյան Ս. Ս. «Չայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը»: Երևան: «Լիմոն 2» հրատարակչություն, 2010թ., էջ 80:

գինիների հետ մեկտեղ ստանում են սեղանի և կոնյակի գինեկոլ: Արարայն ան հարթավայրի նախալեռնային ուղի շրջաններ, հյուսիս-արևելյան և Դարալագյազի գոտիները հանդիսանում են սեղանի և շամպայնի գինեկոլների պատրաստման հիմնական բազան: Թուրք, ադանդերային և սեղանի գինիների պատրաստմամբ հարթավայրը ներառում է գինե-խաղողագործական հետևյալ շրջանները՝ Արտաշատի, Էջմիածնի, Արմավիրի, Արարատի, նախալեռնային գոտուց՝ Աշտարակի, Թալինի, Չանգեզուրի գոտուց՝ Մեղրիի շրջանը³²:

Հայաստանի Հանրապետությունում գինու արտադրությունը համարվում է ծանուցման ենթակա գործունեություն համաձայն՝ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի: Գինու արտադրության համար լիցենզիա հարկավոր է, լիազորմամբ համապատասխան ծանուցման հիման վրա պարզապես իրականացնում է հաշվառում:

Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման նպատակներն են՝

- շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը,
- սպառողների իրավունքների պաշտպանությունը,
- ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը,
- գործունեության ուղի տեսակների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը³³:

Գինու սպառումն աշխարհում աճում է սրընթաց կերպով (տարեկան 10-15 %-ով), ինչին մեր գնահատմամբ մեծապես նպաստել է վերջին ժամանակներս կարմիր գինու օգտակարության մասին բազմաթիվ հրապարակումները: Դալավ առիթ է Հայաստանի համար՝ հաստատվելու միջազգային շուկաներում: Հայաստանը գինու արտադրության հին ավանդույթներ ունի, սակայն հայկական գինին միջազգային շուկաներում, ցավոք դեռևս ճանաչված է:

Համաշխարհային գինեգործության արդի իրավիճակով պայմանավորված, փոքր երկրներն ունեն իրական հնարավորություններ՝ իրենց դիրքը զբաղեցնելու և հաստատ-

³² Ն. Բ. Կազումով, Կ. Ն. Կազումյան- Հայաստանի խաղողի ու պտղահատապտղային գինիների տեխնոլոգիա. Երևան: Առաջընթաց, 1992. – Էջ 6, 8:

³³ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2015 թվականի նոյեմբերի 13-ին, էջ 2:

վելու գինու համաշխարհային շուկայում: Չարկ է նշել, որ շնորհիվ բարենպաստ բնակլիմայկան պայմանների և աշխարհագրական դիրքի Չայաստանն ունի հնարավորությունն համապատասխան պետական նպատակառնդված քաղաքականությամբ իրականացման պարագայում դառնալ հենց այդպիսի երկիր:

Ինչ վերաբերում է գինեգործական արտադրանքի արտահանմանը, ապա ինչպես տնտեսության արտադրական շատ այլ ոլորտներում, այնպես էլ այս ոլորտում առկա է աշխարհագրական կենտրոնացվածության բարձր մակարդակ: Մասնավորապես, արտահանումն առավելապես ուղղվում է դեպի Ռուսաստանի Դաշնության շուկա: Նշվածից ակնհայտ է դառնում, որ ՉՉ գինու արտահանման ծավալների փոփոխության վրա էապես ազդում է Ռուսաստանի Դաշնության տնտեսական իրավիճակը, ինչպես նաև այլ երկրների հետ վարվող միջազգային քաղաքականությունը: Այսպես, օրինակ, 2008թ. Ռուսաստանի Դաշնությունում արգելվեց Վրաստանից և որոշ չափով Մոլդովայից գինու ներմուծումը, ինչի արդյունքում 2007թ. շուրջ երեք անգամ աճեց Չայաստանի Չանրապետությանից գինու արտահանումը դեպի Ռուսաստանի Դաշնություն: Արտաքին տնտեսական և քաղաքական իրավիճակների արագորեն փոփոխվող միտումները պետք է յուրահատուկ ազդակ հանդիսանան Չայաստանի Չանրապետության ոգելից խմիչքներ արտահանողների շուկայական դիվերսիֆիկացիայի իրականացման և նոր շուկաներ բացահայտելու ու մուտք գործելու առումով, ինչն էլ կհանգեցնի Ռուսաստանի Դաշնության շուկայից կախվածության խիստ բարձր աստիճանի նվազեցմանը: Չարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնության շուկան չունի կայուն նույն պարձր մակարդակ, քանի որ պարբերաբար փոխվում են դեպի Ռուսաստանի Դաշնություն ներմուծող ապրանքների նկատմամբ որակական և տեխնիկական պահանջները, ինչը կարող է խոչընդոտել Չայաստանի Չանրապետությանից ոգելից խմիչքների արտահանմանը, չնայած այդ խնդիրը հիմնականում գործնականորեն լուծված կարելի է համարել, այն հաշվով, որ ԵԱՏՄ շրջանակներում ընդհանուր մաքսային տարածքի հանգամանքը, գրեթե կբացառի նմանատիպ ռիսկերը: Սակայն բացի նշվածից, կարևոր ռիսկ կարելի է

համարել աշխարհաքաղաքական և գլոբալ տնտեսական զարգացումներով պայմանավորված ՌԴ ռուբլու արժեզրկման ռիսկը, որի բացասական ազդեցությունն առավել ցայտուն դրսևորվեց վերջին տարիներին, ինչի արդյունքում ՀՀ գինեգործական կազմակերպությունները կրեցին լուրջ վնասներ: Բացի այդ, հայտնի է, որ, առհասարակ մեկ շուկայից կախվածության բարձր աստիճանը լրացուցիչ ռիսկ է առաջացնում արտահանողների համար և ամենևին էլ նախընտրելի մոտեցում չպետք է լինի որևէ տնտեսվարող սուբյեկտի համար:

Տեղական շուկայի սահմափակ լինելու պատճառով հայկական գինեգործների համար էական նշանակություն ունի արտահանումը դեպի այլ շուկաներ: Չնայած ընկերությունների կողմից քայլեր են ձեռնարկվում նոր գործընկերներ գտնելու և արտահանման ուղղությունները դիվերսիֆիկացնելու նպատակով, սակայն, դեռևս հայկական գինու արտահանման հիմնական շուկան շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Հայաստանում արտադրված գինիների շուրջ 72%-ն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: 2016թ. ՌԴ արտահանված գինու գումարային արժեքը կազմել է 4,493 հազ ԱՄՆ դոլար: Հայկական գինու արտահանման այլ ուղղություններն են ԱՄՆ-ն, ԵՄ երկրները և Վրաստանը, սակայն այս երկրներ արտահանվող ծավալներն էապես զիջում են Ռուսաստանին: Վերջին տարիներին արտահանման աշխարհագրությունը բավականին կայուն է եղել և էական կառուցվածքային փոփոխությունների չի ենթարկվել: 2012-2016թթ. ժամանակահատվածում գինու արտահանումը բավականին անկայուն է եղել. 2014թ. արտահանման մեծ ծավալներին հաջորդեց ռուբլու արժեզրկմամբ պայմանավորված մոտ 50%-ով կրճատումը, սակայն 2016թ. արտահանման ծավալները վերականգնվեցին³⁴:

2011 թվականին գինեգործությունն ընդգրկվել է ՀՀ կառավարության արդյունաբերական քաղաքականության մեջ, որպես գերակա ոլորտ: Մշակվել է ճյուղի զարգացման ռազմավարությունն ու գործողությունների պլան: Ավելին, մի քանի մասնավոր`

³⁴ «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կողմից Հայաստանում խաղողագործության և գինեգործության շուկայի ու սուբսեստրուկտուրայի վերաբերյալ հաշվետվություն, Երևան 2017, էջ 79:

հիմնականում Սփյուռքահայ գործարարների ներդրումներով
Հայաստանում հիմնադրվել են մի քանի ժամանակակից
գինեգործական արտադրություններ և արդյունքում՝ շուկա է
դուրս բերվել նոր, բարձրորակ գինիներ, որոնց զգալի մասն
ունդղված է արտահանմանը, ներկայացնելով հայկական գինին
եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և ԱՊՀ երկրներում: Թեև
տվյալ կազմակերպությունների արտահանման ծավալները դեռևս
չնչին են, այդուհանդերձ դրանց գործունեությունը վառ
ապացույցն է այն բանի, որ Հայաստանում հնարավոր է արտադրել
բարձրորակ գինի և մուտք գործել աշխարհի տարբեր երկրների
բարձրորակ գինու շուկայական հատվածներ: Նշված հաջողված
տնտեսվարողների նախաձեռնությունների փորձն ու
կառավարության աջակցությունը կարող են կարևոր նախադրյալ և
խթան հանդիսանալ Հայաստանյան այլ գինեգործների շրջանում
արտադրելու նոր հայկական գինիներ, որոնք մրցունակ կլինեն
միջազգային շուկայի տարբեր սեգմենտներում: Այդ համատեքստում
գնալով էլ ավելի է կարեվորվում խաղողագործության զարգացումն
ու արտադրվող խաղողի որակի անընդհատ բարելավումն ու
կիրառվող տեխնոլոգիաների նորացումն, ինչը նախադրյալներ
կստեղծի բարձրորակ գինու արտադրությունը զարգացնելու համար:

Հանդիսանալով արտահանման ծավալների տեսանկյունից
երկրորդը՝ 14% արտահանման կառուցվածքում, սննդամթերքի
արտադրությունը կարևոր դերակատարություն ունի նաև ՀՀ
գյուղատնտեսության ոլորտի խնդիրների լուծման հարցում:
Այսպես, օրինակ, կոնյակագործությունը, մթերելով Հայաստանի
խաղողի բերքի շուրջ 60%-ը, խաղողագործության ոլորտում
ապահովում է ավելի քան 8.000-10.000 աշխատող³⁵:

Գինեգործությունը կարևոր նշանակություն ունի նաև
Հայաստանի Հանրապետությունում ագրոտուրիզմի զարգացման
համար: Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում գտնվող
Արենի համայնքում ամեն տարի անցկացվում է «Արենի» գինու
փառատունը: Արենի համայնքը ոչ միայն հանրապետությունում, այլև

³⁵ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված
արդյունաբերական քաղաքականություն» ռազմավարություն, 2011թ., էջ 16:

միջազգային ասպարեզում լայն ճանաչում ունի՝ որպես գինեգործական կենտրոն, որտեղ ամենամյա կազմակերպվող «Արենի» գինու փառատոնը ներգրավում է մեծ թվով զբոսաշրջիկներ: Փառատոնի կազմակերպումը մեծ ոգևորություն է առաջացնում տեղի բնակչության շրջանում, քանի որ հնարավորություն է ընձեռվում բազմաթիվ ներգնա և օտարերկրյա զբոսաշրջիկներին ներկայացնել իրենց իսկ ձեռքով պատրաստված հուշանվերները, չրերը, գինիները և հաղորդակից դարձնել տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններին ու կենցաղին:

Հայաստանի Հանրապետությունում գինու և կոնյակի արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավության մակարդակը, ինչպես նաև իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2015-2017թթ. ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին 3 տարիների պաշտոնական տվյալներով գինու և կոնյակի տեղական արտադրության և արտահանման ցուցանիշները դրսևորել են աճի միտում: Հետաքրքիրն այն է, որ 2015-2017թթ. արձանագրվել է գինու և կոնյակի ներմուծման ծավալների բնեղեն արտահայտությամբ աճ, իսկ իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը կրճատվել է: Մեր գնահատմամբ, վերջինս արդյունք է գինու և կոնյակի շուկայի բարձր գնային սեգմենտում ներկրված արտադրանքի ուղղությամբ սպառողական նախընտրության փոփոխության:

Աղյուսակ 4.


ՀՀ-ում գինու և կոնյակի արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2015-2017 թթ.³⁶

Արտադրանքը	Տարեթվերը		
	2015թ.	2016թ.	2017թ.
Տեղական արտադրություն /հազ. լ իտր/			
Գինի	6590.0	7523.0	9716.3
Կոնյակ	16037.5	21529.2	30040.6

³⁶ <http://minagro.am/> Ազրովերամշակում:

Արտահանում /հազ. լիտր/			
Գինի	1451.6	1855.2	2791.8
Կոնյակ	15807.8	20518.8	28313.8
Ներմուծում /հազ. լիտր/			
Գինի	312.1	272.2	551.0
Կոնյակ	6.5	5.5	93.0
Ինքնաբավություն մակարդակը /%/			
Գինի	120.9	126.6	130.0
Կոնյակ	6789.8	2119.2	1650.8
Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը /%/			
Գինի	94.3	95.4	92.6
Կոնյակ	97.2	99.5	94.9

ՀՀ գյուղացիական տնտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված խաղողի միջին և մանրածախ գների 2013-2018թթ. դինամիկան ներկայացված է գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 6. Գյուղացիական տնտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված խաղողի միջին և մանրածախ գների դինամիկան 2013-2018թթ.³⁷:

Գծապատկեր 6-ի տվյալների վերլուծությանը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես գյուղացիական տնտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված գյուղմթերքի միջին գների մակարդակը, այնպես էլ՝ մանրածախ գների մակարդակը, վերջին վեց տարիների ընթացքում ունեցել է տատանողական բնույթ: Հարկ է նշել, որ խաղողի մանրածախ գները բոլոր ուղիներով իրացված միջին գներին գերազանցում են մի քանի անգամ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 70%-ը մթերվում է վերամշակող կազմակերպությունների կողմից ցածր գներով, իսկ մնացած 30%-ի մեծ մասը մտնում է ապրանքաշրջանառության ոլորտ, մասնավորապես մանրածախ առևտրի ոլորտ, որտեղ իրացման գներն էապես գերազանցում են վերամշակման համար մթերված խաղողի գներին: Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ տարվա տարբեր ամիսների ընթացքում սառնարանային պայմաններում պահպանվող սեղանի սորտերի խաղողը վաճառվում է

³⁷ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Պարենային ապահովություն և աղքատություն, 2019թ. – էջ 33:

սեզոնային գներից էապես բարձր գներով, ապա դրանով էլ հիմնականում բացառվում է երկրում խաղողի մանրածախ գների և բոլոր ուղիներով իրացման միջին գների միջև հարաբերակցության այդչափ բարձր մակարդակը: Նշված գործոններին գումարվում է նաև այն հանգամանքը, որ շուկայական կառուցակարգերի վրա որոշակիորեն ազդում է խաղողի արտահանման ծավալների աճի միտումը, ինչը բացասական է ազդում ներքին շուկայում խաղողի գների ձևավորման վրա:

Խաղողի գնագոյացման վրա ազդող գործոնների և առանձնահատկությունների, ինչպես նաև սպառման կառուցվածքի առավել համակողմանի վերլուծության և բացահայտման համար կարևոր ենք համարել նաև խաղողի սպառման, ներմուծման, արտահանման, ինքնաբավության մակարդակի ցուցանիշների, ինչպես նաև խաղողի մթերման ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը, որոնց վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ խաղողի վերամշակման ծավալները 2015 թվականից հետո՝ 2016-2017թթ. շուրջ 2 անգամ կրճատվել են, ինչը համահունչ է խաղողի արտադրության ծավալներին, սննդի սպառման համար խաղողի ծավալները երեք տարիների տվյալներով ունեցել է նվազման միտում, ինչն ազդել է նաև մեկ շնչի հաշվով սպառման ծավալների ցուցանիշի վրա, ինքնաբավության մակարդակի ցուցանիշը 2017թ. նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է շուրջ 12.9 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է խաղողի արտաքին ապրանքաշրջանառությանը, ապա հարկ է նշել, որ այստեղ նկատվող միտումը ուրախալի է, քանի որ 2016-2017թթ. նախորդող չորս տարիների նկատմամբ արտահանման ծավալներն զգալիորեն ավելացել են, սակայն 2017թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել է շուրջ 12 հազար տոննայով, հետաքրքիրն այն է, որ վերջին տարիներին նկատվում է ներմուծման ծավալների կայուն աճ ինչն առավել ոշափելի է եղել 2017թվականին:

Այսպիսով, խաղողի արտահանման ծավալները, եթե 2016թ. գերազանցում էին ներմուծման ծավալներին շուրջ 8 անգամ, ապա 2017թ.՝ ընդամենը 2.6 անգամ:

Աղյուսակ 5.

Խաղողի արտադրությունը, ինքնաբավություն անմակարդակը և սպառումը Հայաստանի
Հանրապետությունում 2012-2017թթ.^{38,39}

Տարիներ	Արտադրություն ուև հազ. տոննա	Ներմուծում ևմ հազ. տոննա	Արտահանում ևմ հազ. տոննա	Վերաձևկո ևմ հազ. տոննա	Սննդի օգտագործում ևմ հազ. տոննա	Տարեկան սպառում 1 շնչի հաշվով, կգ	Ինքնաբավություն մակարդակ կ%
2012թ.	241.4	4.0	10.2	156.6	16.9	5.9	102.6
2013թ.	240.8	2.9	7.6	167.2	14.2	4.9	102.0
2014թ.	261.3	3.0	7.8	184.1	13.5	4.7	101.9
2015թ.	309.2	2.8	6.5	216.8	13.1	4.7	101.2
2016թ.	178.8	3.8	32.7	109.8	12.4	4.4	119.3
2017թ.	210.0	8.0	20.7	110.9	11.2	4.0	106.4


³⁸ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Պարենային արտադրություն և աղքատություն 2018թ. – էջ 72, 75, 79:
³⁹ minagro.am:

Վերջին տարիներին խաղողի արտահանման ծավալների աճի միտումը դրական ենք գնահատում, քանի որ անչափ կարևոր է, որ Հայաստանի Հանրապետությանը ունից արտահանվող խաղողը իր բարձր որակական հատկանիշներով աստիճանաբար ավելի մեծ տարածում գտնի արտաքին շուկաներում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությանը ունում և ունենալ կայուն դիրքեր ու բարձր պահանջարկ, ինչն էլ լավագույն նախադրյալներ կարող է ստեղծել երկրում խաղողի սեղանի սորտերի խաղողագործության զարգացման և այգետարածքների ավելացման համար, այդպիսով հանդիսանալով գյուղական տարածքների բնակչության եկամուտների ձևավորման ու ավելացման կարևոր աղբյուր: Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ արտահանման շեշտադրումն ու ուղղվածությունը իր հերթին կարող է ազդել ներքին շուկայում խաղողի գնագոյացման վրա, քանի որ տեղական սպառման համար խաղողի առաջարկը կկրճատվի, արդյունքում սեղանի խաղողի գները կբարձրանան: Սակայն, գտնում ենք, որ նշված վտանգը իր ազդեցությունը չի ունենա կամ կհասնի նվազագույնի, եթե պետությանը համապատասխան գործիքակազմի կիրառմամբ, մասնավորապես աջակցության ծրագրերով և արտաքին առևտրի կարգավորման կարողակարգերով, իրականացնի համապատասխան քաղաքականություն՝ խթանելով խաղողի սեղանի սորտերի արտադրության զարգացումն ու կարգավորելով արտահանման գործընթացը:

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից 2013-2018թթ. խաղողի գնումների ծավալների դինամիկան ներկայացված է գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7-ում ներկայացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից խաղողի գնումների ծավալները 2013-2017թթ. կտրվածքով ունեցել են աճի միտում, բացառությամբ 2016 թվականի ցուցանիշի, մասնավորապես 2016թ. 2015թ. նկատմամբ խաղողի գնումների ծավալները կրճատվել են շուրջ 107 հազ. տոնայով կամ 49.4%-ով, ինչը պայմանավորված է

նույն ժամանակահատվածում խաղողի համախառն բերքի կտրուկ կրճատմամբ՝ 130.4 հազ. տոննայով կամ 42.2 %-ով:



Գծապատկեր 7. ՀՀ խաղողի համախառն բերքը և վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից խաղողի գնումների ծավալները 2013-2017թթ., դրամ^{40,41}:

Հայաստանի Հանրապետության խաղողագործության զարգացման հիմնական նախապայմանը, անկասկած հանդիսանում է վերամշակող արդյունաբերության հաջող զարգացումը, քանի որ երկրում արտադրվող խաղողի համախառն արտադրանքի շուրջ 70%-ը սպառվում է վերամշակող կազմակերպությունների կողմից: Երկրում վերամշակող արդյունաբերության կայուն զարգացման համար կարևոր նախադրյալներից առանցքայինը՝ համապատասխան հումքային բազայի առկայությունն է: Խաղողագինեգործական համալիրի, հատկապես վերամշակող արդյունաբերության զարգացման միտումներն առավել խորը բացահայտելու համար կարևոր է հումքի մթերման ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը:


Վերամշակող արդյունաբերությունը ագրոպարենային համակարգի կարևորագույն ճյուղերից մեկն է, ունի բավականին բարդ կառուցվածք և տարողունակ է, որովհետև բազմակողմանիորեն առնչվում է ամբողջ գյուղատնտեսական արտադրության բոլոր

⁴⁰ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2013-2017թթ.:

⁴¹ <http://minagro.am/> Ագրովերամշակում:

ճյուղերի հետ: Այդ առումով դրա արդյունավետության բարձրացման ուղիները տարբեր են, բազմաբովանդակ և պայմանավորված են զանազան նախապայմաններով, առկա նախադրյալներով և հնարավորություններով, բնակլիմայական և այլ գործոններով, ազգային ավանդական առանձնահատկություններով, ինչպես նաև տվյալ պահին երկրում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակով ու պետության կողմից իրականացվող ներքին և արտաքին քաղաքականությամբ:

ՀՀ վերամշակող արդյունաբերության արդյունաբերության կազմակերպությունների կողմից խաղողի գնումների ծավալների մասնաբաժինը խաղողի համախառն բերքի կառուցվածքում 2013-2017թթ. կտրվածքով ներկայացված է գծապատկեր 8-ում:



Գծապատկեր 8. ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից խաղողի գնումների ծավալների մասնաբաժինը խաղողի համախառն բերքի կառուցվածքում 2013-2017թթ.^{42,43}:

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից խաղողի գնումների ծավալների մասնաբաժնի կրճատումը համախառն բերքի կառուցվածքում վկայում է այն մասին, որ երկրում, դեռևս առկա են լրջագույն խնդիրներ «խաղող արտադրող-

⁴² Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2013-2017թթ.:

⁴³ <http://minagro.am/> Ազրովերամշակում:

վերամշակող կազմակերպություն» շղթայի օղակներում, ինչը արդյունք է ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ իրավաօրենսդրական գործիքների ոչ արդյունավետ կիրառման: Բացի այդ, դեռևս լուրջ խնդիր է հանդիսանում վերոնշյալ շղթայի օղակներում իրավապայմանագրային հարաբերությունների արմատավորումը, ինչպես նաև խաղողի այգետարածքների միասնական հաշվառման համակարգի ներդրումը, ինչը հատկապես վերամշակող կազմակերպություններին հնարավորություն կընձեռի ճիշտ և իրատեսակական գնահատել յուրաքանչյուր արտադրական տարվա համար արտադրության գլխավոր հումքի՝ խաղողի, արտադրության հնարավոր ծավալները: Բացի վերոնշյալ հանգամանքներից, ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից խաղողի գնումների ծավալների մասնաբաժնի կրճատումը համախառն բերքի կառուցվածքում արդյունք է նաև վիճակագրական անճշտությունների, քանի որ խաղողի մթերումների ծավալների վերաբերյալ տվյալները առկա են միայն ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջում, որտեղ հրապարակված տվյալները հիմնված են վերամշակող կազմակերպությունների տրամադրած տեղեկատվության վրա, որոնք, սակայն շատ դեպքերում անհամադրելի են ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեյի կողմից հրապարակված Պարենային հաշվեկշռի տվյալների հետ:

Ելնելով վերոնշյալից և այն հանգամանքից, որ խաղողագործությունն ու գինեգործությունը հանդիսանում են ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարական և հեռանկարային զարգացման խիստ կարևոր ուղղություններից, գտնում ենք, որ խաղողի արտադրության և մթերումների ծավալների վերաբերյալ իրական պատկերն արտացոլող ճշգրիտ տվյալների առկայությունը պարզապես անհարժեշտություն է, քանզի առանց հավաստի տվյալների առկայության անհնար է ոլորտի զարգացման առաջնահերթություններն արտացոլող իրատեսակական ազգային ռազմավարության մշակումն ու վերջինիս իրացումը: Հետևաբար, կարևոր ենք համարում խաղողի մթերումների միասնական վիճակագրական ռեգիստրի ստեղծումը, ինչը հնարավորություն կընձեռի ձևավորել յուրաքանչյուր տարվա կտրվածքով խաղողի

մթերու մների ծավալների վերաբերյալ հավաստի տեղեկատվական բազա: Նշված տեղեկատվական բազայի առկայությունը հնարավորություն կընձեռի կատարել ոլորտի համակողմանի ուսումնասիրություններ և վերլուծություններ, արդյունքում՝ առավել խորքային կբացահայտվեն ոլորտում առկա հիմնախնդիրներն ու առկա ռեզերվները և կմշակվեն ոլորտի զարգացման արդյունավետ ու հիմնարար ծրագրեր:

Խաղողագործությունը և գինեգործությունը մեր երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից են, հետևաբար չափազանց կարևոր է ոլորտի արդյունավետ և նպատակային կառավարման ապահովումը:

Խաղող վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է երկրում խաղողի երաշխավորված իրացման և ընդլայնված վերարտադրության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, որի զարգացման մակարդակը մեծապես պայմանավորում է խաղողագործության զարգացումը:

Ելնելով վերոնշյալ դրույթներից՝ ատենախոսության շրջանակներում խաղողագործության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը մեր կողմից դիտարկվել է վերամշակող արդյունաբերության, մասնավորապես գինեգործության ոլորտի երկարատև, կայուն և համալիր զարգացումը:

ԳԼՈՒԽ 2. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐՅԱԼ ՆԵՐՇ

ՀՀ ՎԱՅՈՑ ՃՈՐԻ ՄԱՐԶՈՒ Մ

2.1 Վայոց ձորի մարզի բնառնտեսական պայմանները և դրանց նպաստավորությունը նրա խաղողագործության զարգացման համար

Համաձայն 1995թ. դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ կազմավորվեց Վայոց ձորի մարզը, որն ընդգրկում է Եղեգնաձորի ու Վայքի նախկին վարչական շրջանները և Ջերմուկ քաղաքը: Մարզի համայնքների թիվը 44 էր, որից 3-ը (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ) քաղաքային և 41-ը գյուղական⁴⁴:

Մարզի տարածքը կազմում է 2307 քառ. կմ կամ ՀՀ տարածքի 7.8%-ը, ձգվածությունը արևելքից արևմուտք՝ 40, իսկ հյուսիսից հարավ 50 կմ է:

Համաձայն 17.06.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ Վայոց ձորի մարզում ձևավորվեց 29 համայնք՝ Վայքի և Ջերմուկի տարածաշրջաններում նախկին 18 համայնքների փոխարեն ձևավորվեցին 3՝ Վայքի, Չառիթափի և Ջերմուկի խոշորացված համայնքները⁴⁵:

Մարզը գտնվում է հանրապետության հարավարևելյան մասում՝ ծովի մակերևույթից 1025-3500մ բարձրության վրա: Արևելքից այն սահմանակից է Սյունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզին, հյուսիսից՝ Գեղարքունիքի մարզին, հարավից՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:

Մարզը շրջապատված է երկու լեռնաշղթայով. հյուսիսից՝ Վարդենիսի, արևմուտքից՝ Վայոց ձորի: Ռելիեֆի կազմության տեսակետից մարզի տարածքը գետերի ու հեղեղատների ազդեցության հետևանքով ձեռք է բերել կտրտված դիրք և զառիթափ լանջերով

⁴⁴ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, ընդունված 04.12.1995թ. - էջ 21-22:

⁴⁵ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 17.06.2016թ.. - էջ 6-7:

մակերես, որն ընդհատվում է խոր ձորերով, կիրճերով ու գետահովիտներով:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ, տարածքի 5.7 %-ը կամ 13240.1 հա-ը կազմում են անտառները: ՀՀ Վայոց ձորի մարզը բնակչության թվով ամենափոքր և ամենանոսր բնակեցված մարզն է: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ մշտական բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 50.8 հազ. մարդ՝ ՀՀ բնակչության 1.7% -ը: 1 կմ² մակերեսի վրա բնակչության խտությունը կազմել է 22 մարդ, Սյունիքում 31, իսկ հանրապետության միջին ցուցանիշը կազմել է 101 մարդ: Եղեգնա-ձորի տարածաշրջանում, որը կազմում է մարզի տարածքի 54.3%-ը ապրում է բնակչության 64,1%-ը, իսկ բնակչության խտությունը 1կմ² վրա կազմել է 26 մարդ: Համամատաբար նոսր է բնակեցված Վայքի տարածաշրջանը՝ մարզի տարածքի 45.6%-ը, այստեղ բնակվում է բնակչության 35,9%-ը և խտությունը 1կմ² վրա կազմել է 17 մարդ: Մարզում հիմնական բնակչությունը գյուղաբնակ է՝ 65%, քաղաքային բնակչությունը կազմում է մարզի բնակչության շուրջ 35%-ը, հանրապետության միջին ցուցանիշը կազմում է 64% քաղաքաբնակ և 36 % գյուղաբնակ: 2012-2016թթ. բնակչության թվաքանակը նվազել է 3.1%-ով, նույն ժամանակահատվածում հանրապետության բնակչությունը նվազել է 0.8%-ով: Քաղաքային բնակչության նվազման տեմպերը ավելի մեծ են, այստեղ բնակչությունը նվազել է ավելի շատ՝ 4.3%-ով, իսկ գյուղական բնակչությունը նվազել է 2.4%-ով: Բնակչության թվի նվազման գործում մեծ դեր ունի միգրացիան՝ 2012- 2015թթ. Վայոց ձորի մարզից մեկնել և չի վերադարձել 15 և բարձր տարիքի բնակչության 2.7%-ը⁴⁶:

Մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով, օդանավակայան և երկաթուղային տրանսպորտ չկա: Գլխավոր երթուղին 108.3կմ երկարությամբ՝ մարզի մի ծայրից մյուսը ձգվող միջպետական

⁴⁶ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2016. - 157 էջ:

նշանակություն ճանապարհն է, որը ծառայում է ինչպես ներմարզային այնպես էլ տրանզիտային փոխադրումների համար դեպի Սյունիքի մարզ, Արցախ և Իրան: Ըստ Վայոց ձորի մարզպետարանի տվյալների՝ մարզն ընդգրկում է 108.3 կմ միջպետական նշանակություն, 203.5 կմ հանրապետական նշանակություն և 304.6 կմ մարզային /տեղական/ նշանակություն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ և 731.1 կմ բնակավայրերի (փողոցներ) ճանապարհներ, որից 181.7 կմ գտնվում են քաղաքային համայնքներում (87.3 կմ ասֆալտապատեն):

Մարզի տարածքով են անցնում միջպետական Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման և Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհները, որը կազմում է Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 6.2%-ը, նշված ավտոճանապարհներով են իրականացվում Իրանի Իսլամական Հանրապետություն և Երմուժվոլ և արտահանվող բեռնափոխադրումների զգալի մասը:

Մարզի տարածքով է անցնում Հայաստան-Իրան գազատարը, սակայն, եթե հանրապետությունում գազամատակարարումը ավարտվել է համայնքների 90%-ում, ապա Վայոց ձորում այն կազմում է 38.6%, որը ընդգրկում է այն բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 42.6%-ը: Մարզի տարածքում գործում են 31 ՓՅԷԿ-եր, կառուցման փուլում են ևս 21: Ներկայումս ՀՀ ՓՅԷԿ-երի հզորությունների 9%-ը Վայոց ձորի մարզում է: 21 ՓՅԷԿ-երի կառուցման ավարտից հետո Վայոց ձորի մարզի ՓՅԷԿ-երի հզորությունը կավելանա շուրջ 1.4 անգամ:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծության ոլորտում՝ տավարաբուծության մեջ, իսկ բուսաբուծության ոլորտում՝ պտղի և խաղողի: Գյուղատնտեսության ոլորտը ապահովում է ոչ \$որմալ շուրջ 12.000 աշխատատեղ: Մարզում ընդհանուր գրանցված ձեռնարկությունների քանակը կազմում է 2321, որոնցից ակտիվ են 1842, որը 10.000 բնակչի հաշվով կազմում է 368: Մարզում գործում են 121 արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ 30 ՓՅԷԿ: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված են

քաղաքներում, առավել խոշոր ձեռնարկությունները գործում են հանքային ջրերի, գինիների և պահածոների արտադրության ոլորտում: Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է եղեգնածորի և Ջերմուկի տարածաշրջաններում: ՀՀ Վայոց ձորի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը մշակող արդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Արդյունաբերության ոլորտում զբաղվածների քանակը կազմում է շուրջ 1280 մարդ: Մարզում զարգանում է նաև հանքարդյունաբերությունը՝ Վայոց ձորի մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 1 մետաղական և 6 ոչ մետաղական հանքերից, ընթացքի մեջ են 2 մետաղական հանքերի շահագործման աշխատանքները⁴⁷:

Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար օգտագործվում են Արփա գետի հովտում ընկած համեմատաբար հարթ հողատարածությունները և մեծ թեթևություն ունեցող լանջերը: Մարզում կարելի է հանդիպել կիսաանապատային, լեռնատափաստանային և լեռնային կլիմայի տիպերի⁴⁸:

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտկամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն ջերմաստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

Մարզի տարածքում տեղումների մակարդակը խիստ անբավարար է, և դրա քանակությունն ըստ տարվա ամիսների բաշխվում է անհավասարաչափ, հետևաբար ոռոգման անհրաժեշտությունը դառնում է պարտադիր գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր բերքատվություն ապահովելու համար:

Գարնան վերջին ցրտահարությունների միջին ժամկետը համարվում է ապրիլի առաջին տասնօրյակը, իսկ աշնան առաջին

⁴⁷ ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն, Եղեգնածոր 2017. - Էջ 17:

⁴⁸ Ղազարյան Է. - ՀՀ արարային տնտեսագիտության դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում: Երևան, Հայագիտակ, 2003, 184 էջ:

ցրտահարությունների միջին ժամկետը՝ հոկտեմբերի վերջին տասնօրյակը⁴⁹:

Ամռան ամենատաք ամիսն օգոստոսն է, օդի միջին ջերմաստիճանը կազմում է 25,8 աստիճան: Մարզի տարածքում տարեկան մթնոլորտային տեղումների քանակը որոշակիորեն տատանվում է՝ ցածրադիր /1025 մ/ մասերում տարեկան տեղումների քանակը կազմում է 355 մմ, իսկ 1500 մ բարձրության սահմաններում՝ 406 մմ: Մարզի ռելիեֆի խիստ բազմազանությունն իր ազդեցությունն է թողել հողակազմող պրոցեսների վրա: Հողային ծածկոցի զգալի մասը կազմում են շագանակագույն հողերը, որոնք հիմնականում տարածված են տարածքի կենտրոնական հատվածներում՝ ծովի մակերևույթից 1000-2100մ բարձրության վրա: Հողակազմող պրոցեսների վրա մեծ ազդեցություն է թողել ողողամաշումը (էրոզիան), որի պատճառով երբեմն հսկայական տարածություններ զրկվել են հողային ծածկոցից և գյուղատնտեսության համար դարձել ոչ պիտանի⁵⁰:

Ըստ բնական պայմանների մարզը բաժանվում է 3 ենթագոտիների:

Առաջին ենթագոտի: Ընդգրկում է ծովի մակարդակից մինչև 1400մ բարձրության տարածքները, որտեղ օդի ակտիվ ջերմաստիճանների գումարը տարվա ընթացքում կազմում է 3500-4000°C, օդի առավելագույն ջերմաստիճանը +38°C է, նվազագույնը՝ -22°C, տեղումները՝ 100-150 մմ, տաք օրերի թիվը՝ 235-270 օր:

Երկրորդ ենթագոտի: Տարածվում է 1400-1700մ բարձրության սահմաններում: Այստեղ կլիման ավելի խիստ է: Ակտիվ ջերմաստիճանների գումարը տարվա ընթացքում կազմում է 2500-3000°C, օդի նվազագույն ջերմաստիճանը՝ -31°C, առավելագույնը՝ +34°C, տաք օրերի թիվը 180-235 օր:

Երրորդ ենթագոտի: Ընդգրկում է ծովի մակարդակից 1700-2200մ բարձրության տարածքները: Ակտիվ ջերմաստիճանների գումարը կազմում է 2000-2500°C, առավելագույն ջերմաստիճանը՝ +28-30°C, իսկ նվազագույնը՝ -33°C:

⁴⁹ Ներսիսյան Ա. - Հայաստանի կլիման: Երևան, 1964:

⁵⁰ Միրիմանյան Ա. - Հողափտություն, Երևան, 1954:

2017թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր կառուցվածքում կազմել են⁵¹.

- արդյունաբերությունը՝ 1.0 %,
- գյուղատնտեսությունը՝ 2.6 %,
- շինարարությունը՝ 8.8 %,
- մանրածախ առևտուր՝ 0.5 %,
- ծառայություններ՝ 0.6 %

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են հանքային շրջերի և խաղողի գինու արտադրությունները:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում զգալի մասնաբաժին ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Մեր հանրապետությունում արդյունաբերական խաղողագործությունը զարգացած է Արարատյան հարթավայրի և դրանախալեռնային գոտիներում՝ ծովի մակերևույթից 800-1400մ, հյուսիս արևելյան գոտում՝ 400-1000մ, Վայոց ձորում՝ 1000մ-ից մինչև 1400-1600մ, Մեղրիում՝ 500մ-ից մինչև 1500-1600մ, Գորիսի տարածքում՝ 700-1200մ բարձրության վրա: Վայոց ձորի և Չանգեգուրի տարածաշրջաններում, խաղողի վազի մշակությունը կարելի է իրականացնել ծովի մակերևույթից մինչև 1700մ բարձրության վրա, հատկապես հարավային և հարավ-արևմտյան թեքություններում:

Խաղողի վերամշակման տեխնոլոգիան խիստ պահանջներ է ներկայացնում հումքի որակի համար, որի աննշան խախտումը բացասաբար է անդրադառնում վերջնական արտադրանքի որակի և գնի վրա: Ընդհանուր առմամբ, խաղողագործության մասնագիտացման գլխավոր խնդիրն է խաղողի այգիների տեղաբաշխման ժամանակ

⁵¹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը թվերով, Երևան, 2018. - էջ 16:

հաշվի առնել յուրաքանչյուր գոտու հողային և կլիմայական թեղրական, և թե բացասական պայմանները՝ նպատակ ունենալով ընդլայնել բարձրարժեք սորտերի տարածությունները⁵²:

Խաղողի սորտերն ունեն ոչ միանման հատկություններ, որը պայմանավորված է նրանց սորտային առանձնահատկություններով: Այդ պատճառով տարբեր է լինում նաև խաղողի որակը, կախված սորտային կազմի կառուցվածքից: Ընդ որում, որքան բարձր է բարձրորակ խաղողի սորտերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, այնքան խաղողի ընդհանուր որակը բարձր է և ընդհակառակը⁵³:

Լեռնային շրջանների հստակ ուղղաձիգ գոտիականությունը, ինչպես նաև թեքությունների տարբեր դիրքադրությունը, հանդիսանում են առաջնային գործոններ՝ տարբեր նշանակության խաղողի արտադրության համար: Խաղողագործության միկրոշրջանային մասնագիտացումը պահանջում է միկրոկլիմայի դետալային հաշվառում և գնահատում, նաև խաղողի արտադրության համար նախատեսված յուրաքանչյուր հողամասի հողի բոնիտավորում⁵⁴:

Խաղողի և դրանից վերամշակված գինիների որակի վրա մեծ ազդեցություն են գործում նաև մթնոլորտային տեղումների քանակը, օդի ու հողի խոնավությունը, հողային պայմանները: Յանրապետության խաղողագործական բոլոր շրջաններում, չնչին բացառությամբ, տարեկան տեղումների քանակը 500մմ-ից պակաս է, իսկ օդի հարաբերական խոնավությունը ցածր, այդ պայմաններում այգիները արհեստական ոռոգման խիստ պահանջ ունեն: Ըստ Ֆ. Ֆ. Դավիթայայի՝ խաղողագինեգործության արտադրության տարբեր ուղղությամբ մասնագիտացման համար, մթնոլորտային տեղումների քանակը (մմ) պետք է լինի շամպայն գինենյութի համար՝ 400-1200, սեղանի գինիների՝ 400-1200, աղանդերային տեսակավոր գինիների՝ 350-800 (աշնանը մթնոլորտային քիչ տեղումներով), պտուղների չորացման համար՝ 200-500:

⁵² Ջրաղացական Աշոտ Խաղողագործության զարգացման հիմնախնդիրները ՀՀ Արմավիրի մարզում, Երևան, 2007. - Էջ 90:

⁵³ Նույն տեղում՝ Էջ 101:

⁵⁴ Мкртчян Р. С., Погосян А.С. – Научно обоснованная микрорайонная специализация виноградарства и виноделия горных регионов ведет к выходу на внешний рынок: Международный форум, посвященный проблемам рынка и права виноградао-винодельческой продукции, Ереван, 2003. – с. 41-43

Հողային պայմանները նույնպես որոշակի ազդեցություն են գործում վազերի աճի, բերքատվության, պտուղների և գինիների որակի վրա: Շամպայն գինիներ պատրաստելու համար խաղողի այգիներն ավելի լավ է հիմնել կարբոնատային, կավավազային, միջակ ծանրության և լավ տաքացող հողերում: Կարմիր, էքստրակտով հարուստ գինիների համար սևապտուղ սորտերը պետք է տնկել կավային և կավային-քարքարոտ հողերում: Սեղանի թեթև սպիտակ գինիների համար արդյունավետ են ավազակավային և խճային հողերը: Սեղանի սորտերի մշակությունը պետք է տանել բերրի սևահողերում և կավային, կավաավազային խոնավությամբ ապահովված հողերում:

Վայոց ձորի մարզում աճում է խաղողի Արենի սորտը, որը համարվում է այս մարզի տեղաբնիկ սորտը: Խաղողի սորտը ոչ միայն որոշում է վազի մշակության հնարավորությունը տվյալ գոտում, այլ նաև պայմանավորում է բերքի քանակը և որակը: Խաղողի յուրաքանչյուր սորտ ունի պատմականորեն ձևավորված արտադրատեխնոլոգիական որոշակի կայունացած հատկություններ և հատկանիշներ: Արենի սորտի խաղողն իր պոտենցիալ հնարավորությունները բացահայտում է՝ ապահովելով բարձրորակ սեղանի կարմիր գինու ստացում, Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի պայմաններում⁵⁵:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողի տեխնիկական սորտերից ամենատարածվածը մարզում Արենի սորտն է, որը ուշահաս տեխնիկական սորտ է և օգտագործվում է սեղանի գինիների և հյութերի արտադրության մեջ: Մարզի, գրեթե բոլոր խաղողագործական համայնքներում առկա են Արենի սորտի խաղողի մշակության համար բարենպաստ բնատնտեսական պայմաններ, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Արենի սորտի խաղողի այգիների տեսակարար կշիռը ընդհանուր այգետարածքների կառուցվածքում գնահատվում է շուրջ 70%: Վերջինս արդյունք է ոչ միայն բարենպաստ բնակլիմայական պայմանների, այլ նաև այն հանգամանքի, որ Արենի սորտի խաղողը, փաստորեն աճում է միայն

⁵⁵ Հարությունյան Ս. և ուրիշներ, Գինին հայոց ավանդական մշակույթում. - Երևան, 2005.

Վայոց ձորի մարզում և իրենից ներկայացնում է բացառիկ արժեքավոր գինեհումք և ինչպես մարզում տեղաբաշխված, այնպես էլ հանրապետության այլ մարզերում գործող վերամշակող կազմակերպությունների կողմից ունի մեծ պահանջարկ: Արենի սորտի խաղողն աճեցվում է մարզի մինչև 1560 մետր բարձրություններն ընկած տարածքներում, մարզում շատ են թեք տարածությունները, սակայն դրանց գերակշիռ մասն ունեն հարավային դիրքադրություններ, ինչը չափազանց նպաստավոր է խաղողագործության զարգացման առումով: Նշված հանգամանքներն էլ պայմանավորում են Արենի սորտի մաքրասորտայն գետարածքների տեսակարար կշռի ավելացման միտումը: Այս սորտի խաղողը հանրապետությունում մթերվում է ամենաբարձր գներով և ապահովում է բարձր տնտեսական արդյունավետություն: Բացի այդ, հայտնի փաստ է, որ գիտականորեն հիմնավորված տեղաբաշխումը, մասնավորապես ըստ բնատնտեսական պայմանների տեղաբաշխումը հանգեցնում է արտադրության ծավալների ավելացման, ինչպես նաև հանդիսանում է ինքնարժեքի օպտիմալացման կարևորագույն ռեզերվներից մեկը: Յետևաբար, գտնում ենք, որ մարզում խաղողագործության հետագա զարգացումը պետք է ուղղված լինի Արենի սորտի խաղողի այգետարածքների ընդլայնմանը և տեխնոլոգիական գործոնների կատարելագործմանը: Նշված գործոնների հետմեկտեղ, մարզում խաղողագործության զարգացման համար կարևոր նախադրյալ է մի շարք վերամշակող կազմակերպությունների առկայությունը:

2.2. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը և դրա օգտագործման հիմնահարցերը

Գյուղատնտեսության ոլորտը ցանկացած պետության ընդհանուր տնտեսական համակարգի կարևորագույն ու առանցքային բաղադրիչներից մեկն է: Այն ապահովում է երկրի պարենային անվտանգությունը և ձևավորում է համախառն ներքին արդյունքի որոշակի, իսկ մեր երկրի առումով բավականաչափ զգալի մասը՝

շուրջ 15%-ը: Երկրում ագրոպարենային համակարգի զարգացման անկայունությունը հանգեցրել է ռեսուրսաօգտագործման օպտիմալ համամասնությունների խախտման և գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների հիմնական ռեսուրսներով ապահովվածության մակարդակի էական նվազման: Ռեսուրսաօգտագործման անհամամասնության խորացումը և ռեսուրսաապահովվածության մակարդակի կրճատումը իրենց շոշափելի քաղաքական ազդեցություն են ունեցել ոլորտում արտադրության արդյունավետության մակարդակի վրա:

Հասարակության անդամների բազմաթիվ պահանջմունքները բավարարելու, անհրաժեշտ բարիքներ ստեղծելու համար մարդիկ իրենց տնտեսական գործունեության մեջ օգտագործում են տարատեսակ ռեսուրսներ: Ռեսուրսների սահմանափակությունը հասարակությունից պահանջում է դրանց այլընտրանքային օգտագործում: Սահմանափակ ռեսուրսների այլընտրանքային օգտագործումը մարդիկ ինքնանպատակ չեն կատարում: Նրանք իրենց սահմանափակ ռեսուրսների օգտագործումից ակնկալելով առավելագույն օգուտ՝ դրանց ռացիոնալ և արդյունավետ օգտագործման նպատակային որոշում են կայացնում: Նման պայմաններում գլխավոր տնտեսական հիմնախնդիրները, որոնց բախվում է ցանկացած հասարակություն, դա բարիքների նկատմամբ մարդկանց անսահմանափակ պահանջմունքների և այդ բարիքներն արտադրելու համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանափակության հակասությունն է⁵⁶:

Արդի պայմաններում տնտեսավարող սուբյեկտի արտադրատնտեսական գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված է առկա բոլոր ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ: Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ռեսուրսային ներուժի ձևավորման կարևորությունը կայանում է նրանում, թե արտադրական ռեսուրսները ինչ դեր են խաղում ագրոպարենային համակարգի սոցիալ-տնտեսական որոշակի խնդիրների լուծման գործում: Որոշակի ծավալով ռեսուրսների

⁵⁶ Գ. Ե. Կիրակոսյան, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն:/ Ուսումնական ձեռնարկ-եր.: Տնտեսագետ 2004. - էջ 120, 124, 128

առկայ ու թյ ու ն ը հանդիսանում է կարևոր պայման տնտեսության արդյունավետ վարման և, առհասարակ արտադրական գործընթացների պատշաճ իրականացման համար: Ռեսուրսային ներուժը տնտեսությունների արտադրողական հնարավորությունների նյութական հիմքն է հանդիսանում:

Ռեսուրսային ներուժը իրենից ներկայացնում է ձեռնարկատիրական գործունեության տրամադրության տակ եղած միմյանց հետ փոխկապակցված ռեսուրսների ամբողջությունը, որի օգտագործումը հնարավորություն է տալիս ապահովելու առավելագույն տնտեսական արդյունք⁵⁷:

Ագրոպարենային համակարգում ռեսուրսային ներուժը ձևավորվում է բնակլիմայական պայմանների և հիմնական արտադրական գործունեության փոխազդեցության ներքո. գյուղատնտեսական նշանակության հողերի տարածությունը և որակը, նյութատեխնիկական բազայի վիճակը, գյուղատնտեսական արտադրությունում ներգրավված աշխատանքային ռեսուրսների առկայությունը⁵⁸:

Ռեսուրսային ներուժը՝ դա նյութատիրային, էներգետիկ, տեղեկատվական միջոցների ամբողջությունն է, ինչպես նաև աշխատողները, ովքեր օգտագործում են կամ կարող են օգտագործել այդ ռեսուրսները արտադրական գործընթացում⁵⁹:

Դեռևս 18-19-րդ դարերում անգլիացի հայտնի տնտեսագետ Դավիթ Ռիկարդոն «ծախսերի համեմատական առավելության» սկզբունքով հիմնավորում է, որ յուրաքանչյուր երկիր պետք է հիմնականում արտադրի այնպիսի արտադրանք, որի համար կպահանջվի նվազագույն ծախսեր: «Ծախսերի համեմատական առավելության» սկզբունքի էությունը հետևյալն է. երկրի համար տնտեսապես շահավետ ու նպատակահարմար կլինի ավելացնել այն ապրանքների

⁵⁷ Богомолова Е. В., Толстых Т. Н. Идентификация потенциала конкурентоспособности предпринимательских структур как резерва // Вестник ТГУ. 2011. №12. С. 61.

⁵⁸ Бунина А. Ю. Ресурсный потенциал в современных условиях хозяйствования предприятий АПК// Вестник Воронежского государственного аграрного университета. 2011. №2. С. 79.

⁵⁹ Ресурсный потенциал экономического роста / под ред. М. А. Комарова и А.Н. Романова. М.: Путь России, 2012: - С. 218.

արտադրությունն ու արտահանումը, որոնց գծով նա ծախսերի համեմատական առավելություն ունի, քան մյուս երկրները⁶⁰:

Ժամանակակից պայմաններում, նույնպես Դավիթ Ռիկարդոյի վերոնշյալ սկզբունքը չի կորցրել իր արդիականությունը, ավելին՝ ցանկացած երկրում մշտապես սուր է եղել և մնում ռեսուրսների օպտիմալ և արդյունավետ օգտագործման խնդիրը: Այս համատեքստում տվյալ սկզբունքի կիրառելիությունը մեր գնահատմամբ բացի երկրի մակարդակով դիտարկելուց, տեղին կլինի դրա նպատակահարմարությունը գնահատել նաև երկրի ներսում՝ առանձին մարզերի կտրվածքով: Քանզի, Հայաստանի Հանրապետությունում հատկապես վերընթաց գոտիականությամբ պայմանավորված յուրաքանչյուր մարզում առկա են տարբեր, երբեմն խիստ տարբեր բնատնտեսական պայմաններ, ինչպես նաև արտադրողական ուժերի անհամաչափ բաշխվածություն և արտադրության մասնագիտացում ու տեղաբաշխում: Հետևաբար, ՀՀ տնտեսության այս կամ այն ոլորտի զարգացման համար կարևոր նշանակություն ունի ռեսուրսաօգտագործման արդյունավետության բարձր մակարդակի ապահովումը, իսկ վերջինս գյուղատնտեսության ոլորտում առավելապես հնարավոր է, եթե հաշվի է առնվում արտադրության տեղաբաշխման գիտականորեն հիմնավորված սկզբունքների գերակայությունը, այսինքն հարկավոր է, որպեսզի երկրի յուրաքանչյուր մարզում զարգացվեն գյուղատնտեսության այնպիսի ճյուղեր, որոնց համար առկա են լավագույն բնակլիմայական պայմանները տվյալ արտադրանքի արտադրության համար: Մասնավորապես, ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ՀՀ Վայոց ձորի մարզում բնատնտեսական պայմանները նպաստավոր են հատկապես խաղողագործության հեռանկարային զարգացման համար, ուստի նախընտրելի մասնագիտացման համար անչափ կարևոր է պետական նպատակառոգ դրված քաղաքականության իրականացումը ՀՀ մարզերի կտրվածքով՝ որոշակի տարբերակված մոտեցումների կիրառմամբ և պետական աջակցության ծրագրերի հիմնավոր մշակմամբ և գործադրմամբ:

⁶⁰ Գ. Ե. Կիրակոսյան, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Ուսումնական ձեռնարկ-եր.: Տնտեսագետ 2004- էջ 153

Տարբեր ժամանակներում բազմաթիվ տնտեսագետներ, ովքեր գործել են տարբեր սոցիալ-տնտեսական պայմաններում, իրենց հետազոտությունների առանցքային դրույթներից է հանդիսացել այն հանգամանքը, որ նվազագույն ռեսուրսային ծախսումներով անհրաժեշտ է ապահովել բարձր արտադրողականություն, հետևաբար նաև բարձր արդյունք, որը և կապահովի ինչպես տնտեսվարող սուբյեկտների եկամուտների, այնպես էլ ազգային եկամտի աճը:

Մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի ուսումնասիրության և վերլուծության համար առանձնակի կարևոր նշանակություն ունի հողային ռեսուրսների, մասնավորապես գյուղատնտեսական նշանակության հողերի ուսումնասիրությունը, քանի որ գյուղատնտեսության զարգացման համար հիմնական ռեսուրսներից ամենաառանցքայինը հողային ռեսուրսներն են, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական արտադրության գլխավոր միջոցը:

Գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող ցանկացած տնտեսվարող սուբյեկտ տնօրինում է որոշակի հողային, աշխատանքային, նյութական և տեխնիկական ռեսուրսներ, որոնց միասնությունը կոչվում է տնտեսության արտադրական ներուժ: Գյուղատնտեսական ձեռնարկություններում կարևորագույն ռեսուրս է հանդիսանում հողը: Հողը հանդես է գալիս որպես արտադրության գլխավոր միջոց, մարդկային հասարակության գոյության կարևորագույն պայման⁶¹:

Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի ներկայացված է աղյուսակ 6-ում:

⁶¹Գ.Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ, Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Ուսումնական ձեռնարկ-եր.: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004. - էջ 72:

Վայ ոց ձորի մարզի գյ ու ղատնտեսական հողատեսքերը^{62,63}

Հողատեսքը	2017թ.	2014թ. գյ ու ղատնտեսության համատարած հաշվառման տվյալներ*		
		Տնտեսության ներքին քանակը, միավոր	Տարածությունը, հա	1 տնտեսության հաշվով միջին տարածությունը, հա
Վարելահող	15712	8027.0	11000.0	1.37
Բազմամյա տնկարկ	1711	3530.0	1324.3	0.38
Խոտհարք	5061	2935.0	2200.0	0.75
Արոտավայր	92310	356.0	1763.0	4.95
Այլ հողատեսքեր	74664	4879.3	1243.7	0.25
Գյ ու ղատնտեսական նշանակության հողեր	189457	9969.0	17531.0	1.76

*տվյալները վերաբերում են միայն ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսության ներքին:


Աղյ ու սակի 6-ի տվյալների վերլուծությունն և ինչ պարզ է դառնում, որ ըստ ՀՀ գյ ու ղատնտեսության համատարած հաշվառման տվյալների՝ Վայ ոց ձորի մարզում ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսության ներքին բաժին ընկնող հողատեսքերի տարածությունները միմյանցից էապես տարբերվում են: Մասնավորապես, հիմնական հողատեսքերից ամենամեծ տարածությունները զբաղեցնում են վարելահողերը՝ 11.000 հա, իսկ ամենափչը՝ այլ հողատեսքերը՝ 1243.7 հա, իսկ ինչ վերաբերում է 1 տնտեսության հաշվով միջին տարածությանը ըստ հողատեսքերի, ապա 1 տնտեսությանը բաժին է ընկնում շուրջ 1.76 հա գյ ու ղ. նշանակության հողեր, իսկ ըստ հողատեսքերի՝ վարելահողեր՝ 1.37,

⁶² Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյ ու ղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:

⁶³ Տեղեկանք 2017թ. Վայ ոց ձորի մարզպետարանի գործունեության արդյունքների և 2018թ. ծրագրերի մասին, Եղեգնաձոր 2018. - Էջ 2:

բազմամյա տնկարկներ՝ 0.38, խոտհարքներ՝ 0.75: Նշված ցուցանիշների վերլուծությունը վկայում է այն մասին, որ մարզում գյուղատնտեսության հաջող զարգացման համար, դեռևս լրջագույն հիմնախնդիր է հանդիսանում գյուղացիական տնտեսությունների չափազանց փոքր չափերը, քանի որ հայտնի է, որ փոքր տարածությունների վրա գյուղատնտեսական արտադրության իրականացման պայմաններում նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը էապես ցածր է:

ՀՀ վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կառուցվածքը 2017 թվականին ներկայացված է Գծապատկեր 9-ում:



Գծապատկեր 9. ՀՀ վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կառուցվածքը 2017 թվականին⁶⁴:

Գծապատկեր 9-ում ներկայացված տվյալներից ակնհայտ է դառնում, որ մարզում 2017թ. դրությամբ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կառուցվածքում ամենաբարձր տեսակարար կշիռներն ունեն արոտավայրերն ու այլ հողատեսքերը, համապատասխանաբար՝ 49 և 39%, վարելահողերը զբաղեցնում են գյուղ. նշանակության հողերի ընդամենը 8%-ը, իսկ բազմամյա տնկարկները, որոնց համար առկա են բավականին բարենպաստ

⁶⁴ Տեղեկանք 2017թ. վայոց ձորի մարզպետարանի գործունեության արդյունքների և 2018թ. ծրագրերի մասին, Եղեգնաձոր 2018. - էջ 2:

պայմաններ, փաստորեն կազմում են մարզի գյուղ. նշանակության հողերի ընդամենը շուրջ 1%-ը: Օպերատիվ տվյալներով՝ մարզում 2017թ. 15712 հա վարելահող օգտագործվել է շուրջ 5500-6000 հա, փաստորեն վարելահողերի շուրջ 60%-ը նախակային չի օգտագործվում, ինչը հիմնականում բացառվում է այն հանգամանքով, որ մարզում առկա վարելահողերի զգալի մասը չունի հողակլիմայական լավագույն պայմաններ բարձր բերքատվություն և ապահովելու համար, բացի այդ վարելահողերի մի մասն ունեն կտրտված ռելիեֆ և գտնվում են անջրդի պայմաններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնականում նշված հանգամանքներով է բացառվում ամենարդյունավետ և ինտենսիվ հողատեսքի՝ վարելահողերի, օգտագործման այդ աստիճան ցածր մակարդակը մարզում, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածության ցածր մակարդակը: Հարկ է նշել նաև, որ խիստ ցածր է նաև մարզում արոտավայրերի օգտագործման մակարդակը՝ արոտավայրերի ընդհանուր տարածքի շուրջ 30%-ը: Վերջինս արդյունք է անասնաբուծության զարգացման ցածր մակարդակի, մինչդեռ մարզում առկա են լավագույն պայմանները հատկապես մանր եղջերավոր անասնաբուծության զարգացման համար:

Հաշվի առնելով մարզի բնատնտեսական և հողակլիմայական պայմանները՝ ակնհայտ է դառնում, որ գյուղատնտեսության, մասնավորապես բուսաբուծության ճյուղն անհնար է զարգացնել առանց հողերի ոռոգման:

Ոռոգման դերի և նշանակության մասին վկայում են նույնիսկ «դեռևս մեր ժամանակաշրջանից առաջ կառուցված և մինչ օրս էլ պահպանված ջրանցքների, ջրամբարների մնացորդները: Դեռևս դարեր առաջ կառուցված և մինչ օրս գործող ոռոգման համակարգերը վկայում են Հայաստանի՝ բարձր կուլտուրայով զարգացման երկիր լինելու մասին»⁶⁵:

Ընդհանուր առմամբ ոռոգման համակարգերը լինում են փակ և բաց: Ոռոգման փակ համակարգերը առավել հեռանկարային են: Դրանք հնարավորություն են տալիս առավել խնայողաբար

⁶⁵ Баграмян Г «Повышение эффективности комплексного использования водных ресурсов Армянской ССР», 1973, с. 34

օգտագործել ջրային ռեսուրսները, նվազագույնի են հասցնում գոլորշիացման ժամանակ ջրային կորուստները և այլն: Սակայն դրանք առավել ծախսատար են⁶⁶:

Ոռոգումը գյուղատնտեսությունում տեխնոլոգիական մեթոդ է, որը կիրառվում է բույսերի ջրային ռեժիմի բարելավման համար և նշանակում է լրացուցիչ ջրի օգտագործում անհրաժեշտ ժամկետներում: Այն բարելավում է հողի ջերմային ռեժիմը և խթանում դրանում իրականացվող միկրոկենսաբանական գործընթացները⁶⁷:

Ոռոգման ջուրը, ըստ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի, ոռոգման նպատակով օգտագործվող և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխանող ջրային ռեսուրս է, որը կարող է լինել ինչպես մակերևութային, այնպես էլ ստորերկրյա, իսկ ոռոգման համակարգը Հայաստանի Հանրապետության ջրային համակարգի մի մասն է, որն ընդգրկում է ոռոգման և ցամաքուրդային (դրենաժային) ջրատարներ, ջրանցքներ, ջրանցույցներ, դյուկերներ, ստորասրահներ, արագահոսներ, թուղեղներ, ջրանկումներ, հեղեղատարներ, խողովակաշարեր, հիդրոտեխնիկական կառուցվածքներ, արտեզյան և շատրվանող հորեր, պոմպակայաններ, ջրամբարներ, լճակներ՝ ծառայողական ճանապարհներն իրենց օտարման գոտիներով, շենք-շինություններով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ջրակոհամակարգերի պահպանման գոտիներ⁶⁸:

Բնակչությանը սննդամթերքով ապահովման գործում զգալի դեր են կատարում հողային և ջրային ռեսուրսները: Ջուրը մարդկության համար ապահովում է պարենի ու էներգիայի, ինչպես նաև մթերքների արտադրություն: Ջուրը բույսի կենսագործունեության անհրաժեշտ պայմանն է: Այն հողի բերրիության տարրերից մեկն է: Բույսի պահանջը ջրի նկատմամբ ի հայտ է գալիս զարգացման առաջին իսկ օրերից: «Ջրի պարունակությամբ են

⁶⁶ Субботин А. С. «Хаустов В. А. "Гидротехника и Мелиорация»' Российский государственный гидрометеорологический университет, 2006г., с. 265-280

⁶⁷ Дедю И. И., Экологический энциклопедический словарь Кишинев: Главная редакция Молдовской советской энциклопедии, 1989., с. 120

⁶⁸ «Ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24.10.2011թ. – էջ 1

պայմանավորված բույսերի կենսական պրոցեսները, միկրոօրգանիզմների կենսագործունեությունը, ինչպես նաև հողի տեխնոլոգիական հատկությունները տեսակարար դիմադրությունը, մշակման ժամկետները և այլ հարցեր»⁶⁹:

Ոռոգմամբ հնարավոր է բարելավել չորային գոտիների հողերը, դրանք ներառել գյուղատնտեսական արտադրության մեջ, զարգացնել այգեգործությունը, պտղաբուծությունը, ստեղծել հացահատիկային կուլտուրաների ոռոգելի ցանքսերի խոշոր զանգվածներ և կուլտուրական արոտավայրեր⁷⁰:

ՀՀ բուրո մարզերում էլ գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նախապայման է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսներից մեկի՝ ջրային ռեսուրսների, առկայությունը: Այդ առումով վիճակը մարզում, պարզապես անմխիթար է, բավական է նշել այն փաստը, որ մարզի վարելահողերից ոռոգվում է շուրջ 2693 հաը կամ վարելահողերի ընդհանուր տարածքի շուրջ 17%-ը, ինչը չափազանց ցածր ցուցանիշ է: Վերջինս էլ, մեր համոզմամբ, հանդիսանում է այն հիմնական պատճառներից մեկը, որ մարզում խիստ ցածր է վարելահողերի օգտագործման մակարդակը: Անհանգստացնող է նաև այն հանգամանքը, որ մարզում շուրջ 740 հա ոռոգելի վարելահողեր չեն մշակվում, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ այդ օգտագործվող վարելահողերի մի մասը չի օգտագործվում այն պատճառով, որ դրանց սեփականատերերը մեկնում են արտագնա աշխատանքի կամ տեղափոխվում են արտերկիր մշտական բնակության, իսկ մի մասն էլ չի օգտագործվում, որովհետև մշակված և շարքից դուրս եկած ոռոգման համակարգերն այլևս չեն ապահովում անխափան ջրամատակարարում: Ինչ վերաբերում է պետության կողմից ոռոգման համակարգի արդիականացմանն ուղղվող պետական աջակցությանը, ապա մեր գնահատմամբ այն խիստ անբավարար է, թեպետ, ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի ծրագրերում 2018 թվականին նախատեսված է Բարձրունի բնակավայրում ոռոգման ջրագծի նախագծման աշխատանքներ, ըստ որի՝ նախատեսվում է ոռոգելի

⁶⁹ Հայրապետյան Է. Մ. Հողագիտություն, «Ասողիկ» հրատ. Երևան, 2000 թ., էջ 111
⁷⁰ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան, 1982, էջ 622-623

հողերն ավելացնել 70 հեկտարով: Համայնքներում կատարված ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ եթե կառուցվի 56 կմ ոռոգման ջրագիծ և 11 կմ ներքին ցանց, ապա ոռոգելի տարածությունները կավելանան 1131 հեկտարով:

Մարզում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում, պարզապես հրատապ է ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և ջրային համակարգերի արդիականացման հիմնախնդիրների լուծումը: Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հարցերը չափազանց կարևոր են և պահանջում են դրանց համակողմանի ուսումնասիրություն և օպտիմալ լուծումների առաջադրում: Ջրային ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրների շարքում առանձնակի կարևոր տեղ ունի ոռոգման ջրի օգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացման խնդիրները և դրանց լուծման ուղիների առաջադրումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության նյութատեխնիկական ռեսուրսների մյուս կարևոր բաղկացուցիչ՝ տեխնիկական միջոցների, գծով ապահովվածության մակարդակը, ինչպես հանրապետության մակարդակով, այնպես էլ մարզի՝ մնում է ցածր:

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և դրանց սարքինություն վիճակի վերաբերյալ տվյալները 2016-2018թթ. ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ սարքինության մակարդակը միայն կերտահավաք կոմբայների գծով է 100%, բացի այդ նշված տեխնիկական միջոցը քանակով ամենաքիչն է մարզում՝ ընդամենը 4 միավոր, իսկ ամենաշատը 2018թ. տվյալներով բեռնատար ավտոմեքենաներն ու տրակտորներն են, համապատասխանաբար՝ 800 և 627 միավոր: 2018 թվականին 2016 թվականի նկատմամբ մարզում տեխնիկական միջոցների թվաքանակն աճել է ընդամենը 5 միավորով, այն էլ ոչ թե բարձրարժեք և առավել կարևոր տեխնիկական միջոցների քանակի ավելացման, այլ ցածրարժեք միջոցների թվաքանակի ավելացման հաշվին, մասնավորապես՝ 5 տրակտորների, 5 տրակտորային գութանների և 6 տրակտորային

խոտհնձիչների: Փոխարենը մարզում զգալիորեն կրճատվել են այնպիսի կարևոր տեխնիկական միջոցների քանակը, ինչպիսիք են հացահատիկահավաք կոմբայները, որոնց թվաքանակը կրճատվել է 6-ով:

2017 թվականին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և սոցիալական ներդրումների միջոցներով, որպես դրամաշնորհ Չառիթափ համայնքին տրամադրվել է 1 հացահատիկահավաք կոմբայն և 6 տարբեր մակնիշի տրակտորներ: Բացի այդ, Չառիթափ համայնքում շուտով նախատեսվում է շահագործման հանձնել մեքենատրակտորային պարկը, որը կունենա շուրջ 16 անուն գյուղատնտեսական տեխնիկական գործիքներ:

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայ ու թյուր և դրանց սարքի ու թյան մակարդակը 2016-2018թթ.⁷¹

	2016թ.			2017թ.			2018թ.		
	Միություն	Սարքի ու թյան մակարդակը %		Միություն	Սարքի ու թյան մակարդակը %		Միություն	Սարքի ու թյան մակարդակը %	
	Մարդ	Մարդ	ՀՀ	Մարդ	Մարդ	ՀՀ	Մարդ	Մարդ	ՀՀ
Տրակտորներ	622	89.7	78.7	624	87.8	78.5	627	88.2	78.4
Բեռնատար ավտոմեքենաներ	800	68.8	76.9	800	68.8	76.5	800	68.8	76.4
Հացահ. կոմբայն	34	70.6	74.7	34	61.8	75.9	28	78.6	77.4
Կերահավաք կոմբայններ	4	100	74.4	4	100	73.2	4	100	73.4
Տրակտորային կցասայլեր	237	92.8	86.9	231	94.8	86.6	231	93.9	86.6
Տրակտորային խոտհնձիչներ	183	85.8	84.4	185	86.5	83.9	189	86.8	84.1
Հատիկագտիչ մեքենաներ	11	100	85.3	11	90.9	85.3	11	90.9	85.4
Տրակտորային շարքացաններ	11	72.7	85	10	80	84.9	13	69.2	86.2
Տրակտորային գոլթաններ	125	88	87.6	126	85.7	87.1	130	86.2	87
Կուլտիվատորներ	67	82.1	84	65	80	84.1	65	78.5	83.8
Հավաքիչ-մամլիչներ	72	88.3	83.6	73	89	85.4	73	87.7	86.3
Ընդամենը	2166	-	-	2163			2171		

Ցանկացած արտադրատնտեսական գործուներ թյուր ու ն, այդ թվում նաև գյուղատնտեսական արտադրության հետ կապված բոլոր գործընթացները անհնար է պաշտահ մակարդակով իրականացնել առանց համապատասխան աշխատանքային ռեսուրսների առկայ ու թյան:

⁷¹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայ ու թյուր ու ն: Գյուղատնտեսական տեխնիկայի առկայ ու թյան և սարքի ու թյան վիճակի մասին 2016, 2017 և 2018թթ. վիճակագրական տեղեկագրեր:

Մարզում աշխատանքային ռեսուրսների առկայության ու զբաղվածության մակարդակի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

ՀՀ Վայոց ձորի մարզի աշխատանքային ռեսուրսները և զբաղվածության մակարդակը 2015-2017թթ.⁷²

Մարզի աշխատանքային ռեսուրսները, հազ. մարդ					
	Ընդամենը	Տղամարդ	Կին	Քաղաք	Գյուղ
2015	35.0	15.4	19.6	13.7	21.3
2016	31.2	13.3	17.9	12.3	18.9
2017	28.9	12.6	16.3	10.5	18.3
Մարզի բնակչության զբաղվածության մակարդակը, %					
2015	68.0	75.8	61.9	60.1	73.2
2016	67.4	77.6	59.9	58.6	73.2
2017	66.8	73.4	61.7	56.8	72.5
Զբաղվածները, հազ. մարդ					
	Ընդամենը	Գյուղատնտեսական		Ոչ գյուղատնտեսական	
2015	23.8	10.4		13.4	
2016	21.0	9.3		11.7	
2017	19.3	9.0		10.3	
ՀՀ նկատմամբ, %					
2015	2.2	2.1		2.4	
2016	2.1	2.8		1.7	
2017	1.9	2.8		1.5	

Աղյուսակ 8-ի վերլուծությունն ից պարզ է դառնում, որ աշխատանքային ռեսուրսների թվաքանակը 2017թ. 2015թ. նկատմամբ կրճատվել է 6100 մարդով կամ 17.5%-ով, ինչը 3 տարվա կտրվածքով, մեր գնահատմամբ խիստ մտահոգիչ ցուցանիշ է: Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում աշխատանքային ռեսուրսների թվաքանակն առավել զգալի չափով կրճատվել է գյուղական բնակավայրերում՝ 3000 մարդով կամ 14.1%-ով: Առավել անհանգստացնող է նաև այն հանգամանքը, որ մարզում նկատվում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվաքանակի կրճատման միտում նույնպես, մասնավորապես 2017 թվականին 2015թ.

⁷² Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2016-2018թթ.:

Նկատմամբ գյուղատնտեսական գործունեությանը զբաղվածների թվաքանակը կրճատվել է 1400-ով կամ 13.4%-ով: Բացի այդ, նույն ժամանակահատվածում գրանցվել է նաև զբաղվածության մակարդակի նվազում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության շրջանում, համապատասխանաբար՝ 3.3 և 0.7 տոկոսային կետերով:

Այսպիսով, ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների առկայության և օգտագործման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում առկա է լրջագույն խնդիր գյուղատնտեսության բոլոր հիմնական ռեսուրսների գծով: Ըստ էության, չափազանց անբավարար կարելի է գնահատել հողօգտագործման վիճակը մարզում, քանի որ ցածր է գյուղատնտեսական հիմնական հողատեսքերի օգտագործման մակարդակը, այդ թվում՝ վարելահողերի: Վերջինս, բացի հողակլիմայական ոչ այնքան նպաստավոր պայմանների և ռելիեֆի, անջրդի երկրագործության, ոռոգման համակարգերի մաշվածության և պիտանելիության ցածր մակարդակի, արդյունք է նաև համապատասխան քանակի և տեխնիկական բնութագրերի գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության: Նշված համատեքստում, պակաս կարևոր է նաև մարզի աշխատանքային ռեսուրսների կառուցվածքային փոփոխությունների միտումը, մասնավորապես ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում աշխատանքային ռեսուրսների ընդհանուր զբաղվածության կառուցվածքում գնալով նվազում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության տեսակարար կշիռը, ինչը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ աստիճանաբար գյուղատնտեսության ոլորտը դառնում է էլ ավելի ոչ գրավիչ գործունեության ոլորտ: Մյուս կողմից, գյուղատնտեսությունը և դրա հումքային բազայի, մասնավորապես խաղողագործության արտադրանքի բազայի վրա գործող մշակող արդյունաբերությունը հանդիսանում են մարզի տնտեսության առանցքային ոլորտները:

Ելնելով վերոնշյալ դրույթներից՝ գտնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզում գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման բարելավման ուղղությամբ հրատապ է, որպեսզի իրականացվի միջոցառումների համալիր, որը հիմնված կլինի

մարզի բնատնտեսական պայմանների նպաստավորությունն իր ցելնելով գյուղատնտեսության զարգացման գերակայությունների վրա: Մասնավորապես, կարևոր ենք համարում պետական նպատակառոչ դրված քաղաքականության իրականացումը համապատասխան աջակցության ծրագրերի գործիքակազմով՝ հետևյալ ուղղություններով.

- գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացման կատարելագործում,
- հողաբարելավման միջոցառումների իրականացում, հատկապես քարքարոտ անհարթ հողերի բարելավման աշխատանքներ,
- ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում, ոռոգման նոր ջրագծերի կառուցում,

Նշված ուղղությունները, մեր գնահատմամբ առավել հրատապ լուծում պահանջող հիմնահարցերն են, որոնց ուղղությամբ որոշակի միջոցառումների իրականացումը իրատեսական ենք համարում միջնաժամկետ հեռանկարում, արդյունքում՝ կարելի է ակնկալել մարզի գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման ուղղությամբ վիճակի էական բարելավում:

2.3. Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի վիճակը

Հայաստանում գինեգործությունն ունի ավելի քան 6.000 տարվա պատմություն, ինչը, բազմաթիվ աղբյուրների վկայակոչմամբ, համարվում է գիտականորեն ապացուցված փաստ: Հայաստանի, մասնավորապես Վայոց ձորի մարզի Արենի գյուղի մոտ գտնվող քարանձավների տարածքում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են գինեգործական սարքավորումների հնագույն նմուշներ, ինչպես նաև խաղողի սերմերի մնացորդներ: Պեղումներն իրականացվել են հայ, ամերիկացի և իռլանդացի հնագետների կողմից: Ուսումնասիրության արդյունքները հրատարակվել են այնպիսի հեղինակավոր լրատվամիջոցներում, ինչպիսիք են «BBC», «National Geographic» աշխարհահռչակ և հեղինակավոր հեռուստատնտեսությունների, ինչպես նաև «The Journal of Archaeological Science» ամսագրերի աղբյուրներում: Նշվածն ապացույցն է հանդիսանում այն բանի, որ խաղողագործությունն ու գինե-

գործությունն այս տարածաշրջանում զարգացած են եղել և կարևոր դեր են ունեցել պատմական զարգացման ակունքներից սկսած:

Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի վերին հոսանքում, Գետիք բնակավայրում հայ տնաբերվել է խաղողի մնացորդներ, որի տարիքը հաշվվում է շուրջ 4-5 մլն տարի⁷³:

Կատարված բազմաթիվ հետազոտությունները վկայում են, որ Յայաստանում հաշվվում է խաղողի արորիգեն շուրջ 500 սորտեր, որոնցից 130-ը հայ տնաբերվել է Վայոց ձորում⁷⁴:

Վայոց ձորի յուրահատկության վկայությունն են հանդիսանում խաղողի չափազանց հարուստ գենոֆոնդը: Սորտերի հսկայական բազմազանությունը վկայում է, որ այստեղ խաղողագործության մշակույթը և դրա օգտագործումը գալիս են հազարամյակների խորքից⁷⁵:

Ունենալով լեռնային հսկայական լայնություններ, փարթամ գետահովիտներ, գրավիչ կիրճեր և խորհրդավոր քարանձավներ՝ Վայոց ձորի մարզն օժտված է բազմազան և բացառիկ բնական գեղեցկությամբ:

Վայոց ձորի մարզում են տեղաբաշխված Յայաստանի՝ ամենամեծ բարձրության խաղողի այգիները: Մարզի խաղողագործությունն ինչ-որ առումով կարելի է ասել հիմնված է աշխարհի հնագույն խաղողի սորտերից մեկի՝ Արենի սորտի մշակության վրա, որը համարվում է Էնդեմիկ բուսատեսակ մարզի համար, որն օգտագործվում է կարմիր գինիների արտադրությունում:

Չնայած խաղողագործության և գինեգործության հազարամյակների պատմությանը, խաղողագործությունն ու գինեգործությունը մարզում սկսել են ինտենսիվորեն զարգանալ 19-րդ դարի վերջերից սկսած միայն, ինչը պայմանավորված էր համա-նահանգային զարգացման և Ցարական Ռուսաստանի տնտեսության առաջընթացով⁷⁶:

⁷³ Ս. Յարությունյան և ուրիշներ-Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005. – էջ 13

⁷⁴ Арутюнян А. Ф. Виноградарство и виноделие в Армении. – Ереван, 2007. – с. 118-147, 192-234

⁷⁵ Вавилов Н. И. Дикие родичи плодовых деревьев азиатской части СССР и Кавказа и проблемы происхождения плодовых деревьев. –Избр. труды: -М.-Л., 1960.-Т.II. - с. 348

⁷⁶ Арутюнян А., Арутюнян Ф., Погосян А. О состоянии винаградарства и виноделя Шаруро-Даралагезского уезда Эриванской губернии в конце 19 и в начале 20 веков // Բնութի Յայաստանի արխիվների.- N1(111).-2008. - с. 271-276

Այնուհետև, մարզում խաղողագործությունն առավել մեծ տեմպերով զարգացում է ապրել ԽՍՀՄ տարիներին 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են 1974-1977թթ., երբ խաղողի այգիների տարածությունները միջինում կազմել են 1236 հա: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1977 թվականին՝ շուրջ 1265, որից 1065 հա-ը պողատու հասակի⁷⁷:

Վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ մարզում խաղողագործության զարգացման առումով դեռևս առկա է չօգտագործված հսկայական ներուժ, քանզի ներկայումս խաղողի այգիների տարածությունները, փաստորեն զիջում են հեռավոր 1970 ական թվականներին գրանցված ցուցանիշին: Բացի այդ, եթե հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ 70 ական թվականներին արձանագրված խաղողի այգետարածքների ցուցանիշի աճի միտումը կարող էր շարունակվել և մինչև անկախացումը մեր գնահատմամբ կհասներ շուրջ 1500 հա-ի, սակայն վերջինս տեղի չունեցավ, քանի որ ԽՍՀՄ տարածքում ակոհողի դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման արդյունքում նշված միտումը կասեցվեց, այս պարագայում ևս ակնհայտ է դառնում, այն հանգամանքը, որ մարզն ունի խաղողագործության զարգացման հսկայական ներուժ:

Մարզում տարածված խաղողի սորտերը՝ ըստ օգտագործման բնույթի ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9.

Վայոց ձորի մարզում տարածված խաղողի սորտերը՝ ըստ օգտագործման բնույթի


Սեղանի սորտեր	Սափտակ Արաքսենի, Նազելի, Սափտակ Սաթենի (վաղահաս), դեղին և Վարդագույն Երևանիներ, Սև քիչմիշ (միջահաս), Շահումյանի, Արարատի, Ջայրենիք, Իծապտուկ:
Տեխնիկական սորտեր	Սև Արենի, Սապերավի, Կարմրահյուս, Ոսկեհատ, Խաթուն Խարջի, Թոզոտ, Ավագի (Լյուստրա), Կախեթ,

⁷⁷ Арутюнян А. Ф. Природная среда армянского вина. Мезо – и микроклимат. Почвенный покров. Системная оценка потенциала. – Ер.: Авторское издание, 2009. – с. 160

	Ապրյի խաղող, Վանքի, Յամբի, Յաղուբ-օղլի:
Ունիվերսալ սորտեր	Մորմոր, Քրդի խաղող, Մսխալի, Մուսկատ Սուսաննա, Այվազյանի վարդաբլուր, Մովսեսի, Այվազյանի մուսկատենի:

Վայոց ձորի մարզում խաղողագործության զարգացման արդի վիճակի ուսումնասիրության և առկա միտումների առաջել համակողմանի բացահայտման համար կարևոր ենք համարել մարզի խաղողի այգետարածքների, միջին բերքատվության և համախառն բերքի ցուցանիշների ուսումնասիրությունների և վերլուծությունների կատարումը: Խաղողագործության զարգացման դինամիկան նշված ցուցանիշների գծով առաջել նպատակահարմար ենք համարել դիտարկել երկարաժամկետ, մասնավորապես վերջին 15 տարվա կտրվածքով, քանի որ երկարաժամկետ դիտարկումը հնարավորություն է տալիս առաջել համակողմանիորեն վերլուծելու և բացահայտելու մարզի խաղողագործության զարգացման իրական միտումները և դրանք պայմանավորող գործոններն ու ծառայած հիմնահարցերը:

Վայոց ձորի մարզի խաղողի այգիների տարածությունների դինամիկան 2002-2018թթ. ներկայացված է գծապատկեր 10-ում:




Գծապատկեր 10. ՅՅ Վայոց ձորի մարզի խաղողի այգիների տարածությունները 2002-2018թթ., հա⁷⁸:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՅՅ Վայոց ձորի մարզի խաղողի այգետարածքների ցուցանիշը վերջին 15 տարում ունեցել է ընդգծված աճի միտում: Ընդ որում, նշված ցուցանիշի գծով բեկումնալի կարելի է համարել 2004 թվականը, քանի որ այգետարածքները տվյալ տարում նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 272 հա-ով կամ 47.1%-ով, ինչը հանրապետության և մարզի կտրվածքով հողերի սեփականաշնորհումից հետո ամենաբարձր և աննախադեպ ցուցանիշն է: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ վերջին 15 տարում խաղողագործությունը մարզում մեծ զարգացում է ապրում: Վերջինիս մասին է վկայում այն հանգամանքը, որ մարզում խաղողի այգիների տարածությունների դինամիկ և կայուն աճ է գրանցվել, մասնավորապես 2018 թվականին խաղողի այգետարածքները 2002թ. նկատմամբ ավելացել են 539 հա-ով՝ հասնելով 1214 հա-ի կամ՝ աճը կազմել է շուրջ 1.8 անգամ, ինչը մեր գնահատմամբ բարձր ցուցանիշ է և կարող է հանդիսանալ կարևոր նախադրյալ ու ուղենիշ՝ մարզում խաղողագործության հետագա զարգացման համար:

Մարզում խաղողագործության զարգացման մասին է վկայում նաև խաղողի բերքատվության մակարդակի, ինչպես նաև համախառն բերքի ցուցանիշների վերլուծությունը, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են համապատասխանաբար՝ գծապատկերներ 11-ում և 12-ում:

⁷⁸ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2018թթ. տարեգրքեր:



Գծապատկեր 11. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի համախառն բերքը 2002-2018թթ., հազ. տոննա⁷⁹:



Գծապատկեր 12. ՀՀ-ում և ՀՀ Վայոց ձորի մարզում խաղողի այգիների միջին բերքատվությունը 2002-2018թթ., g/հա⁸⁰:

Գծապատկերներ 11-ի և 12-ի դիտարկումից ակնհայտ է դառնում, որ մարզում, խաղողի այգիների միջին բերքատվության աճով


⁷⁹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2018թթ. տարեգրքեր:

⁸⁰ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2017, 2018թթ. տարեգրքեր:

պայմանավորված, համահունչ կերպով ավելացել է նաև խաղողի համախառն բերքը: Ընդհանուր առմամբ վերջին տարիներին մարզում խաղողի բերքատվության մակարդակը բավականին բարելավվել է, մասնավորապես նշված միտումը արձանագրվել է սկսած 2004 թվականից: Խաղողի միջին բերքատվության ցուցանիշի բարելավման միտումը առավել ցայտուն է ընդգծվում ուսումնասիրվող ժամանակահատվածի առաջին և վերջին հինգ տարիների միջին ցուցանիշների վերլուծությամբ, մասնավորապես 2013-2018թթ. մարզում խաղողի միջին բերքատվությունը կազմել է 47.8 g/հա, իսկ 2002-2006թթ.՝ 33.1 g/հա, այսինքն բերքատվության մակարդակը մարզում նշված ժամանակահատվածների համեմատությամբ աճել է 14.7 g/հա-ով կամ 30.7%-ով:

Այսպիսով, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի այգիների տարածությունների, խաղողի միջին բերքատվության և համախառն բերքի ցուցանիշների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ մարզում խաղողագործությունը վերջին տարիներին կայուն կերպով զարգանում է: Բացի այդ խաղողագործության զարգացման դինամիկան ցույց է տալիս, որ մարզն ունի խաղողագործության զարգացման մեծ ռեզերվ և լուրջ նախադրյալներ, որոնց արդյունավետ օգտագործումը մեր գնահատմամբ միջնաժամկետ հեռանկարում կապահովի խաղողագործության զարգացման նախընտրելի մակարդակ, որը հնարավորություն կտա էապես բարձրացնել ու ռեսուրսաօգտագործման արդյունավետությունը, ինչն էլ չափազանց կարևոր է նաև մարզի գյուղացիական տնտեսությունների շրջանում խաղողագործությամբ զբաղվելու գրավչության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

Ատենախոսության շրջանակներում Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման վերլուծության համատեքստում կարևոր ենք համարել ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում մարզի խաղողի այգետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկայի վերլուծությունը, որի վերաբերյալ հաշվարկային տվյալները ներկայացված են գծապատկեր 13-ում:



Գծապատկեր 13. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի այգետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկան ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում 2002-2018թթ.,^{81,82}

Գծապատկեր 13-ի վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել ոչ միայն մարզում խաղողագործության զարգացման դինամիկայի մասին, այլ նաև բացահայտել ու մարզի տեղն ու դերը ՀՀ խաղողագործության զարգացման համատեքստում: Մարզի խաղողագործության մասնաբաժնի դինամիկան առավել ցայտուն կերպով բացահայտել ու համար բացի վերջին 15 տարիների տվյալներից, գծապատկերում արտացոլել ենք նաև մարզում խաղողագործության զարգացման ամենաբարձր մակարդակ արձանագրված ժամանակահատվածի՝ 1971-1980թթ., ցուցանիշները, ինչը հնարավորություն է կտա առավել ցայտուն կերպով ներկայացնել ու բնութագրել ու մարզում խաղողագործության զարգացման արդի վիճակը:

Այսպիսով, ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում Վայոց ձորի մարզի խաղողի այգետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկայի վերլուծությունը

⁸¹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2017թթ. տարեգրքեր:

⁸² Арутюнян А. Ф. Природная среда армянского вина. Мезо – и микроклимат. Почвенный покров. Системная оценка потенциала. – Ер.: Авторское издание, 2009. – с. 160:

ցույց է տալիս, որ մարզում խաղողի այգիների տարածությունների տեսակարար կշիռները ՀՀ խաղողի ընդհանուր այգետարածքների նկատմամբ տարեց տարի աճել են, 2018 թվականի դրությամբ հասնելով ամենաբարձր մակարդակին՝ շուրջ 6.8%: Համեմատության համար հարկ է նշել, որ ԽՍՀՄ տարիներին՝ 1975-1980թթ., երբ մարզում խաղողի այգետարածքները եղել են ռեկորդային մակարդակի՝ շուրջ 1191 հա, մարզի խաղողի այգետարածքների տեսակարար կշիռը հանրապետության խաղողի ընդհանուր այգետարածքների կառուցվածքում կազմել է ընդամենը 3,3%, այսինքն 2018 թվականին 1975-1980թթ. միջին ցուցանիշի նկատմամբ աճը կազմել է՝ շուրջ 3.5 տոկոսային կետ: Այսպիսով, ստացվում է, որ մարզում խաղողի այգետարածքները հանրապետության համանման միջին ցուցանիշներից ավելանում են առաջանցիկ տեմպերով, ինչը ևս վկայում է այն մասին, որ մարզն ունի խաղողագործության զարգացման համար լուրջ ներուժ և գնալով ավելի կարևոր տեղ է զբաղեցնում երկրի խաղողագինեգործական համալիրում, քանզի առկամիտումները նշվածի վառ ապացույցն են:

Ինչ վերաբերում է ՀՀ խաղողի համախառն բերքի կառուցվածքում մարզի խաղողի համախառն բերքի տեսակարար կշիռի դինամիկային, ապա հարկ է նշել, որ նշված ցուցանիշն էականորեն բարելավվել է սկսած 2004 թվականից՝ նախորդ տարիների 1% ցուցանիշից հասնելով 2.1%-ի: Տվյալ ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2013 թվականին՝ 2.2%, իսկ դրան հաջորդող տարիներին 2014-2016թթ. կայուն անկում է գրանցվել, սակայն 2017-2018թթ. արձանագրվել է նշված ցուցանիշի կայուն աճ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ վերջինս, չնայած խաղողի այգետարածքների ավելացմանը, պայմանավորված է մարզում խաղողի բերքատվության մակարդակի աճի ցածր տեմպերով՝ միջին հանրապետականի նկատմամբ: Վերջինս արդյունք է, ինչպես բնակլիմայական պայմանների առումով ոչ բարենպաստ տարիների, այնպես էլ միջարքայլ գործոնների, այդ թվում նաև խաղողի այգիների նոսրության, մաշվածության բարձր մակարդակի և կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների անբավարար մակարդակի:

**ԳԼՈՒԽ 3. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ**

**3.1. Խաղողագործության և զարգացման հիմնախնդիրները
ՀՀ Վայոց ձորի մարզում**

Խաղողագործությունը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի առաջատար ճյուղերից է և չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին արձանագրվել են խաղողի արտադրության և գինեգործության կայուն զարգացման տեմպեր, սակայն, այդուհանդերձ ոլորտում առկա է զարգացման հսկայական մեծ ռեզերվ և չօգտագործված ներուժ: Խաղողագործության ոլորտում առկա ներուժի ոչ բավարար օգտագործումը, թերևս այն գլխավոր ազդակն է, որը վկայում է ոլորտում առկա բազում հիմնախնդիրների մասին, որոնց բացահայտումն ու հիմնարար լուծումները, մեր գնահատմամբ իրատեսական կարող են դառնալ միմիայն համակարգված մոտեցումների առաջադրմամբ, ինչպես նաև ոլորտի զարգացման նոր ռազմավարության մշակմամբ: Միանգամայն, ակնհայտ է, որ առանց Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանը խոչընդոտող գործոնների համակողմանի ուսումնասիրության, պարզապես անհնար կլինի առաջադրել մարզի խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև մշակել ոլորտի պետական աջակցության և խաղողի արտադրության ծավալների ավելացման ու ճյուղի տնտեսական արդյունավետության բարձրացման արդյունավետ ու հեռանկարային կարողակարգեր:

Միջազգային պրակտիկայում կազմակերպությունների ներքին և արտաքին միջավայրի իրավիճակային վերլուծությունը ընդունված է անվանել SWOT (անգլերեն strength (ուժեղություն), weaknesses (թուլություն), opportunities (հնարավորություններ), threats (սպառնալիքներ) բառերի սկզբնատառերն են) վերլուծություն⁸³:

SWOT վերլուծությունը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել տնտեսվարող սուբյեկտների

⁸³ Յու. Մ. Սուվարյան, Մենեջմենթ, Երևան: Տնտեսագետ, 2002. - էջ 99:
89

արտադրատնտեսական գործունեության փաստացի վիճակը, ինչպես նաև բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, ինչը կարևոր նախադրյալ է երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի մշակման համար:

ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագիտագործական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության վրա էական ազդեցություն ունեցող արտաքին և ներքին միջավայրերի գործոնների ուսումնասիրության և համակողմանի վերլուծության նպատակով կարևոր ենք համարել SWOT վերլուծության իրականացումը:

ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագիտագործական համալիրի SWOT վերլուծությունը ներկայացված է գծապատկեր 14-ում:

<p>Ուժեղ կողմեր (Strengths)</p>	<p>Թույլ կողմեր (Weaknesses)</p>
<ul style="list-style-type: none"> ➤ ՀՀ Վայոց ձորի մարզում խաղողի յուրահատուկ սորտերի առկայություն, որոնք ոչ միայն Հանրապետության տարածքից, այլ նաև մարզի տարածքից դուրս չեն աճում ➤ Խաղողագործության զարգացման համար բնակլիմայական պայմանների նպաստավորությունը, հատկապես առանց այգեթաղի խաղողագործության հնարավորությունը ➤ Խաղողագործության զարգացման համար համապատասխան հողային ռեսուրսների առկայություն ➤ Էկոլոգիապես մաքուր և բարձրորակ խաղողի 	<ul style="list-style-type: none"> ➤ Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական միջոցներով ապահովվածության ցածր մակարդակ ➤ Հնացած և քայքայված ոռոգման համակարգ <ul style="list-style-type: none"> ➤ Արտադրական ենթակառուցվածքների անբավարար մակարդակ ➤ Նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածության ցածր մակարդակ ➤ Խաղողի մթերումների ոլորտում առկա խնդիրներ, մասնավորապես երկարատև պայմանագրային հարաբերությունների բացակայություն ➤ Գյուղացիական

արտադրող թյուր, գրեթե բոլոր տնտեսող թյուր ներու մ

- Մարզում խաղողի այգիները վարակված չեն ֆիլոքսերայով
 - Մարզում խաղողագիներ գործակալ արտադրող թյան հարուստ ավանդույթները
- Վերամշակող արտադրական կարողությունների առկայությունը
 - ՀՀ մյուս մարզերում մթերվող տարբեր սորտերի համեմատ Արենի սորտի խաղողի մթերման քարտի գները
 - Գյուղացիական տնտեսող թյուր ներում խաղողագործության բնագավառում կուտակված փորձի, գիտելիքների և համապատասխան մասնագիտական կարգային ներուժի առկայություն
 - Արենի քարանձավի առկայություն, որով վկայակոչվում է մարզի գիներ գործության 6000 ամյա պատմությունը

տնտեսող թյուր ներում խաղողի ապանքայնության ցածր մակարդակը

- խաղողագործության մեքաղվող գյուղացիական տնտեսող թյուր ներու ներն փոքր չափեր՝ միջինում 0,21 հա
- Արտադրվող արտադրանքի ինքնարժեքի բարձր մակարդակ
 - Վերամշակող կազմակերպությունների արտադրական հզորությունների ոչ լիարժեք օգտագործում
- Վերամշակող կազմակերպություններում որակի կառավարման համակարգերի և միջազգային ստանդարտներին համապատասխանության ապահովման խնդիրների առկայություն
 - Ոլորտի զարգացման ռազմավարության բացակայություն

Հնարավորություններ (Opportunities)

- Ուղղորտոր պատճառաւ կարգավորման ճկուն և արդյունավետ կառուցակարգերի մշակում
 - Խաղողի մթերման գործընթացում երկարատև պայմանագրային հարաբերությունների արմատավորում և համապատասխան իրավական հիմքերի ստեղծում
- Մարզում խաղողագործության զարգացմանը նպաստող արտադրական ենթակառուցվածքների վերականգնման և արդիականացման համալիր ծրագրերի մշակում և իրագործում
 - Խաղող վերամշակող կազմակերպությունների արտադրական հզորությունների օգտագործման մակարդակի բարձրացում
- Ուղղորտի երկարատև և կայուն զարգացման նախնական մշակում
 - Մարզում գինու գրոսառքչություն նախնական զարգացում
- Մարզի արտադրանքի իմիջի

Սպառնալիքներ (Threats)

- Օտար պատճառաւ հատկապես նուսակային նուբլում արժեզրկումը
 - Ժողովրդագրական ցուցանիշների բացասական միտումները
- Գինու ներքին սպառման ցածր մակարդակը բնակչության մեկ շնչի հաշվով
- Ներկրամբ պայմանավորված՝ նյութատեխնիկական ռեսուրսների գների անկայուն և բարձր մակարդակ
 - Հարկաբյուջետային քաղաքականության անբարենպաստ փոփոխություններ
 - Անբարենպաստ բնակչիմայական պայմաններով պայմանավորված ռիսկերի բարձր մակարդակ
 - Վերամշակող կազմակերպությունների անբավարար և անկայուն \$ինանսական ռեսուրսներ
- Արտաքին շուկաներում հայկական գինու ցածր մրցունակությունը՝ պայմանավորված մրցակցության արդի առանձնահատկություններով

<p>բարձրացմանը և բրենդինգին ուղղված շուկայական ռազմավարության մշակում՝ հիմնված մարզի գինեգործության 6000 ամյա պատմության և Արենի քրանձավի առկայության հանգամանքի վրա</p> <ul style="list-style-type: none"> ➤ Արտաքին շուկաների դիվերսիֆիկացում ➤ Գինու սպառման մշակույթի զարգացում ներքին շուկայում 	<ul style="list-style-type: none"> ➤ Գինու արտաքին առևտրի և շուկայավարության կախվածության բարձր մակարդակը ռուսական շուկայից ➤ Խաղողի այգիների մաշվածության բարձր մակարդակ և ոչ լիարժեք մշակույթում
--	--

Գծապատկեր 14. ՅՅ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի SWOT վերլուծության նկարագրիչը:

Գծապատկեր 14-ում ներկայացված SWOT վերլուծության իրականացման համար հիմք են հանդիսացել մարզում գործող խաղողագործության և գինեգործության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների շրջանում մեր կողմից կատարված հարցումների, հետազոտությունների և տարբեր մասնագիտական ու գիտական հրապարակումների վերլուծության արդյունքները: Նշված հետազոտությունները հնարավորություն են տվել բացահայտել ու ՅՅ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի ուժեղ և թուլ կողմերը, ինչպես նաև առկա սպառնալիքների համատեքստում համակողմանիորեն գնահատել ոլորտի զարգացման հնարավորությունները:

Շուկայական հարաբերությունների արմատավորման արդի փուլում, ինչպես ՅՅ մյուս խաղողագործական գոտիներում, այնպես էլ՝ Վայոց ձորի մարզի խաղողագործության ոլորտի զարգացման հիմնախնդիրների շարքում առկա են նաև մի շարք բարդություններ ու դժվարություններ կապված խաղողի բերքի իրացման գործընթացի հետ, ինչը պայմանավորված է իրացմանը նպաստող կառույցների գործունեության վիճակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության և դրա առանձին ճյուղերի դինամիկ զարգացման վրա էական ազդեցություն է ունենում արտադրված արտադրանքի ապրանքայնության մակարդակը: Այդ առումով որևէ ճյուղում, այդ թվում նաև խաղողագործության ճյուղում ապրանքայնության մակարդակի ցուցանիշով, կարծես թե որոշակիորեն բնութագրվում է արտադրության և շրջանառության ոլորտների փոխազդեցության և ներդաշնակ զարգացման մակարդակը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում գույնատնտեսական արտադրանքների շարքում խաղողի ապրանքայնության մակարդակը համարվում է ամենաբարձրներից մեկը և կազմում է շուրջ 90%:

Խաղողի ապրանքայնության մակարդակը ՀՀ հիմնական խաղողագործական մարզերում 2013-2018թթ. կտրվածքով ներկայացված է աղյուսակ 10-ում:

**Խաղողի ապրանքայ նու թյ ան մակարդակը 2013-2018թթ. ՀՀ հիմնական
խաղողագործական մարզերում (%)⁸⁴**

Մարզը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Ար ագ ած ո տ ն	90.8	90.8	94.0	65.0	83.8	76.3
Ար ար ատ	87.0	86.2	91.2	90.5	87.4	90.5
Ար մ ա վ ի ր	77.0	79.2	95.3	95.8	96.3	97.5
Տ ա վ ու շ	66.1	70.3	71.5	50.3	65.7	59.4
Վ ա յ ո ճ ծ ո թ	88.2	88.7	73.9	67.6	85.9	82.7
Հ Հ	80.3	80.8	90.1	90.0	89.8	90.2

Աղյ ու ս ա կ 10-ի տվյ ալ ն եր ի վ եր լ ու ծ ու թ յ ու ն ի ճ պ ար գ է դ առ ն ու մ, ո թ վ եր ջ ի ն վ եց տ ար ի ն եր ի կ տր վ ած ք ո վ խ աղ ող ի ա պր ա ն ք ա յ ն ու թ յ ան մ ա կ ար դ ա կ ի ց ու ց ա ն ի շ ն ը ս տ մ ար գ եր ի է ա պ է ս տ ա տ ա ն վ ու մ է: Ն շ վ ած ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ած ու մ Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ է տ ու թ յ ու ն ու մ խ աղ ող ի ա պր ա ն ք ա յ ն ու թ յ ան մ ի ջ ի ն մ ա կ ար դ ա կ ի ա մ է ն ա ք ար ձ ր ց ու ց ա ն ի շ ն ար ձ ա ն ա գ ր վ էլ է 2018թ.՝ 90.2%, ի ս կ ա մ է ն ա ց ած ր ը՝ 2013 թ վ ա կ ա ն ի ն՝ 80.3%: Ս ա կ ա յ ն, հ ար կ է ն շ է լ, ո թ ն շ վ ած ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ած ու մ խ աղ ող ի ա պր ա ն ք ա յ ն ու թ յ ան մ ա կ ար դ ա կ ի ց ու ց ա ն ի շ ն ը ն դ հ ա ն ու ր առ մ ա մ ք ց ու ց ա ք եր ե լ է ա ճ ի մ ի տ ու մ, մ ա ս ն ա վ որ ա պ է ս 2018 թ վ ա կ ա ն ի ն 2013թ. ն կ ա տ մ ա մ ք ա յ ն ա ճ է լ է 9.6 տ ո կ ո ս ա յ ի ն կ ե տ ո վ, ի ն չ ը վ կ ա յ ու մ է ա յ ն մ ա ս ի ն, ո թ խ աղ ող ի ի ր ա ց մ ա ն ո լ որ տ ու մ ա ս տ ի ճ ա ն ա ք ար ն կ ա տ վ ու մ է դ ր ա կ ա ն տ ե դ ա շ ար ժ: Ի ն չ վ եր ա ք եր ու մ է խ աղ ող ի ա պր ա ն ք ա յ ն ու թ յ ան մ ա կ ար դ ա կ ի ն առ ա ն ձ ի ն մ ար գ եր ի կ տր վ ած ք ո վ, ա պ ա ա կ ն հ ա յ տ է, ո թ Հ Հ խ աղ ող ա գ ո Ր ծ ա կ ա ն հ ի մ ն ա կ ա ն մ ար գ եր ի ց մ ի ա յ ն Ար մ ա վ ի թ ի մ ար գ ու մ է, ո թ խ աղ ող ի ա պր ա ն ք ա յ ն ու թ յ ան մ ա կ ար դ ա կ ի ց ու ց ա ն ի շ ի կ ա յ ու ն ա ճ ի մ ի տ ու մ է ար ձ ա ն ա գ ր վ էլ, մ ա ս ն ա վ որ ա պ է ս 2018 թ վ ա կ ա ն ի ն ն շ վ ած ց ու ց ա ն ի շ ը 2013թ. ն կ ա տ մ ա մ ք ա ճ է լ է 20.5 տ ո կ ո ս ա յ ի ն կ ե տ ո վ՝ 77%-ի ց հ ա ս ն է լ ո վ

⁸⁴ Հ ա յ ա ս տ ա ն ի ա գ գ ա յ ի ն վ ի ճ ա կ ա գ ր ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ու ն: Հ ր ա պ ար ա կ ու մ ն եր ը ս տ տ ար ի ն եր ի: Գ յ ու ղ ա տ ն տ ե ս ա կ ա ն ար տ ա դ ր ա ն ք ի ի ր ա ց ու մ ը (օ գ տ ա գ ո Ր ծ ու մ ը) ա ն հ ա տ ա կ ա ն (գ յ ու ղ ա ց ի ա կ ա ն) տ ն ա յ ի ն տ ն տ ե ս ու թ յ ու ն ն եր ի կ ող մ ի ց 2014, 2015, 2016, 2017, 2018թթ.:

97.5%-ի: Արմավիրի մարզում խաղողի ապրանքայնության մակարդակի բարձր ցուցանիշը պայմանավորված է մարզում առկա վերամշակող կազմակերպությունների ինչպես մեծ քանակով, այնպես էլ մեծ հզորություններով և համեմատաբար մեծածավալ մթերումներով: Դիտարկվող ժամանակահատվածում խաղողի ապրանքայնության մակարդակի ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են Տավուշի մարզում, որտեղ 2016 թվականին նշված ցուցանիշը կազմել է 50.3%, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ մարզում առկա են քիչ թվով վերամշակող կազմակերպություններ, որոնցից համեմատաբար խոշոր են «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ն և «Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ-ն: Հայաստանի Հանրապետությունում խաղողագործական հիմնական մարզերից տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքների ամենաբարձր տեսակարար կշիռներ ունեցող մարզերը՝ Տավուշի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերն են, որտեղ նշված ցուցանիշները կազմում են հապատասխանաբար՝ 91.6; 78.3 և 77.6%: Ակնհայտ է՝ որքան բարձր է տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքների մասնաբաժինը, այնքան բարձր պետք է լինի ապրանքայնության մակարդակը, մինչդեռ ուսումնասիրվող մարզում, ինչպես և Տավուշի մարզում խաղողի ապրանքայնության մակարդակը ցածր է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող մարզում արտադրվող խաղողի շուրջ 70%-ը մթերվում է Երևանամերձ գոտու վերամշակող կազմակերպությունների կողմից, ինչն էլ, կապված տրանսպորտային փոխադրումների մեծ ծավալի և հեռավորությունների հետ, ունենում է իր բացասական ազդեցությունը մարզի խաղողի ապրանքայնության մակարդակի վրա: Մեր գնահատմամբ, ինչպես Տավուշի, այնպես էլ Վայոց ձորի մարզերում խաղողի ապրանքայնության մակարդակի վրա, բացի համապատասխան մարզերում գործող վերամշակող կազմակերպությունների փոքրածավալ մթերումներից, բացասաբար է անդրադառնում նաև այն հանգամանքը, որ նշված երկու մարզերում էլ տնային պայմաններում ավանդաբար ավելի շատ են գինիներ արտադրում, քան մյուս մարզերում:

Վերոնշյալ գործոններից բացի, գյուղատնտեսական

արտադրանքի, այդ թվում նաև խաղողի, մասնավորապես սեղանի և ունիվերսալ սորտերի խաղողի ապրանքայնության մակարդակի վրա էական ազդեցություն է ունենում նաև արտադրանքի պահպանման գործընթացների հետևապես խնդիրները:

Գյուղատնտեսական արտադրանքների, մասնավորապես բուսաբուծական արտադրանքի պահպանումը միջոցառումների համակարգ է, որն ուղղվում է արտադրանքի որակի նվազման, քաշի և ֆիզիկական ու քիմիական հատկանիշների կորստի կանխարգելմանը: Լավ ձևավորված պահպանման համակարգը ապահովում է տարվա ընթացքում բազմաթիվ տեսակի շուտ փչացող մթերքների սպառումը և թույլ է տալիս առավելագույնս հավասարակշռել մարդու սննդակարգը⁸⁵:

Բուսաբուծական մթերքների պահպանման եղանակները բազմազան են, որոնք տարանջատվում են տարբեր հատկանիշներով, որոնցից են՝

- մշտական կամ ժամանակավոր լինելը,
- ցրտի օգտագործումը կամ դրա առկայությունը,
- պահեստային կարողության ծավալը,
- պահեստի հատակագծային լուծումները,
- մթերքի տեղավորման ձևը,
- օդազառափոխանակման եղանակը,
- պահեստի մթնոլորտի կազմը,
- պահպանվող բուսաբուծական մթերքների կենսաբանական վիճակը և այլն⁸⁶:

Տնտեսական արդյունավետությանը, որը ապահովում է տնտեսությանը մթերքը երկարատև պահպանման դնելուց հետո, կարելի է որոշել հետևյալ բանաձևով⁸⁷

$$S_w = (Q_p - Q_p - \bar{O}_w) \times \bar{O}_p - U_w$$

որտեղ՝ Q_p -ն՝ մթերքի իրացման ժամանակ շուկայում ձևավորված գինն է, դրամ/տոննա,

⁸⁵ Малыш М.Н. Аграрная экономика: Учебник. 2-е изд.- СПб.: Изд-во "Лань", 2002.- С. 527

⁸⁶ Սնային Գ. Գ. Պտուղների և բանջարեղենի սառնարանային տեխնոլոգիան.- Երևան: «Ասողիկ», 2001.- էջ 145

⁸⁷ Малыш М. Н. Аграрная экономика: Учебник. 2-е изд.- СПб.: Изд-во "Лань", 2002.- С. 528

Q_p -ն՝ մասսայական բերքահավաքի ժամանակ շուկայում
մթերքի ձևավորված գինն է, դրամ/տոննա,
 \bar{O}_{uy} -ն՝ մթերքի պահպանման ծախսերն են, դրամ/տոննա,
 \bar{O}_h -ն՝ իրացված արտադրանքի ծավալը՝ տոննա,
 L_{uy} -ն՝ պահպանման ժամանակ կորուստներն են
արժեքային արտահայտությամբ, դրամ:

Հայաստանի Հանրապետության պայմաններում պտուղ-
բանջարեղենի երկարատև պահպանման ամենահին և արդյունավետ
եղանակներից մեկը մառաններն են եղել, որոնք մինչ օրս չեն
կորցրել իրենց նշանակությունը: Դրանցում բանջարեղենը
զամբյուղներով կամ պարկերով շարվում է գետնին դրված փայտյա
ցանցի վրա, պտուղները ևս զամբյուղներով կամ արկղերով
դասավորվում են դարակների վրա, իսկ սեղանի խաղողը՝ կախվում
հատուկ այդ նպատակի համար ձգված լարերի վրա⁸⁸:

Գյուղատնտեսական մթերքների իրացումը իրենից
ներկայացնում է արտադրողից մինչև սպառողը շարժընթացում
տնտեսավարող սուբյեկտի տնտեսական ակտիվությունը: Իրացման
արդյունավետությունը բնութագրվում է աշխատանքի հասարակական
բաժանման մեջ գյուղատնտեսության ինտեգրման մակարդակով⁸⁹:

Շուկայական հարաբերություններին անցման պայմաններում
ձևավորվել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման մի շարք
ուղիներ և ստեղծված են անհրաժեշտ պայմաններ դրանց
գործունեության համար: Մթերքի իրացման ուղին իրենից
ներկայացնում է կազմակերպությունների, անձանց
ամբողջությունը, որոնք հանդիսանում են իրացման գործընթացի
միջնորդներ կամ մասնակիցներ և իրենց վրա են վերցնում այլ
անձանց՝ որպես սեփականություն փոխանցելու այս կամ այն ապրա-
նքը: Այդ համակարգը տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպական
և այլ գործընթացների ամբողջությունն է, որոնք փոխգործակցում

⁸⁸ Սևալան Գ. Գ. Պտուղների և բանջարեղենի սառնարանային տեխնոլոգիան. - Երևան: <<Ասոդիկ>>, 2001.- էջ 145

⁸⁹ Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений / Н. Я. Коваленко, Ю. И. Агрибов, Н. А. Серова и др.- М.: ЮРКНИГА, 2004.-с. 313

են արտադրանքն արտադրողից սպառողին հասցնելու գործընթացում⁹⁰:

Ուսումնասիրությանը ները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում արտադրված խաղողն իրացվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի բաշխման ուղիներով, որոնք ընդհանուր առմամբ հետևյալն են՝

- իրացում արտադրողների կողմից գյուղատնտեսական մթերքների շուկայում,
- իրացում միջնորդ կազմակերպությաններին կամ անհատ միջնորդներին,
- իրացում վերամշակող կազմակերպությաններին,
- իրացում արտահանման գործընթաց իրականացնող կազմակերպությաններին և անհատ տնտեսավարողներին:

Մարզում արտադրված խաղողի մի մասը տրվում է աշխատանքի դիմաց՝ որպես բնամթերային վարձատրության, մի մասն էլ՝ ուղղվում է ապրանքափոխանակության:

Մարզում խաղողագործության զարգացմանն էապես խոչընդոտում է խաղողի այգետարածքների չափազանց փոքր չափերը, որոնք հնարավորություն չեն տալիս արդյունավետ տնտեսավարման և արտադրատնտեսական գործունեության պառշաճ իրականացման ու բարձր արդյունավետության ապահովման:

Աղյուսակ 10-ում ներկայացված տվյալների վերլուծությանից պարզ է դառնում, որ Վայոց ձորի մարզի համայնքներում խաղող արտադրող տնտեսությանների բաշխվածությունը՝ ըստ այգետարածքների չափերի, խիստ տարբեր է: Մասնավորապես, մարզի 12 համայնքներում շուրջ 1950 խաղող արտադրող տնտեսությանների ընդհանուր քանակի շուրջ կեսը (984 տնտեսության) բաժին է ընկնում Աղավնաձոր, Գլաձոր և Արենի համայնքներին, համապատասխանաբար՝ 372; 322; և 290, ինչը վկայում է այն մասին, որ մարզում խաղողագործության զարգացումը մեծապես պայմանավորված է նշված համայնքներով:

Հարկ է նշել, որ Գլաձոր համայնքի 322 խաղող արտադրող

⁹⁰ Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н. Я. Коваленко, Ю. И. Агрибов, Н. А. Серова и др.- М.: ЮРКНИГА, 2004.-с. 314-315

տնտեսություններից 231-ը կամ 71.7%-ը ունեն 0.1հա-ից էլ պակաս տարածություն:

Ինչ վերաբերում է մարզի համեմատաբար խոշոր տնտեսություններ ունեցող համայնքներին, ապա հարկ է նշել, որ այդ առումով առաջատարը Աղավնաձոր համայնքն է, որտեղ 372 խաղող արտադրող տնտեսություններից միայն մեկն է զբաղեցնում մինչև 0.1հա տարածություն, մինչդեռ 220-ը կամ 59.1%-ը՝ 0.5-0.99հա: Փաստորեն, մարզում առկա է 1հա-ից ավելի խաղողի այգետարածք ունեցող ընդամենը 33 տնտեսություն, որից 25-ը կամ 75.8%-ը գտնվում է Աղավնաձոր համայնքում, ընդ որում՝ այդ 25 տնտեսություններից 24-ը զբաղեցնում է 1-1.99հա տարածություն, իսկ 1-ը՝ 5-9.99հա: Ըստ էության, վերլուծությունից պարզ է դառնում, որ մարզում խաղողագործությունը զարգացած է Աղավնաձոր համայնքում, որը համարվում է Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման առաջատարը և զարգացման ամենամեծ ներուժ ունեցող համայնքը:

Այդուսակ 11-ում ներկայացված է ՀՀ Վայոց ձորի մարզի ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսություններն ըստ խաղողի այգիների չափերի

Այդուսակ 11.

ՀՀ Վայոց ձորի մարզի ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսություններն ըստ խաղողի այգիների չափերի (ներառյալ տնկարանները) (միավոր)⁹¹

	Տնտեսությունների, ընդամենը	այդ թվում ըստ խաղողի այգիների չափերի (հա)								
		մինչև 0.1	0.1-0.19	0.2-0.49	0.5-0.99	1-1.99	2-2.99	3-4.99	5-9.99	10-19.99
Վայոց ձորի մարզ	1949	508	591	564	254	29	1	1	1	1
այդ թվում՝										

⁹¹ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:

Ք. Եղեգնածոր	67	5	19	36	7	-	-	-	-	-
Աղավնածոր	372	1	8	117	220	24	-	-	1	-
Արենի	290	25	93	151	16	3	1	1	-	1
Գետափ	52	10	10	32	-	-	-	-	-	-
Գլածոր	322	231	69	20	2	-	-	-	-	-
Ելփին	160	61	85	13	1	-	-	-	-	-
Խաչիկ	205	58	84	62	1	-	-	-	-	-
Հորս	65	37	24	3	-	-	-	-	-	-
Մալիշկա	165	7	82	76	-	-	-	-	-	-
Շատին	49	16	25	8	1	-	-	-	-	-
Ռինդ	104	28	52	22	1	1	-	-	-	-
Վերնաշեն	85	26	34	22	2	-	-	-	-	-

ՀՀ հիմնական խաղողագործական մարզերի ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսության ունեցող քանակն ըստ խաղողի այգիների չափերի ներկայացված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

ՀՀ հիմնական խաղողագործական մարզերի ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսության ունեցող ըստ խաղողի այգիների չափերի (ներառյալ տնկարանները), (միավոր)⁹²

	Տնտեսության ունեցող, ընդամենը	<i>այդ թվում ըստ խաղողի այգիների չափերի (հա)</i>								
		մինչև 0.1	0.1-0.19	0.2-0.49	0.5-0.99	1-1.99	2-2.99	3-4.99	5-9.99	10-19.99
ՀՀ, ընդամենը	26901	3169	5954	10469	5561	1415	207	80	34	9
Տեսակարար կշիռը	100	11.8	22.1	38.9	20.7	5.3	0.8	0.3	0.1	0.03
<i>այդ թվում՝</i>										


⁹²Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:

Արագածոտն	2973	339	602	1056	596	287	78	14	1	-
Տեսակարար կշիռը	100	11.4	20.2	35.5	20.0	9.7	2.6	0.5	0.03	-
Արարատ	8437	230	1306	4284	2161	380	42	20	12	1
Տեսակարար կշիռը	100	2.7	15.5	50.8	25.6	4.5	0.5	0.2	0.1	0.01
Արմավիր	5775	127	552	2480	1870	605	74	44	14	7
Տեսակարար կշիռը	100	2.2	9.6	42.9	32.3	10.5	1.3	0.8	0.2	0.1
Վայոց ձոր	1949	508	591	564	254	29	1	1	1	1
Տեսակարար կշիռը	100	26.1	30.3	28.9	13.0	1.5	0.05	0.05	0.05	0.05
Տավուշ	6439	1682	2625	1643	403	74	10	1	1	-
Տեսակարար կշիռը	100	26.1	40.8	25.5	6.3	1.1	0.2	0.01	0.01	-

Առյուսակ 11-ի տվյալների վերլուծությանը կարգ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության հիմնական խաղողագործական մարզերի կտրվածքով փոքր չափերի այգետարածքներ ունեցող տնտեսությունները անհամեմատ մեծ մասնաբաժիններ են կազմում Վայոց ձորի և Տավուշի մարզերում, ընդ որում երկու մարզում էլ նույն մասնաբաժինն է արձանագրվել՝ 26.1%: Վայոց ձորի և Տավուշի մարզերում մինչև 0,2հա այգետարածքների վրա տնտեսավարում են իրականացնում խաղող արտադրող տնտեսությունների համապատասխանաբար՝ 56.4 և 66.9%-ը, մինչդեռ խաղողագործական զարգացած մարզերում՝ Արմավիրի և Արարատի, նույն ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 11.8 և 18.2%: Իսկ, ինչ վերաբերում է համեմատաբար ավելի մեծ, մասնավորապես 1-ից մինչև 2հա տարածությունների վրա խաղող արտադրող տնտեսավարողների զբաղեցրած մասնաբաժինն ընդհանուր տնտեսությունների կառուցվածքում, ապա պատկերը հետևյալն է՝ եթե Վայոց ձորի և Տավուշի մարզերում նշված ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 1.5 և 1.1%-ը, ապա Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ 9.7; 4.5 և 10.5%-ը:

Այսպիսով կատարված վերլուծությանը կարգ է դառնում, որ ուսումնասիրվող մարզում խաղողագործության զարգացման էական խոչընդոտներից մեկը հանդիսանում է խաղող արտադրող


տնտեսավարող սուբյեկտների չափազանց փոքր չափերը: Փաստորեն, մարզում խաղողագործական տնտեսությունների ընդհանուր քանակի շուրջ 56.4%-ը արտադրություն են իրականացնում մինչև 0.2հա տարածությամբ խաղողի այգիներում, 28.9%-ը՝ 0.2-0.49հա, 13%-ը՝ 0.5-0.99հա, իսկ 1-2 հա տարածության վրա, որի դեպքում կարելի է համեմատաբար արդյունավետ տնտեսավարում իրագործել, խաղողի այգիներ են մշակում խաղողագործական տնտեսությունների ընդամենը 1.5%-ը միայն (գծապատկեր 15):



Գծապատկեր 15. Վայոց ձորի մարզի խաղող արտադրող տնտեսությունների կառուցվածքը՝ ըստ չափերի, %⁹³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ Վայոց ձորի մարզում ֆիզիկական անձի կարգավիճակով խաղող արտադրող տնտեսավարող սուբյեկտների չափերը զգալիորեն զիջում են նաև ՀՀ միջին ցուցանիշներին (գծապատկեր 16):

⁹³Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:



Գծապատկեր 16. ՀՀ խաղող արտադրող տնտեսությունների կառուցվածքը՝ ըստ չափերի, %⁹⁴:

Բացի խաղողագործական տնտեսությունների չափազանց փոքր չափերից, Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանը խոչընդոտող գործոններից, մեր գնահատմամբ պակաս կարևոր է նաև արտադրական ենթակառուցվածքների անբավարար մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների անբավարարությունն առաջին հերթին վերաբերում է ոռոգման համակարգին, քանի որ ոռոգման համակարգը ԽՍՀՄ տարիներից ի վեր կապիտալ վերանորոգման և արդիականացման չի ենթարկվել, ուստի արդի պայմաններում խաղողագործության զարգացման համատեքստում քայքայված ոռոգման համակարգը դարձել է գլխավոր սպառնալիքներից մեկը: Ոռոգման հատկապես փակ համակարգերի բացակայությունն ու քայքայված վիճակը հնարավորություն է տալիս մարզում ոռոգման արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգի ներդրման աշխատանքների իրականացմանը: Տվյալ իրավիճակում մարզում դեռևս սուր է ոռոգման ջրի անբավարարության հարցը, ինչը մեր դիտարկմամբ հանդիսանում է խաղողագործության զարգացման արդի պայմաններում առկալրջագույն հիմնախնդիրներից մեկը:

⁹⁴Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:

3.2. ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բաղեն-Վյոլերտենբերգի հողի խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծության ու նրա

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում գինեգործությունը համարվում է տնտեսության զարգացող ճյուղերից մեկը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կան որոշակի գործոններ, որոնք սահմանափակում են այդ աճը:

Վայոց ձորի մարզը կարևոր դեր է խաղում Հայաստանի գինեգործության ոլորտում: Հենց այդ մարզի Արենի գյուղում է անցկացվում ամենամյա գինու փառատոնը: Բացի այդ 2016թ. ամերիկյան CNN լրատվամիջոցը Հայաստանի Վայոց ձորի մարզը ներառել է աշխարհի 15 լավագույն գինեգործության վայրերի ցանկում⁹⁵:

Խաղողի արտադրությունը և վերամշակումը առանցքային նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության տնտեսության և դրահետագա զարգացման համար, իսկ խաղողագործությունը Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության մասնագիտացված ավանդական ճյուղերից է, հետևաբար ճյուղի զարգացման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների մշակման համար էական նշանակություն կունենա ոլորտի հիմնական ցուցանիշների դինամիկայի և փոխկախվածության վերլուծությունը:

ՀՀ, Վայոց ձորի մարզի, ԳԴՀ և Բաղեն-Վյոլերտենբերգի հողի խաղողագործության ճյուղի 2006-2018թթ. հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում հնարավոր կլինի բացահայտել հիմնական ցուցանիշների զարգացման և փոխկախվածությունների օրինաչափությունները:

Հայաստանի Հանրապետության և Վայոց ձորի մարզի խաղողի այգետարածքները և համախառն բերքը ներկայացված է աղյուսակ 13-ում:

⁹⁵ Malathronas, J. (12.03.2016). World's best wine tours and trails, CNN Travel՝ <http://edition.cnn.com/travel/article/wine-trail-destinations/index.html>:

Հաշվարկները ցույց են տվել, որ 2006-2018թթ. ՀՀ-ում խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով կրճատվել է 16262.7 ցենտներով կամ 0.85%-ով. իսկ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով ավելացել է 2133.5 ցենտներով կամ 5.42%-ով: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2016թ. 2015թ. համեմատությամբ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Վայոց ձորի մարզում գրանցվել է խաղողի համախառն բերքի նշանակալի կրճատում: Այդ տարիների համեմատությամբ ՀՀ-ում խաղողի համախառն բերքը կրճատվել է 1298365 ցենտներով կամ 45.1%-ով, իսկ Վայոց ձորում՝ 37308 ցենտներով կամ 65.4%-ով: Այս բացասական միտումը անմիջականորեն անդրադարձել է խաղողի բերքատվության միջին մակարդակի փոփոխության վրա: 2016թ.-ին 2015թ. համեմատությամբ ՀՀ-ում խաղողի բերքատվության միջին մակարդակը նվազել է 41.6%-ով, իսկ Վայոց ձորի մարզում՝ 65.9%-ով:

**Հայ աստանի Հանրապետության և Վայոց ձորի մարզի խաղողի
այ գետարածքները և համախառն բերքը 2006-2018թթ.⁹⁶**

Տարիներ	Խաղողի տարածությունները, հեկտար		Համախառն բերքը, ցենտ.	
	ՀՀ	Վայոց ձոր	ՀՀ	Վայոց ձոր
2006թ.	14098	716	1990520	28956
2007թ.	14097	737	2165383	31701
2008թ.	14390	738	1841499	24002
2009թ.	14292	738	2070384	30205
2010թ.	14613	809	2213825	38085
2011թ.	14478	826	2286950	42105
2012թ.	15723	885	2378181	44035
2013թ.	16065	911	2405918	53240
2014թ.	16323	916	2574299	51110
2015թ.	16389	972	3084013	57085
2016թ.	16231	991	1785648	19777
2017թ.	14846	1001	2099306	40652
2018թ.	14949	1014	1795368	54558

⁹⁶ «Գյ ու ղատն տեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը», վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԱՎՃ, Երևան 2009-2018թթ.

ԳԴՅ-ՈՒՄ և Բադեն-Վյոլրտենբերգի հողի խաղողի այգետարածքները և համախառն բերքը ներկայացված է աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14.

ԳԴՅ-ՈՒՄ և Բադեն-Վյոլրտենբերգի հողի խաղողի այգետարածքները և համախառն բերքը 2006-2018թթ.⁹⁷


Տարիներ	խաղողի այգետարածքները, հեկտար		Համախառն բերքը, հազար տոննա	
	ԳԴՅ	Բադեն-Վյոլրտենբերգի հող	ԳԴՅ	Բադեն-Վյոլրտենբերգի հող
2006թ.	99128	27530	1205.4	458.6
2007թ.	99891	27418	1378.5	355.6
2008թ.	99715	27417	1330.2	342.7
2009թ.	100124	27271	1215.5	312.0
2010թ.	99925	27258	938.3	253.5
2011թ.	99781	27165	1231.3	321.9
2012թ.	99571	27174	1207.8	314.1
2013թ.	99424	27194	1121.5	271.7
2014թ.	100098	27161	1225.2	319.7
2015թ.	99924	27229	1180.1	304.7
2016թ.	100017	27118	1206.2	331.1
2017թ.	100025	27119	1212.1	335.1
2018թ.	100028	27121	1215.0	335.2

Աղյուսակ 14-ում ներկայացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ 2009-2018թթ. ԳԴՅ-ում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 74.9 հեկտարով, իսկ խաղողի համախառն բերքը՝ 800 տոննայով կամ 0.07%-ով:

Այդ փոփոխություններին զուգահեռ Բադեն-Վյոլրտենբերգի հողում կրճատվել են խաղողի տարածությունները և համախառն

⁹⁷ Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>

բերքը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի այգիների տարածությունները տարեկան միջին հաշվով կրճատվել են 34.08 հեկտարով կամ 0.12%-ով, իսկ խաղողի համախառն բերքը՝ 10.29 հազար տոննայով կամ 2.58%-ով:




Գծապատկեր 17. ԳՂՅ խաղողի համախառն բերքի կառուցվածքում Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողի համախառն բերքի տեսակարար կշիռները 2006-2018թթ.,%⁹⁸:

Գծապատկեր 17-ում արտացոլված տվյալներից պարզ է դառնում, որ ԳՂՅ խաղողի համախառն բերքի ¼-ից ավելին արտադրվում է Բադեն Վյուրտեմբերգ տարածաշրջանում: 2006թ. երկրի խաղողի համախառն բերքի կառուցվածքում Բադեն Վյուրտեմբերգ տարածաշրջանի խաղողի համախառն բերքի մասնաբաժինը կազմել է 38.0%, 2007թ. կրճատվել է՝ դառնալով 25.8%, սակայն հաջորդող տարիներին այն նորից սկսել է ավելանալ, և 2018թ. կազմել է 27.6%:

Գծապատկեր 18-ում ներկայացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող տարիներին ԳՂՅ խաղողի այգիների տարածությունների կառուցվածքում Բադեն Վյուրտեմբերգ տարածաշրջանի խաղողի այգետարածքների մասնաբաժինը գրեթե չի փոփոխվել: 2018թ. 2006թ. համեմատությամբ այն կրճատվել է 0.7 տոկոսային կետով:

⁹⁸ Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>




Գծապատկեր 18. ԳԴՅ խաղողի այգետարածքների կառուցվածքում Բադեն Վյուրտեմբերգ տարածաշրջանի խաղողի այգետարածքների տեսակարար կշիռները 2006-2018թթ.,%⁹⁹:

Խաղողագործության ճյուղի համակողմանի վերլուծության համար էական նշանակություն ունի որակական գործոնների, մասնավորապես բերքատվության մակարդակի համեմատական վերլուծությունը:

Գծապատկեր 19-ում ներկայացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ 2006-2018թթ. ՅՅ-ում խաղողի բերքատվության միջին մակարդակը տարեկան միջին հաշվով կրճատվել է 1.75 g/հա-ով կամ 1.34%-ով՝ 141.2g/հա-ից նվազելով մինչև 120.1g/հա: Նույն ժամանակահատվածում ԳԴՅ-ում խաղողի բերքատվության միջին մակարդակը տարեկան կրճատվել է 0.008g/հա-ով կամ 0.007%-ով, իսկ Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի բերքատվության միջին մակարդակը կրճատվել է 3.58 g/հա-ով կամ 2.45%-ով՝ 2006թ.՝ 166.6 g/հա-ից նվազելով մինչև 2018թ.՝ 123.6 g/հա-ի: Գծապատկեր 19-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ՅՅ Վայոց ձորի մարզում գրանցվել է խաղողի բերքատվության միջին մակարդակի աճ, չնայած այս ցուցանիշով մարզը մի քանի անգամ զիջում է ՅՅ, ինչպես նաև համեմատվող ԳԴՅ և Բադեն-Վյուրտեմբերգի հողի համապատասխան ցուցանիշին:

⁹⁹ Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>



Գծապատկեր 19. Խաղողի բերքատվության մակարդակները ՀՀ-ում, ՀՀ Վայոց ձորի մարզում, ԳԴՀ-ում և ԳԴՀ Բաղեն Վյուրտեմբերգ տարածաշրջանում 2006-2018թթ.^{100,101}:

2006-2018թթ. ՀՀ Վայոց ձորի մարզում Խաղողի բերքատվության միջին մակարդակը տարեկան միջին հաշվով ավելացել է 1.15 g/հա-ով կամ 2.5%-ով 40.0 g/հա-ից հասնելով մինչև 53.8g/հա-ի:

Գծապատկեր 19-ում ներկայացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող տարիներին ՀՀ-ում Խաղողի բերքատվության մակարդակը հիմնականում գերազանցում է Վայոց ձորի մարզի, ԳԴՀ-ի և Բաղեն-Վյուրտեմբերգի հողի ցուցանիշին: ՀՀ-ում Խաղողի բերքատվության մակարդակը Վայոց ձորի մարզի Խաղողի բերքատվության մակարդակին գերազանցել է 2.2-ից մինչև 3.5, իսկ առանձին դեպքում՝ 2016թ.՝ մինչև 5.5 անգամ: ԳԴՀ-ի և Բաղեն-Վյուրտեմբերգի հողի Խաղողի բերքատվության միջին մակարդակի հետ համեմատած ՀՀ հանրապետական ցուցանիշը գերազանցում է 1.2-1.5 անգամ, միայն որոշ տարիներին է այն զիջել, վերջինս մեր գնահատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում մշակվող Խաղողի սորտերը բարձր բերքատու

¹⁰⁰ Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>

¹⁰¹ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը», վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2009-2018թթ.

են, ինչպես նաև պայմանավորված է վիճակագրական հաշվառման բացթողումներով և երկու երկրների վիճակագրական հաշվառման մեթոդաբանություների տարբերություներով:

Ուսումնասիրվող ցուցանիշների դինամիկայի առանձնահատկությունների բացահայտման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և մոդելավորել դրանց զարգացման միտումները: Վերլուծություները ցույց են տվել, որ ուսումնասիրվող երկրներում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշների զարգացման միտումները նպատակահարմար է ներկայացնել ուղիղ գծի և երկրորդ կարգի կորի ֆունկցիաների միջոցով.

$$y_t = a_0 + a_1 t + e_t \quad (1),$$

$$y_t = a_0 + a_1 t + a_2 t^2 + e_t \quad (2),$$

որտեղ

y_t - ուսումնասիրվող երևույթի մակարդակն է t -րդ տարում,

t - ժամանակի նշանակումներն են ($t=1;2;3;....n$),

$a_0; a_1; a_2$ - պարամետրերն են,

e_t - պատահական բաղադրիչն է¹⁰²:

Այդ ուսակ 15-ում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2006-2018թթ. ՀՀ-ում և ԳԴՀ-ում, բացի Վայոց ձորի մարզի խաղողի այգիների տարածություններից, խաղողի տարածությունները, համախառն բերքը և բերքատվության մակարդակը բնութագրվել են անկայուն դինամիկայով, որի պատճառով այդ ժամանակային շարքերի տրենդները ներկայացվել են երկրորդ կարգի կորերով:

Տրենդը ներկայացնող մոդելի համաձայն, 2006-2018թթ. ՀՀ-ում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 579.8 հեկտարով ($a_1 = 579.8$), սակայն այն բնութագրվել է տեմպերի դանդաղեցմամբ ($a_2 = -30.61$): Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով ավելացել է 22.51 հազար տոննայով ($a_1 = 22.51$), որը նույնպես ունեցել է տեմպերի

¹⁰² Теория статистики: Учебник/Под ред. проф.Г.Л. Громыко.- 2-е изд., перераб. и доп. –М.: ИНФРА-М, 2005. – ст. 309

դանդադեցում ($a_2 = -1.52$): Այս ցուցանիշների փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում խաղողի բերքատվության մակարդակը տարեկան ավելացել է 9.15 g/հա-ով ($a_1 = 9.15$), սակայն նույնպես ունեցել է տեմպերի դանդադեցում ($a_2 = -0.7$):

Ըստ տրենդը ներկայացնող մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 28.13 հեկտարով ($a_1 = 28.13$): Խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով ավելացել է 0.488 հազար տոննայով ($a_1 = 0.488$), սակայն բնութագրվել է տեմպերի դանդադեցմամբ ($a_2 = -0.02$): Վայոց ձորի մարզում խաղողի բերքատվության մակարդակը տարեկան միջին հաշվով բարձրացել է 4.45 g/հա-ով ($a_1 = 4.45$), որը ունեցել է դանդադեցման բնույթ ($a_2 = -0.28$):

Ժամանակային շարքի զարգացման միտումը ներկայացնող տրենդի մոդելի համաձայն, 2006-2018թթ. ԳԴՀ-ում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 65.64 հեկտարով ($a_1 = 65.64$), սակայն բնութագրվել են տեմպերի դանդադեցմամբ ($a_2 = -2.07$): Նույն ժամանակահատվածում ԳԴՀ-ում խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով կրճատվել է 44.49 հազար տոննայով ($a_1 = -44.49$), սակայն բնութագրվել է աճի տեմպերի արագացմամբ ($a_2 = 2.85$): Արդյունքում, խաղողի բերքատվության մակարդակը տարեկան միջին հաշվով կրճատվել է 4.59 g/հա-ով ($a_1 = -4.59$), որը բնութագրվել է աճի արագացման տեմպերով ($a_2 = 0.29$):

Աղյուսակ 15-ում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Բադեն-Վյուրտեմբերգի հողում ուսումնասիրվող տարիներին խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով կրճատվել են 82.35 հեկտարով ($a_1 = -82.35$), սակայն բնութագրվել են աճի տեմպերի արագացմամբ ($a_2 = 3.75$): Խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով կրճատվել է 42.88 հազար տոննայով, ($a_1 = -42.88$) սակայն ունենալով աճի տեմպերի արագացում ($a_2 = 2.73$): Համաձայն տրենդը ներկայացնող մոդելի, Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի բերքատվության մակարդակը տարե-

Կան միջին հաշվով կրճատվել է 15.28 g/հառվ ($a_1 = -15.28$), սակայն այն բնութագրվել է արագացման աճի տեմպերով ($a_2 = 0.98$):

Աղյուսակ 15.

Խաղողի տարածությունների, համախառն բերքի և բերքատվության մակարդակի զարգացման միտումը ներկայացնող տրենդի մոդել վորումը 2006-2018թթ. տվյալների հիման վրա

Ցուցանիշներ	ՀՀ	Վայոց ձոր	ԳԴՀ	Բաղեն-Վյուրտենբերգի հող
Խաղողի տարածություններ, հա	$\hat{y}_t = 12985 + 579.8t - 30.61t^2$	$\hat{y}_t = 668.7 + 28.13t$	$\hat{y}_t = 99491 + 65.64t - 2.07t^2$	$\hat{y}_t = 27585 - 82.35t + 3.75t^2$
Խաղողի համախառն բերք, հազար տոննա	$\hat{y}_t = 159.0 + 22.51t - 1.52t^2$	$\hat{y}_t = 2.003 + 0.488t - 0.02t^2$	$\hat{y}_t = 1340 - 44.94t + 2.85t$	$\hat{y}_t = 455.1 - 42.88t + 2.73t^2$
Խաղողի բերքատվության մակարդակ, գ/հա	$\hat{y}_t = 126 + 9.15t - 0.7t^2$	$\hat{y}_t = 31.94 + 4.45t - 0.28t^2$	$\hat{y}_t = 134.6 - 4.59t + 0.29t^2$	$\hat{y}_t = 165.1 - 15.28t + 0.98t^2$

Միմյանց հետ համեմատելով ՀՀ-ում և ԳԴՀ-ում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշների զարգացման միտումները՝ նկատվում է, որ ՀՀ-ում և Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշները տարեկան ունեցել են աճի միտումներ, սակայն բնութագրվել են դանդաղեցման տեմպերով, որը կհանգեցնի նշված ցուցանիշների փաստացի կրճատմանը: ԳԴՀ-ում և Բաղեն-Վյուրտենբերգի հողում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշները ուսումնասիրվող տարիներին ունեցել են կրճատման միտումներ, սակայն դրանք բնութագրվել են աճի տեմպերի արագացմամբ, որը հաջորդող տարիներին կհանգեցնի խաղողի համախառն բերքի և բերքատվության մակարդակի կայուն աճի տեմպերին:

Կիրառելով ռեգրեսիոն կոռելյացիոն մեթոդը 2006-2018թթ. առումով բացահայտենք ՀՀ-ում, Վայոց ձորում, ԳԴՀ-ում և Բաղեն-Վյուրտենբերգի հողում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի և տարածությունների ազդեցությունը: Կատարվել են հետևյալ նշանակումները.

y_t - տրդ տարում խաղողի համախառն բերքը, հազ. տոննա (արդյունքային հատկանիշ),

x_{1t} - տրդ տարում խաղողի տարածությունները, հեկտար (գործոնային հատկանիշ),

x_{2t} - տրդ տարում խաղողի բերքատվության մակարդակ՝ց/հա (գործոնային հատկանիշ):

Ուսումնասիրվող երևույթների միջև կապը ներկայացրել ենք եռաչափ գծային ռեգրեսիոն մոդելի միջոցով՝

$$\hat{y}_t = a_0 + a_1 x_{1t} + a_2 x_{2t},$$

որտեղ՝

\hat{y}_t -արդյունքային հատկանիշի տեսական, հաշվարկային մակարդակն է, $x_{1t}; x_{2t}$ -գործոնային հատկանիշների փաստացի մակարդակներն են,

$a_0; a_1; a_2$ -պարամետրերն են, որոնք որոշվում են նվազագույն քառակուսիների մեթոդով¹⁰³:

Աղյուսակ 16-ում ներկայացված են ռեգրեսիոն-կոռելյացիոն վերլուծության արդյունքները:

¹⁰³ Эконометрика: учебник для магистров /И.И Елисеева [и др.]; под ред. И.И. Елисеевой. – М.: Издательство Юрайт, 2014. – 449с., ст.39-40

Աղյուսակ 16.

Խաղողի համախառն բերքի վրատարածությունների և բերքատվության մակարդակի ազդեցության ռեգրեսիոն-կոռելյացիոն վերլուծության արդյունքները 2006-2018թթ. տվյալներով

Ցուցանիշներ	ՀՀ	Վայոց ձոր	ԳԴՀ	Բաղեն-Վյուրտենբերգի հող
Մոդելի տեսքը	$\hat{y}_t = -233.2 + 0.015x_{1t} + 1.58x_{2t}$ ($t_{b1} = 29$), ($t_{b2} = 67$)	$\hat{y}_t = -3.78 + 0.004x_{1t} + 0.094x_{2t}$ ($t_{b1} = 16.5$), ($t_{b2} = 38.6$)	$\hat{y}_t = -1188.4 + 0.012x_{1t} + 9.98x_{2t}$ ($t_{b1} = 71.4$), ($t_{b2} = 2097$)	$\hat{y}_t = -353.3 + 0.013x_{1t} + 2.74x_{2t}$ ($t_{b1} = 24.5$), ($t_{b2} = 678$)
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R_{yx1x2} = 0.999$	$R_{yx1x2} = 0.997$	$R_{yx1x2} = 0.999$	$R_{yx1x2} = 0.999$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը	$R_{yx1x2}^2 = 0.998$	$R_{yx1x2}^2 = 0.995$	$R_{yx1x2}^2 = 0.998$	$R_{yx1x2}^2 = 0.998$
Մասնակի էլաստիկության գործակիցները	$\Theta_1 = 1.01$ $\Theta_2 = 1.05$	$\Theta_1 = 0.00002$ $\Theta_2 = 0.008$	$\Theta_1 = 0.99$ $\Theta_2 = 1.001$	$\Theta_1 = 1.07$ $\Theta_2 = 1.005$
Մոդելի նշանակալիության լոն	$F = 3212.5$	$F = 1057.9$	$F = 2202060$	$F = 362697$
Հայտանիշների աղյուսակային արժեքները	$F_{crit(\alpha=0.05; k1=2; k2=7)} = 4.1$, $t_{crit(\alpha=0.05; k=10)} = 2.22$			

Աղյուսակ 16-ում ներկայացված վերլուծության արդյունքների համաձայն, ՀՀ-ում խաղողի համախառն բերքի, տարածությունների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 3212.5 > F_{crit} = 4.1$), ինչպես նաև նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները ($t_{b1} = 29; t_{b2} = 67 > t_{crit} = 2.22$): Ուսումնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{yx^2} = 0.999$):

Համաձայն կառուցված եռաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. ՀՀ-ում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացումը նպաստել է համախառն բերքի 15 տոննայով ավելացմանը ($a_1 = 0.015$), իսկ բերքատվության մակարդակի մեկ ց/հա-ով ավելացումը նպաստել է խաղողի համախառն բերքի 1.58 հազար տոննայով ավելացմանը ($a_2 = 1.58$):

Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցների համաձայն, ՀՀ-ում խաղողի տարածությունների մեկ տոկոսով ավելացումը խաղողի համախառն բերքը ավելացրել է 1.01%-ով ($\mathcal{E}_1 = 1.01$), իսկ խաղողի բերքատվության մակարդակի մեկ տոկոսով ավելացումը՝ 1.05%-ով ($\mathcal{E}_2 = 1.05$):

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի է ակնհայտ է ազդում, քան տարածությունների փոփոխությունը:

Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսումնասիրվող տարիներին ՀՀ-ում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.8 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R_{yx^2}^2 = 0.998$):

Կատարված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, տարածությունների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 1057.9 > F_{crit} = 4.1$), ինչպես նաև նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները (

$t_{b1} = 16.5; t_{b2} = 38.6 > t_{crit} = 2.22$): Ուսու մնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{yx1x2} = 0.997$):

Համաձայն կառուցված եռաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացման հետզուգահեռ համախառն բերքը ավելացել է 0.004 հազար տոննայով կամ 4.0 տոննայով ($a_1 = 0.004$), իսկ բերքատվության մակարդակի մեկ ց/հա-ով ավելացման հետզուգահեռ խաղողի համախառն բերքը ավելացել է 0.094 հազար տոննայով կամ 94 տոննայով ($a_2 = 0.094$):

Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, տարածության և բերքատվության մակարդակի միջև փոխկախվածությունները էլաստիկ չեն ($\Theta_1 = 0.00002; \Theta_2 = 0.008$):

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսու մնասիրվող ժամանակահատվածում Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի էականորեն է ազդում, քան տարածությունների փոփոխությունը:

Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսու մնասիրվող տարիներին Վայոց ձորում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.5 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R_{yx1x2}^2 = 0.995$):

Աղյուսակ 16-ում ներկայացված վերլուծության արդյունքների համաձայն, ԳԴՅ-ում խաղողի համախառն բերքի, տարածությունների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 2202060 > F_{crit} = 4.1$), ինչպես նաև նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները ($t_{b1} = 71.4; t_{b2} = 2097 > t_{crit} = 2.22$): Ուսու մնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{yx1x2} = 0.999$):

Համաձայն կառուցված եռաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. ԳԴՅ-ում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացումը նպաստել է համախառն բերքի 0.012 հազար տոննայով կամ 12 տոննայով

ավելացմանը ($a_1 = 0.012$), իսկ բերքատվության մակարդակի մեկ ց/հա-ով ավելացումը նպաստել է խաղողի համախառն բերքի 9.98 հազար տոննայով ավելացմանը ($a_2 = 9.98$):

Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցների համաձայն, ԳԴՅ-ում խաղողի տարածությունների մեկ տոկոսով ավելացումը խաղողի համախառն բերքը ավելացրել է 0.99%-ով ($\Theta_1 = 0.99$), իսկ խաղողի բերքատվության մակարդակի մեկ տոկոսով ավելացումը՝ 1.001%-ով ($\Theta_2 = 1.001$):

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ԳԴՅ-ում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ունեցել է նշանակալի ազդեցություն, քան տարածությունների փոփոխությունը:

Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսումնասիրվող տարիներին ԳԴՅ-ում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.8 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R_{yx1x2}^2 = 0.998$):

Կատարված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի համախառն բերքի, տարածությունների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 362697 > F_{crit} = 4.1$), նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները ($t_{b1} = 24.5; t_{b2} = 678 > t_{crit} = 2.22$): Ուսումնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{yx1x2} = 0.999$):

Համաձայն կառուցված եռաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացման հետ զուգահեռ համախառն բերքը ավելացել է 0.013 հազար տոննայով կամ 13.0 տոննայով ($a_1 = 0.013$), իսկ բերքատվության մակարդակի մեկ ց/հա-ով ավելացման հետ զուգահեռ խաղողի համախառն բերքը ավելացել է 2.74 հազար տոննայով ($a_2 = 2.74$):

Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցների համաձայն, Բադեն-Վյուրտեմբերգի հողում խաղողի

տարածությունների մեկ տոկոսով ավելացումը խաղողի համախառն բերքը ավելացրել է 1.07%-ով ($\Theta_1 = 1.07$), իսկ խաղողի բերքատվության մակարդակի մեկ տոկոսով ավելացումը՝ 1.005%-ով ($\Theta_2 = 1.005$):

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Բադեն-Վյոլրտենբերգի հողում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի էականորեն է ազդում, քան տարածությունների փոփոխությունը:

Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսումնասիրվող տարիներին Բադեն-Վյոլրտենբերգի հողում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.8 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R_{y \times 1 \times 2}^2 = 0.998$):

Այսպիսով, կատարված տնտեսաչափական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի Հանրապետության և Վայոց ձորի մարզի, ինչպես նաև ԳԴՀ և Բադեն Վյոլրտենբերգի նահանգի խաղողագործության ճյուղերի զարգացման վրա էական ազդեցություն ունի բերքատվության մակարդակը, հետևաբար մարզում խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունը պետք է հանդիսանաին տեսսիվության մակարդակի բարձրացումը:

3.3. Խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ Վայոց ձորի մարզում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր կողմից ուսումնասիրվել են ինչպես ՀՀ Վայոց ձորի մարզի, այնպես էլ Գերմանիայի դաշնության Բադեն-Վյոլրտենբերգ հողի խաղողագործության ոլորտները և դրանցում առկա հիմնախնդիրները, հետևաբար Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները առաջարկվել են Գերմանիայի Դաշնության Բադեն-Վյոլրտենբերգ հողի խաղողագործության ոլորտում կիրառվող այն ինովացիաների ու ոլորտի կարգավորման մոտեցումների ներդրման համատեքստում, որոնք, ըստ մեր

գնահատման, իրատեսակական կարող են լինել մարզում ներդնելու առումով:

Դրանք, ընդհանուր առմամբ հետևյալն են.

1. Տրակտորների GPS և ուլտրաձայնային համակարգի ներդրում:
2. Խաղողի այգիների հիմնման գործընթացի օպտիմալացման համար CoGIS Rebpflanzenmodul ծրագրային համակարգի ներդրում:
3. Չունայակորված քարտեզների ստեղծում:
4. Եղանակի տեղեկատվական կայանների ներդրում և կիրառություն:
5. Խաղողագիտագործության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին ուղղվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործում:
6. Խաղողի և գինու գնագոյացման պետական կարգավորում:
7. Խաղողագործական տնտեսությունների պայմանագրային հարաբերությունների կատարելագործում:
8. Խաղողի իրացման գործընթացի կատարելագործում:

1. Տրակտորների GPS և ուլտրաձայնային համակարգի ներդրում:

Տրակտորների GPS և ուլտրաձայնային համակարգի ներդրումը հնարավորություն է ստեղծում խաղողի այգիներում առանց դժվարության և առանց վարորդի ուղղակի միջամտության վարել տեխնիկան մինչև շամ ճշտությամբ: Այսինքն, համակարգն ավտոմատացված կերպով վարում է տրակտորը GPS-ի պարագայում ըստ վարման հետագծի, իսկ ուլտրաձայնային ալիքների դեպքում՝ սենսորների միջոցով խաղողի վազերից նախապես կարգավորված հեռավորությամբ՝ ըստվարորդի ցանկության:

GPS համակարգի օգտագործման ժամանակ պահանջվում է RTK ճշտությամբ արբանյակային կապի կարգավորում: Համակարգը հնարավորություն է տալիս ապահովել վարորդի կենտրոնացվածության բարձր մակարդակ, ինչպես նաև նվազեցնում է հոգնածությունը: Այսինքն վարորդը կարողանում է կենտրոնանալ բուն աշխատանքի, օրինակ պարարտացման կամ սրսկման գործընթացի վրա, այլ ոչ թե շարքերում խաղողի վազերից ճիշտ հեռավորությամբ վարման վրա:

Այս համակարգերով կարելի է շատ արագ և հեշտորեն կահավորել ցանկացած տրակտոր, որն ունի հիդրավլիկական կառավարման համակարգ: Սրանք կիրառելի են ոչ միայն խաղողի այգիներում, այլ նաև պտղատու այգիներում:

Յանրահայտ Topcon ընկերության կողմից առաջարկվող հիդրավլիկական վերակահավորման համակարգը հնարավոր է կիրառել ցանկացած հիդրավլիկորեն ղեկավարվող տրակտորի պարագայում՝ անկախ տրակտորի մակնիշից և մոդելից:

Որպես հաշվարկային օրինակ՝ հիմք է հանդիսացել Topcon ընկերության կողմից առաջարկվող համակարգը: Ղեկավարման այս համակարգը բաղկացած է AGI-4 ընդունիչից և X դասի դիսփլեյից: AGI-4-ը ունի մոդուլար կառուցվածք որում ինտեգրված է անտենան, ընդունիչը և ղեկավարման ծրագիրն հաշվարկող համակարգիչը: Յամակարգի բաղկացուցիչ մաս է կազմում նաև ղեկավարման փականը և ղեկի անկյունային սենսորը: Ղեկավարման փականը ղեկավարումն հաշվարկող համակարգից ստանում է կառավարման հրահանգ իդեալական հետագծի վերաբերյալ: Ամբողջական համակարգը ունենալով RTK ճշտությամբ արբանյակային կապի կարգավորում, շատ հեշտորեն ապահովվում է 2.5սմ ճշտությամբ հետագծի ընդունում և ղեկավարում լիովին ավտոմատ կերպով ինչպես տրակտորի դեպի առաջ վարման, այնպես էլ՝ հետընթացի ժամանակ:

Տրակտորի ավտոմատ ղեկավարման հիդրավլիկական վերակահավորման Topcon համակարգի բաղկացուցիչ մասերի ընդհանուր տեսքը պատկերված է նկար 1-ում:



Նկար 1. Տրակտորի ալտոմատ դեկավարման հիդրավլ իկական վերականգնողական Topcon համակարգի բաղկացուցիչ մասերի սեսքը

- X դասի դիսփլեյ , առաջ արկվող մեկն X14, X23, X25 և X35 մոդելները ,
- AGI-4 ընդունիչ ,
- հիդրավլ իկական համակարգ ,
- դեկ :

Pos.	Artikelnr.	Bezeichnung	Termin	Menge ME	Einzelpreis	Gesamtpreis
1	Topcon hydr. Nachrüstung Lenksystem					
1.1	03-09-20000-704	Topcon X35 hydraulische Nachrüstung X35 Display: Touchscreen mit 12,4" (30cm) Bildschirmdiagonale Integrierte LED-Leiste im Bildschirm Bild-in-Bild Ansicht mit drei "Miniviews", frei Belegbar Intuitive HORIZON Software zur Bedienung ISOBUS UT zur Anbaugerätesteuerung ISOBUS TC-SC Section Control bis zu 200 Teilbreiten ISOBUS TC-GEO zur teilflächenspezifischen Mengensteuerung bis 8 Produkte ISOBUS TC-BAS zur Dokumentation ISOBUS AUX-N zur einbindung externer Bedienelemente Anschluss von bis zu 6 Kameras möglich (erfordert Freischaltung bei Fremdkameras) ISOBUS AEF zertifiziert Remote Support fähig Datenaustausch über Wlan/LAN/USB AGI4 GNSS Receiver: Komplettsystem bestehend aus Multi Band GNSS Empfänger (GPS+Glonass) mit integriertem Lenkjobrechner, Neigungssensoren und digitalem Kompass. Standardmäßiger Empfang von kostenlosen EGNOS Korrekturen mit 20-30cm Spur -zu-Spur Genauigkeit. Optional erweiterbar auf TOPNET GLOBAL D / Omnistar HP/XP mit 5-10cm Genauigkeit. Optional erweiterbar auf RTK Ntrip/Funk mit 2-3cm Lenkventil: Proportionalventil geeignet für offenes und geschlossenes Hydrauliksystem ACU Controller zur Ventilansteuerung Lenkwinkelsensor Mindestgeschwindigkeit 100m/h (Nur bei RTK, sonst 1 Km/h) Dachhalter AGI4, Universalkabelbaum mit Schalter	07.09.2018	1 Stk	16.800,00	16.800,00
					Zwischensumme EUR	16.800,00
					zzgl. MwSt.	19,00
					% von	16.800,00
					Endsumme EUR	19.992,00

Նկար 2. Տրակտորի ալտոմատ դեկավարման հիդրավլ իկական վերականգնողական Topcon համակարգի արժեքը 07.09.2018թ.¹⁰⁴

Յամակարգի արժեքը՝ բոլոր պարամետրերը ներառյալ , բացառությամբ SIM քարտի տարեկան ծախսերի և RTK լիցենզիայի , ինչպես նաև համակարգի տեղադրման ծախսերի , ներկայացված են երկու տարբեր ժամանակահատվածների համար ստորև՝

Տարբերակ 1 (07.09.2018):

ԳԴՅ Բադեն-Վյոլտենբերգի հողի խաղողագործության ոլորտում 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 1-ը Topcon

¹⁰⁴ Geo-konzept GmbH ընկերության վաճառքի բաժնից սեփական հարցմամբ ստացված տվյալներ , <https://geo-konzept.de/>

ընկերության տվյալ համակարգի ներդրման դեպքում տնտեսավարողները ստանում են մինչև 35% սուբսիդավորում, այսինքն այս համակարգի գնման դեպքում խաղողագործները կստանան մինչև 5880€ (նկար 2):

Տարբերակ 2 (28.06.2019):

Նույն համակարգը, ինչը նշված է տարբերակ 1-ում, 10 ամիս անց ընկերությունն առաջարկում է 1600€ մաչելի գնով (նկար 3):

Այս պարագայում սուբսիդավորման ընդհանուր գումարը նվազել է, բայց կրկին սուբսիդավորվել է 35%-ով՝ կազմելով 5320€:

Pos.	Artikelnr.	Bezeichnung	Termin	Menge ME	Einzelpreis	Gesamtpreis
1	03-09-20000-704	<p>Topcon X35 hydraulische Nachrüstung</p> <p>X35 Display: Touchscreen mit 12,4" (30cm) Bildschirmdiagonale Integrierte LED-Leiste im Bildschirm Bild-in-Bild Ansicht mit drei "Miniviews", frei Belegbar Intuitive HORIZON Software zur Bedienung ISOBUS UT zur Anbaugerätesteuerung ISOBUS TC-SC Section Control bis zu 200 Teilbreiten ISOBUS TC-GEO zur teilflächenpezifischen Mengensteuerung bis 8 Produkte ISOBUS TC-BAS zur Dokumentation ISOBUS AUX-N zur einbindung externer Bedienelemente Anschluss von bis zu 6 Kameras möglich (erfordert Freischaltung bei Fremdkameras) ISOBUS AEF zertifiziert Remote Support fähig Datenaustausch über Wlan/LAN/USB AG14 GNSS Receiver: Komplettsystem bestehend aus Multi Band GNSS Empfänger (GPS+Glonass) mit integriertem Lenkjobrechner, Neigungssensoren und digitalem Kompass. Standardmäßiger Empfang von kostenlosen EGNOS Korrekturen mit 20-30cm Spur-zu-Spur Genauigkeit. Optional erweiterbar auf TOPNET GLOBAL D / Omnistar HP/XP mit 5-10cm Genauigkeit. Optional erweiterbar auf RTK Ntrip/Funk mit 2-3cm</p> <p>Lenkventil: Proportionalventil geeignet für offenes und geschlossenes Hydrauliksystem ACU Controller zur Ventilansteuerung Lenkwinkelsensor Mindestgeschwindigkeit 100m/h (Nur bei RTK, sonst 1 Km/h) Dachhalter AG14, Universalkabelbaum mit Schalter</p> <p>Die Anlage muss nach erfolgtem Einbau vom TÜV abgenommen werden. Die Verantwortung hierfür liegt beim Auftraggeber. Entsprechende Dokumente sind im Lieferumfang enthalten.</p>	28.06.2019	1 Stk	15.200,00	15.200,00

				Zwischensumme EUR	15.200,00
zzgl. MwSt.		19,00	% von	15.200,00	2.888,00
				Endsumme EUR	18.088,00

Նկար 3. Տրակտորի ավտոմատ ղեկավարման հիդրավլիկական վերակահավորման Topcon համակարգի արժեքը 28.06.2019թ.¹⁰⁵

Գերմանիայի դաշնային Հանրապետությունում գյուղատնտեսությանը զբաղվող տնտեսությունները տարեվերջին հարկերի պարզեցման գործընթացի արդյունքում՝ ավելացված արժեքի հարկը ֆինանսների նախարարությունից հետ են ստանում: Ստացվում է, որ նետտո արժեքից հանելով սուբսիդավորվող

¹⁰⁵ Geo-konzept GmbH ընկերության վաճառքի բաժնից սեփական հարցմամբ ստացված տվյալներ, <https://geo-konzept.de/>

գումարի չափը, համակարգի ներդրման համար պահանջվող փաստացի գումարը կազմում է 9880€ (15200€-5320€=9880€):

Համակարգի ամորտիզացիոն հատկացումները կատարվում են 8 տարվա հաշվով, այսինքն տարեկան 1235€:

Համակարգը թույլ է տալիս, որպեսզի վարորդը կենտրոնանա, ոչ թե տեխնիկայի վարման, այլ բուն աշխատանքային գործընթացի վրա, որի արդյունքում բարձրանում է ինչպես աշխատանքի որակը, այնպես էլ՝ արտադրողականությունը: Արդյունքում՝ տեղի է ունենում աշխատատեղի մինչև 50% կրճատում, բերքատվության և բերքի որակի մինչև 20% բարձրացում, բացի այդ, փաստորեն կրկնակի նվազում է աշխատուժի, հետևաբար նաև դրա գծով վարձատրության ծախսերը: Ինչ վերաբերում է 20%-ով բերքի որակի բարձրացման հանգամանքին, ապակնհայտ է, որ վերջինս էականորեն ազդելու է նաև գինու արտադրության ծավալի ավելացման և որակի բարելավման վրա, ինչն իր հերթին ապահովելու է լրացուցիչ ֆինանսական հոսքեր: Ուսումնասիրությունները և կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նշված համակարգի ներդրման հետզնման ժամկետը կազմում է շուրջ 3-4 տարի:

2. Խառողի այգիների հիմնման գործընթացի օպտիմալացման համար CoGIS Rebpflanzenmodul ծրագրային համակարգի ներդրում:

Ծրագիրն առաջարկվում է Բավարիայում գտնվող գյուղատնտեսության ոլորտում նոր գաղափարների տեխնիկական և ծրագրային ապահովում իրականացնող geo-konzept ընկերության կողմից:

Ծրագրի խնդիրն է RTK ճշտությամբ այգու սահմանների կոորդինատների հաստատումը և դրա հիման վրա, ֆիքսված սահմանները ընդունելով որպես բազա, շարքերի միջշարային և միջվազային տարածությունների նախագծումը: Ծրագիրը ավտոմատ կերպով հաշվում է շարքերի և շարքում առկա խաղողի տնկիների պահանջվող քանակը, որը հնարավորություն է տալիս համակարգչում ունենալ նախագիծ, ինչը կարելի է հեշտությամբ և արագորեն փոփոխել և օպտիմալացնել:

Նախագիծը կարելի է հեշտորեն տեղափոխել տնկող մեքենայի Tablet-ի օպերացիոն համակարգ և տալ տնկող մեքենային հրահանգներ:

Այս ծրագրային լուծումը հնարավորություն է տալիս օպտիմալ կերպով օգտագործել այգետարածքը, բացի այդ՝ տնկված խաղողի վազերը տնկումից հետո համաչափ և գեղեցիկ տեսք են ստանում: Լազերային տեխնիկայի միջոցով տնկված այգին ավանդական եղանակներով տնկված այգու նկատմամբ էական դրական առավելություններ ունի, քանի որ այս ճանապարհով հիմնված այգում կատարվելիք բոլոր աշխատանքները էապես հեշտանում են և ապահովում են բարձր արդյունավետություն:

Ծրագրի ամբողջական արժեքը ներառյալ Tablet-ը ներկայացված է նկար 5-ում:

Ծրագրի նետոտ արժեքը 4550€ է, ըստ սահմանված օժանդակության, որը գործում է 2017թ. նոյեմբերի 1-ից մինչև 2021թ. նոյեմբերի 1-ը կարելի է ստանալ 1500-4500€ օժանդակություն կախված ծրագրի կիրառելիության տարածվածության և պիտանելիության մակարդակից



Նկար 4. CoGIS Rebpflanzenmodul-ի միջոցով նախագծված խաղողի այգու հիմնում Բադեն-Վյուրտեմբերգի հողի Հոհենլոհե տարածաշրջանի Վայնգոլթ Բիռկենտսնտեսությունում

Pos.	Artikelnr.	Bezeichnung	Termin	Menge ME	Einzelpreis	Gesamtpreis
1	01-10-00000-064	CoGIS Rebpflanz-Modul geogref. Planung der Fahrspuren und Pflanzpunkte anhand einer bestimmten Feldgrenze	28.06.2019	1 Stk	4.550,00	4.550,00
Zwischensumme						4.550,00
					Zwischensumme EUR	4.550,00
zzgl. MwSt.				19,00	% von 4.550,00	864,50
					Endsumme EUR	5.414,50

Նկար 5. CoGIS Rebpflanzenmodul ծրագրի ներդրման ամբողջական արժեքը, ներառյալ Tablet-ը¹⁰⁶

CoGIS Rebpflanzenmodul-ը՝ ըստ Բադեն-Վյուրտեմբերգ հողի գյուղատնտեսության նախարարության, համարվում է 60% պիտանելիություն և գործածման անհրաժեշտություն ներկայացնող ծրագրային լուծում: Պիտանելիության մակարդակը, ինչպես նշվեց, հաստատում է նախարարությունը որոշակի կոնկրետ պայմանների վերլուծության արդյունքում: Ըստ ծրագիրը գնող տնտեսության տվյալների հաշվի են առնվում խաղողի այգիների հետևյալ 4 կարևորագույն պարամետրերը.

1. այգիների միջին թեքության աստիճանը,
2. այգիների միջին մեծությունը,
3. այգիների թվաքանակը տնտեսության հաշվով,
4. հիմնվող խաղողի այգու հողային նիշը, Գերմանիայում ընդունված է մինչև 100 միավորանոց սանդղակը, որտեղ 100 միավորը ամենաբարձր բերքատվությունն ապահովվող հողերն են:

Այս պարամետրերի վերլուծությամբ գյուղատնտեսության նախարարության կողմից CoGIS Rebpflanzenmodul-ի համար ստացվող 60% սուբսիդավորման արդյունքում ծրագրի արեքը նվազում է 2730€-ով, կազմելով՝ 1820€: Ծրագրային թարմացումները հանդիսանում են պարտադիր սկզբունք որոնց համար վճարվում է տարեկան 250€ գումար: Այն տարիներին, երբ տնտեսության կողմից նոր այգիների հիմնման համար տնկման կամ առկա այգիներում վերատնկման

¹⁰⁶Geo-konzept GmbH ընկերության վաճառքի բաժնից սեփական հարցմամբ ստացված տվյալներ, <https://geo-konzept.de/>

աշխատանքներ չեն կատարվել ու և տնտեսությունները ծրագիրը չի օգտագործել ու, հնարավոր է ուղղակի չվճարել ու սկզբունքով այդ տարի չօգտագործել այն:

Այսպիսով, համակարգի ձեռքբերման միանգամյա վճարը կազմում է 4550€, որից նախարարությունը սուբսիդավորում է 2730€: Իսկ ծրագրի օգտագործման տարեկան լիցենզիայի արժեքը 250€ է:

Ծրագիրը հնարավորություն է տալիս այգիների պլանավորման համար ծախսվող ժամանակի մինչև 70% խնայում: Բացի այդ՝ այգու պլանավորման համար այլ կազմակերպություններին վճարվելիք գումարի անհրաժեշտությունն այլևս չի առաջանում: Այգու պլանավորման աշխատանքները Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կազմում է միջինում 220€/հա ի հաշվով: Փորձը ցույց է տալիս որ տարեկան միջինում 3հա ենթակա է տնկման և վերատնկման: Այդ իսկ պատճառով հաշվարկային տվյալները բերված են աղյուսակ 17-ում:

Խաղողի այգու պլանավորման ծախսերը ավանդական և CoGIS համակարգի ներդրման պարագայում ներկայացված է աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

Խաղողի այգու պլանավորման ծախսերը ավանդական և CoGIS համակարգի ներդրման պայմաններում

	CoGIS-ով պլանավորում	Պլանավորող կազմակերպություն
Համկարգչային ծրագրի արժեք	1820€	-
Օգտագործման ժամկետը	անժամկետ	տարեկան
Տարեկան ծախսը 1հա-ի հաշվով առաջին տարում	$1820€ + 250€ = 2070€$	220€
Տարեկան ծախսը 3հա-ի հաշվով առաջին տարում	$1820€ + 3հա \times 250€ = 2570€$	$3հա \times 220€ = 660€$
Ընդհանուր ծախսը 3հա-ի հաշվով հաջորդ 5 տարիների ընթացքում	$1820€ + 5տ \times 250€ = 3070€$	$5տ \times 3հա \times 220€ = 3300€$
Ընդհանուր ծախսը 3հա-ի հաշվով	$1820€ + 10տ \times 250€ = 4320€$	$10տ \times 3հա \times 220€ = 6600€$

հաջորդ 10 տարիների ընթացքում		
------------------------------------	--	--

Չափի առնելով այն հանգամանքը որ խաղողի այգիները բազմամյա տնկարկներ են համարվում և խաղողի վազերը առնվազն 30-35 տարի պիտանելիության ժամկետ ունեն, հետևաբար ակնհայտ է դառնում, որ այս ծրագրային լուծման ներդրումը միանշանակ տնտեսապես ձեռնտու է և ապահովում է բարձր տնտեսական արդյունավետություն:

Չամակարգի գլխավոր գործիքը հանդիսանում է տնկող տեխնիկան, որը կցվում է տրակտորին: Պարզապես, անհրաժեշտ է ունենալ հիդրավլիկական կառավարմամբ կահավորված տնկող տեխնիկա, որի պարագայում արտադրող ընկերության մակնիշը էական է: Տնկող մեքենան կարելի է ձեռք բերել 7000-15000€-ով: Նկար 4-ում առկա տնկող մեքենան գերմանական արտադրության է և արժե 11000€: Այսինքն կարելի է ձեռք բերել տեխնիկա և վարձակալական հիմունքներով օգտագործել տվյալ և հարակից մի քանի համայնքների տնտեսությունների կողմից:

3. Չոնայ ավորված քարտեզների ստեղծում:


Չոնայ ավորված քարտեզներ կարելի է ստեղծել ինչպես բազմամյա արբանյակային նկարների համադրմամբ, այնպես էլ պահանջվող ժամանակահատվածում անօդաչու թռչող օբյեկտների` Drone-ների, օգնությամբ: Այս երկու դեպքում էլ Չոնայ ավորված քարտեզների հիմքում ընկած են NDVI նկարներից ստացված վերլուծությունները:

Չոնայ ավորված քարտեզների միջոցով կարելի է պարզել խաղողի վազում քլորոֆիլի պարունակությունը, առկա կենսազանգվածի քանակը և ըստ այդմ` աճի տեմպերը: Ըստ բազմամյա Չոնայ ավորման` հնարավորություն է ստեղծվում համադրված 30 տարիների արբանյակային նկարներից պարզել, թե այգու որ հատվածը ինչ բերրիության մակարդակ ունի: Այսպիսով, իրագործվելիք աշխատանքների ծավալի պարզեցման համար նախապես կարելի է կատարել պլանավորում, ինչպես նաև գնահատել վեգետացիայի ընթացքում յուրաքանչյուր Չոնայի համար

նախատեսվող թե՛ պարարտանյութի, և թե՛ ոռոգման անհրաժեշտությունը, որը հնարավորություն է տալիս նաև կատարել դրանց պահանջի քանակական և արժեքային գնահատում՝ աշխատանքների և ծախսերի պլանավորման ու փաստացի իրագործման համար: Տվյալ պարագայում ընդունված է գործընթացներն ու ծախսերն օպտիմալացնել ոչ թե ամբողջ հողատարածության հողաբարելավման միջոցով, այլ աստիճանակարգմանը համապատասխան, այսինքն յուրաքանչյուր զոնայից նվազագույն ծախսումներով ապահովվել առավելագույն բերքատվություն:

Նկար 6-ում կարելի է տեսնել 2001-2019թթ. արբանյակային նկարների համադրմամբ կազմված զոնայավորված քարտեզ: Քարտեզը բաղկացած է 5 զոնաներից, որտեղ կարմիր գույնով արտացոլված զոնա 1-ը համարվում է լավագույնը, իսկ կապույտ գույնով արտացոլված զոնա 5-ը՝ վատագույնը:

Չունայակորված քարտեզների բազայի վրա կարելի է ստեղծել ապլիկացիոն քարտեզներ: Ապլիկացիոն քարտեզը ստացվում է զոնայավորված քարտեզների զոնաներին տալով վեգետացիայի ընթացքում նախատեսվելիք գործողության համար ցանկալի քանակական արժեքները:



Նկար 6. Խաղողի այգու զոնայավորված քարտեզ՝ կազմված 2001-2019թթ. արբանյակային նկարների համադրմամբ:

Ունենալով ասլիկացիոն քարտեզ՝ կարելի է այն ներբեռնել տրակտորի համակարգիչ: Արդյունքում՝ ըստ ցանկության, օրինակ սրսկման ժամանակ, տրակտորի սրսկող համակարգը ավտոմատ կերպով կընդունի հրահանգավորումները ասլիկացիոն քարտեզից, միևնույն ժամանակ, ըստ անհրաժեշտության՝ վարորդի միջամտությամբ կարող են կատարվել որոշակի կարգավորումներ և փոփոխություններ: Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսվարող սուբյեկտների և փորձագիտական շրջանակներում կուտակված փորձի ուսումնասիրության հիման վրա պարզ է դառնում, որ նշված համակարգի ներդրման արդյունքում ստացվում է շուրջ 30% խնայողություն և բերքատվության բարձրացում՝ նվազագույնը 20%-ով:

Drone-ների օգնությամբ ստացված NDVI նկարների վերլուծությամբ, բացի ակտուալ քարտեզի ստեղծումից, հնարավորություն է ստեղծվում ձևավորել ասլիկացիոն քարտեզ և բացահայտել խաղողի վազի հիվանդությունները և Drone-ի միջոցով ձեռնարկել և իրագործել պայքարի միջոցառումներ, օրինակ սրսկում կամ \$եռմոնոսով հագեցած գնդիկների օպտիմալացված տարածում ամբողջ այգու տարածքում: Վերջինս կոչվում է տրիխոգրամա, որը լայնորեն կիրառվում է խաղողի և պտղատու այգիներում, ինչպես նաև եգիպտացորենի դաշտերում:

Նկար 7-ում պատկերված է X6 Drone-ի միջոցով կատարվող տրիխոգրամա:



Նկար 7. X6 Drone-ով կատարվող տրիխոգրամա

Pos.	Artikelnr.	Bezeichnung	Termin	Menge ME	Einzelpreis	Gesamtpreis
1	Applikationskarten für Weinberg					
1.1	01-10-10000-002	FI M Zonenkarten S Bis 50 ha Managementzonenkarte aus mehrjährigen Satellitenaufnahmen (Basis für Applikationskarte)	05.07.2019	1 Stk	12,00	12,00
1.2	01-10-10000-012	FI frei Anwendungsplanung Paket S Bis 50 ha Jährliche Freischaltung zum Modul Freie Anwendungsplanung	05.07.2019	1 Jahr	250,00	250,00
1	Zwischensumme					262,00
					Zwischensumme EUR	262,00
				zzgl. MwSt.	19,00	% von 262,00
					Endsumme EUR	311,78

Նկար 8. Բազմամյա զոնայ ավորված քարտեզների միանգամյա գնման և ապլիկացիոն քարտեզների տարեկան լիցենզիայի արժեքը¹⁰⁷

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպության կողմից առաջարկվող բազմամյա քարտեզների ձևավորման գները նախատեսված են մինչև 50հա խաղողի այգիների համար՝ յուրաքանչյուր 1հա-ի հաշվով: Ապլիկացիոն քարտեզների համար նախատեսված լիցենզիան միանվագ է մեկ տարվա համար և ենթակա են ամենամյա գնման և ակտիվացման: Գնելով բազմամյա քարտեզ՝ այն կարելի է օգտագործել ամենաքիչը 5 տարի, այսինքն ամորտիզացիոն հատկացումների տևողությունը ընդունվում է 5 տարի:

Բազմամյա զոնայ ավորված քարտեզների գնման և տարեկան ապլիկացիոն քարտեզների համար պահանջվող լիցենզիայի ակտիվացման համար անհրաժեշտ ծախսերը ձևավորվում են հետևյալ կերպ.

Որպես օրինակ ընդունենք 8հա խաղողի այգի:

Բազմամյա քարտեզների արժեքը կկազմի $8 \text{ հա} \times 12 \text{ €/հա} = 96\text{€/5տարի}$

¹⁰⁷ Geo-konzept GmbH ընկերության վաճառքի բաժնից սեփական հարցմամբ ստացված տվյալներ, <https://geo-konzept.de/>

Այլ ի կաց ի ն քարտեզների ակտիվացման լիցենզիա 8հաի համար 250€/տարի:

Ընդհանուր ծախսումները առաջին տարում $96 + 250 = 346€/տարի$

Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ տարիների համար նախատեսվում է միայն լիցենզիայի գծով ծախսերը՝ 250€/տարի:

Այս գործընթացի ներդրմամբ՝ կարելի է ապահովել նյութական ռեսուրսների զգալի խնայողություն, որոնց հանրագումարը գերազանցում է քարտեզների արժեքը նվազագույնը 1.5-2 անգամ, ինչպես նաև միջոցառման արդյունքում ակնկալվում է բերքատվության մակարդակի զգալի բարձրացում:

4. Եղանակի տեղեկատվական կայանների ներդրում և կիրառություն:

Կլիմայական տարրերի չափման և տվյալների վերլուծության համար գոյություն ունեն բազմաթիվ տարբերակներ: Այդ տարբերակներից ամենատարածվածներից մեկը ավստրիական Pessi ընկերության կողմից առաջարկվող եղանակի տեղեկատվական կայաններն են:

Pessi ընկերության կողմից առաջարկվող բազմաթիվ մոդելներից ամենալայն տարածում գտած iMETOS եղանակի տեղեկատվական կայանները մեկ ինտերֆեյսի հաշվով կարող են հագեցած լինել մինչև 40 սենսորներով: Ինտերֆեյսը ունի ընդլայնվելու հնարավորություն, այդպիսով ամեն ընդլայնմամբ ապահովելով ևս 40 նոր սենսորների միացման հնարավորություն:

Տեղեկատվական կայանի սենսորները շատ բազմաբնույթ են, օրինակ օդի խոնավություն, օդի ջերմաստիճան, օդի ճնշում, տեղումների քանակ, քամու արագություն, քամու ուղղություն, արևային ռադիացիա տերևների թրջվածություն, հողի խոնավություն, հողի ջերմաստիճան հողում առկա աղերի քանակ՝ մինչև 120սմ խորությամբ: Գոյություն ունեն սենսորներ, որոնցով կարելի է չափել բույսերի ճյուղերի և տերևների աճը: Նախապես կարելի է կարգավորման միջոցով սահմանել սենսորներից ստացված տվյալների հաճախականությունը: Տվյալները հավաքագրվում ու պահպանվում են կայանի օպերացիոն հիշողությունում և ըստ ռադիոմոդեմի տրված կարգավորման ինտերվալի, SIM քարտի

օգնությամբ ավտոմատ կերպով ուղարկվում է Online համակարգով աշխատող FieldClimate կայք, որտեղ էլ դրանք կարող են բազմաբնույթ աղյուսակների ստեղծման միջոցով վերլուծվել:

Կայանի տվյալների միջոցով կարելի է պարզել ոռոգման անհրաժեշտությունը և անգամ ավտոմատացնել այն: Կայանները կարող են նախագգուշացնող SMS կամ զանգ ազդանշան ուղարկել ցանկացած բջջային հեռախոսահամարի, օրինակ՝ ցրտահարության վտանգի տեղեկացման նպատակով: Յարկ է նշել, որ այս ամենը անհրաժեշտ է կարգավորել նախապես:


Կայանները ունեն հնարավորություն տեսախցիկների միջոցով միջատների բացահայտման և հատուկ ֆերոմոնների օգնությամբ դրանց մի կետում հավաքման:

Նկար 9-ում ներկայացված է խաղողի այգում տեղակայված Pessi ընկերության iMETOS դասի IMT200 մոդելի եղանակի տեղեկատվական կայան:

Նկար 10-ում ներկայացված են գրաֆիկներ օդի ջերմաստիճանի, օդի հարաբերական խոնավության, օդի ճնշման, արևային ռադիացիայի, եղանակի տեղումների, քամու արագության և ուղղության վերաբերյալ: Տվյալները պատկանում են Բադեն Վյուրտեմբերգի Յոդում գտնվող Բորստ խաղողագիտագործական տնտեսությունում տեղակայված եղանակի տեղեկատվական կայանին: Տվյալների առցանց պատկերումը ապահովվում է ընկերության կողմից անվճար տրամադրվող FieldClimate ինտերնետային կայքի միջոցով:



Նկար 9. Եղանակի տեղեկատվական կայան Pessl ընկերության iMETOS դասի IMT200 մոդելը



Նկար 10. Բախեն Վյուրտեմբերգում գտնվող Վայնգուլթ Բորստ խաղողի տնտեսության եղանակային տվյալներ 01.03.2019-12.07.2019թթ. FieldClimate կայքում¹⁰⁸:

¹⁰⁸ www.fieldclimate.com կայքում Վայնգուլթ Բորստ տնտեսության ունից ստացված արդյունքներ:

Angebot**AN19-00317**Ihre Kundennummer: UST-IdNr.:
21215 DE152925629Angebotsdatum:
24.05.2019

Pos. Nr.	Beschreibung	Menge Einheit	VK-Preis	Rab. %	MwSt.	Betrag
IMT200A inkludiert: Regenschirm, Lufttemperatur, Luftfeuchtigkeit, Blattnässesensor						
01	IMT200A	iMetos® IMT200 EU (RG, HC2, LW)	1 Stk.	1.900,00	E20	1.900,00
02	IM506D	Globalstrahlung (Pyranometer)	1 Stk.	210,00	E20	210,00
03	TRANS	Transport costs	1 Stk.	35,00	E20	35,00
Total EUR						2145,00

Zahlungsbedingungen sofort fällig
Lieferbedingung ab Werk**Նկար 11. Pessi iMETOS IMT200 արևի ռադիացիոն սենսորով եղանակի տեղեկատվական կայանի ներդրման արժեքը¹⁰⁹:**

Ուսումնասիրողը չունի ներքին ցույց ենտալիս, որ Pessi եղանակի տեղեկատվական կայանների ներդրումը ունի մի շարք առավել ություններ շուկայում առկա մյուս կազմակերպող չունի կողմից առաջարկվող եղանակի տեղեկատվական կայանների նկատմամբ:

Առավել ություններ՝

- կայանի էներգաապահովվածությունը կատարվում է արևային էներգիայով վերալիցքավորվող մարտկոցի միջոցով,
- կլիմայական տարրերի չափման չափազանց բարձր ճշտությամբ, որն ապահովում էն աշխարհում հատուկ ենտալ կազմակերպող չունի,
- կայանները խնամքի կարիք չունեն և բավականին դիմացկուն են անգամ 10 և ավելի տարիների շահագործման ընթացքում, հազվադեպ են խնդիրներ ի հայտ գալիս,
- տվյալների ցուցադրման և վերլուծության FieldClimate կայքը, որը, որպես՝ սմարթֆոնների հավելված, նույնպես առկա է ընկերության կողմից առաջարկվում է բացառապես անվճար:

¹⁰⁹ Pessi Instruments ընկերության վաճառքի բաժնից սեփական հարցմամբ ստացված տվյալներ, www.pesslinstruments.com

Թերութիւններ՝

- կայանի գինը համեմատաբար բարձր է, քան մյուս ընկերութիւնների կողմից առաջարկվող գները,
- SIM քարտի ամսական կամ տարեկան ծախսեր, քանի որ այն պետք է մշտապես ապահովված լինի անհրաժեշտ ծավալի մեզաբայ թերով, որպեսզի տվյալներն ուղարկվեն կայք: Ամսական ինտերնետային ծախսը կազմում է առավելագույնը 15ՄԲ, ինչը արժեքային արտահայտութիւնում քախազանց քիչ ծախս է պահանջում:

- Եղանակի և բույսերի հիվանդութիւնների կանխատեսման մոդուլները վճարովի են, տարեկան՝ 130-160€

Եղանակի տեղեկատվական կայանների ձեռքբերման համար ԳԴՅ Բաղեն Վյուրտենբերգ հողում, ելնելով կայանի արժեքից, իրականացվում է 10-15% սուբսիդավորման ծրագիր:

Այսպիսով, տվյալ կայանի ներդրման դեպքում ԳԴՅ Բաղեն Վյուրտենբերգ հողում պետական աջակցութիւն շրջանակներում սուբսիդավորումը կազմում է 10% կամ 214.5€:

5. Խաղողագիտագործութիւնն ու որսի տնտեսավարող սուբյեկտներին ուղղվող պետական աջակցութիւնն ծրագրերի կատարելագործում:

Գերմանիայի դաշնութիւն Բաղեն Վյուրտենբերգի հողում իրականացվում են խաղողագործութիւնում զբաղվող տնտեսութիւններին հասցեագրված պետական աջակցութիւնն բազմաթիվ ծրագրեր, որոնցից 10 հիմնականները հետևյալն են.

1. Նոր գնված տրակտորի GPS կամ ուլտրաձայնային ղեկավարման համակարգի համար մինչև 35% սուբսիդավորում:
2. Նոր այգիների հիմնման համար՝
 - մինչև 30% թեքութիւնն ունեցող այգիների հիմնման դեպքում 7000€/հա,
 - 30-45% թեքութիւնն ունեցող պետքում՝ 12000€/հա,
 - 45% թեքութիւնն ունեցող պետքում՝ 18000€/հա:
3. Պայմանագրի առկայութիւնն ունեցող, որը հաստատում է, որ նոր հիմնվող այգին 25 և ավելի տարիներ ծառայելու է որպես խաղողի այգի՝ մինչև 18000€/հա օժանդակութիւն:

4. Ծրագրային լուծումների համար, որոնք միտված են ճշգրիտ գյուղատնտեսության զարգացման համար՝ մինչև 1500-4500€ օժանդակություն:
5. Կաթիլային ոռոգման համակարգի կառուցում՝ մինչև 1800€/հա:
6. Օրգանիկ խաղողի այգու երկարաժամկետ հիմնման համար՝ մինչև 26000€/հա:
7. Շենք-շինությունների կառուցման դեպքում, օրինակ՝ որպես գինու մառան՝ մինչև 25%
8. Խաղողի վերամշակման համար գնվող տեխնիկայի գնի՝ մինչև 30% սուբսիդավորում:
9. Աշխատատեղերի ստեղծում՝ մինչև 20% սուբսիդավորում յուրաքանչյուր աշխատատեղի ստեղծման ծախսերի:
10. Գիտական նորագույն տեխնոլոգիաների կիրառման համար մինչև 60% օժանդակություն:

6. Խաղողի և գինու գնագոյացման պետական կարգավորում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում տարեկան մեկ շնչի հաշվով 4կգ խաղող է սպառվում: Ընդ որում, երկրում խաղող ներկրվում է ամբողջ տարվա ընթացքում: Ուշ ամռանը և աշնանը ներկրվում է միջերկրական ծովի պետություններից, իսկ տարվա սկզբին հարավային Աֆրիկայից և Չիլիից: Աշխարհում առկա խաղողի 85%-ը պատկանում է տեխնիկական սորտերին, որոնք նախատեսված են գինու արտադրության համար, մնացած 15%-ը՝ սեղանի սորտի խաղողներ են¹¹⁰:


Խաղողի գնագոյացման վրա ազդող հիմնական և առաջնային գործոնը՝ ինքնաբավության մակարդակն է: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մինչև 2000թ. սեղանի սորտի խաղողի արտադրությունը սահմանված կարգով թույլատրվում էր միայն գինեգործությամբ զբաղվող տնտեսություններին: Անգամ պտղատու այգիներ ունեցող գյուղացիները իրավունք չունեին սեղանի խաղողի մշակությամբ զբաղվելու, ինչով պայմանավորված էլ սեղանի սորտերի խաղողի ինքնաբավության մակարդակը եղել և մինչև այժմ էլ՝ մնում է բավականին ցածր մակարդակի վրա: Երկրի

¹¹⁰ Գյուղատնտեսության և սննդամթերքի նախարարություն, Bundesanstalt für Landwirtschaft und Ernährung, <https://www.ble.de>

սեղանի սորտերի խաղողի շուկայի 98%-ը կազմում է ներկրված արտադրանքը, փաստորեն խաղողի սեղանի սորտերի ամբողջական պահանջարկի միայն 2%-ն է բավարարվում տեղական արտադրության հաշվին: Նշված իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրում չափազանց քիչ են սեղանի սորտերի խաղողի արտադրության ամբմասնագիտացված տնտեսավարող սուբյեկտները¹¹¹:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ունում ստեղծվել է գիտահետազոտական ինստիտուտ՝ Deutsches Weininstitut, որի գործառույթն է կատարել խաղողի շուկայի վերլուծություն: Վերլուծության արդյունքները փոխանցվում են Գյուղատնտեսության և սննդամթերքի նախարարությանը, որն էլ հստակորեն սահմանում է խաղողի գները ամբողջ երկրի տարածքում:

Երկրում գոյություն ունեն խոշորագույն միջնորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների ցանցեր, որոնք վերոնշյալ կառուցակարգերին համահունչ սահմանում են սեղանի սորտերի խաղողի գինը:



Գծապատկեր 20. Մեկ անձի կողմից տարեկան սպառվող խաղողի քանակությունը 2007-2018թթ. ¹¹²

111 Բավարկան գինեգործական և այգեգործական նախարարություն, Bayerische Landesanstalt für Weinbau und Gartenbau, <https://www.lwg.bayern.de>
 112 Գերմանիայի վիճակագրական ծառայություն, Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>

Գերմանիայի Դաշնային Հանրապետության ունում մեկ շնչի հաշվով տարեկան սպառվող խաղողի ծավալների վերաբերյալ տվյալները 2007-2018թթ. ժամանակահատվածում ներկայացված է գծապատկեր 20-ում:

ԳԴՀ սեղանի սորտերի խաղողի սպառողական գների ինդեքսը 2005-2016թթ. ներկայացված է գծապատկեր 21-ում, որտեղ՝ որպես բազիսային տարի ընդունվել է 2010 թվականը:

Ինչ վերաբերում է խաղողի տեխնիկական սորտերին՝ այստեղ փոխվում են սահմանափակումների դրույթները: Գինու գիտահետազոտական ինստիտուտը ունի հստակ սահմանափակում տարեկան 1հա-ից արտադրված գինու քանակության հաշվով: Գերմանիայի Դաշնային Հանրապետության ունում 100կգ խաղողից միջինում ընդունված է ստանալ 40-70լ լավ որակի կամ 85լ միջին որակի գինի:

Բադեն Վյուրտեմբերգի Հողում 2010թ. սկսած տնտեսավարող սուբյեկտը 1հա ցանկացած տեսակի տեխնիկական սորտի խաղողի 30%-ից ցածր թեթույն ունենցող այգուց իրավունք ունի ստանալ ու առավելագույնը 110 հեկտոլիտր գինու արտադրության համար պահանջվող հումք, իսկ 30%-ից ավելի թեթույն ունենցող այգիների պարագայում՝ 150 հեկտոլիտր: Եթե սահմանված ծավալը գերազանցվում է, ապա ավելցուկը պետք է օգտագործվի խաղողահյուսի արտադրության համար, որը ենթակա է և՛ անձնական սպառման, և՛ վաճառքի:



Գծապատկեր 21. Խաղողի սպառողական գների ինդեքսը ԳԴՀ-ում 2005-2016թթ.¹¹³

Հարկ է նշել, որ այս պարագայում արդեն արտադրված գինու գնի ուղղությամբ սահմանափակումներ չկան, մասնավորապես տվյալ դեպքում գինը ձևավորվում է շուկայական կառուցակարգով:

7. Խաղողագործական տնտեսության ունեցողի պայմանագրային հարաբերության կատարելագործում:

Գինու արտադրության համար նախատեսված խաղողագործության մեջ զբաղվող տնտեսության ունեցողն պայմանագրային հարաբերության ունեցողի հետևյալ առավել տարածված երկու հայեցակարգերը.

➤ **Տնտեսության ունեցողի ներքին համաձայնությանը սահմանված պայմանագրային հարաբերության ունեցող:**

Խաղողագործության մեջ զբաղվող տնտեսության ունեցողն այս պարագայում գործում են հատուկ կարգով սահմանված պայմանագրային հարաբերության ունեցողի շրջանակներում, որոնք ունեն բազմաթիվ կառուցվածք: Ստորև ներկայացված է մեր կողմից ուսումնասիրված Բադեն Վյուրտեմբերգի Հողում գտնվող Վայնգոլթ Բիռլեռտ տնտեսության և Վայնգոլթ Մյուլլեր տնտեսության միջև 2015թ. 8 տարի ժամկետով կնքված պայմանագրի առանցքային դրույթները.

- բոլոր տեսակի աշխատանքների համար՝ սկսած խաղողի այգուց մինչև շշալցում, տնտեսության ունեցողի ղեկավարները պարտավորվում են անհրաժեշտության դեպքում միմյանց տրամադրել աշխատուժ՝ հատուկ սահմանված աշխատաժամերով և վարձավճարով: Աշխատանքի ավարտին անմիջապես պետք է հաջորդի վարձատրությանը՝ հետագայում ավելորդ հաշվարկներից և որոշակի անճշտության ունեցողից խուսափելու համար,
- անհրաժեշտության դեպքում, նախապես մեկ օր առաջ տեղեկացման պարագայում, միմյանց տրամադրել տեխնիկա՝ ժամավարձի կամ օրավարձի սկզբունքով,

¹¹³ ԳԴՀ ազգային վիճակագրական ծառայություն, Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>

- օրացուցային պլաններով միմյանց հետ համաձայնեցնել գինու համտեսի և ամբողջ տարվա ընթացքում ռեստորանի աշխատանքային օրերը,
- ցուցահանդեսներին մասնակցելու ժամանակ տեղեկացնել միմյանց, բարենպաստ պայմանների առկայության դեպքում՝ գովազդել գործընկեր տնտեսությանը,
- միասին կատարել պատվերներ որոնք միտված են մարքեթինգի զարգացմանը, որպեսզի պատվիրման խմբաքանակի ավելացման արդյունքում արժեքը նվազի և մատչելի դառնա, օրինակ գինու բաժակներ տնտեսությանը ունենրի լոգոներով,
- միմյանց տեղեկացնել նոր սպառման շուկաների հետ ձեռք բերված պայմանագրերի մասին,
- տեղեկացնել միմյանց այլ տնտեսությանը ունենրի հետ առկա պայմանագրերի մասին,
- տեղեկացնել միմյանց վաճառքի ենթակա ապրանքների գինը, սահմանել գործընկեր տնտեսությանը ունենրի արտադրանքների ձեռքբերման պարագայում հատուկ գներ,
- տոների ժամանակ, որտեղ տնտեսությանը ունենրը հանդես են գալու իրենց անհատական կամ միասնական տաղավարներով, աջակցել միմյանց ամբողջ գործընթացի ժամանակ, ղեկավարների կողմից նախապես տրված հատուկ հանձնարարականների շրջանակներում, և վաճառել գործընկեր տնտեսության արտադրանքն այնպիսի պատրաստակամությամբ ինչպես սեփականը:

➤ **Տնտեսությանը ունենր, որոնք գործում են գինեգործարանի հետ կնքած պայմանագրային հարաբերությանը ունենրի շրջանակներում:**

Բադեն-Վյուրտեմբերգի հողում գոյություն ունեն բազմաթիվ տնտեսությանը ունենր, որոնք չունեն խաղողի մշակման, գինու հասունացման և շշալցման հնարավորություններ: Այդպիսի տնտեսությանը ունենրը կնքված պայմանագրերի շրջանակներում խաղողի բերքահավաքի ժամանակ բերքը փոխադրում են դեպի գինեգործարան, որի հետ կնքված է պայմանագիր: Գործընթացն իրականացվում է 2 հիմնական ուղղությանը ունենրով:

Առաջին տարբերակի պայմաններում, որը հիմնականում այդքան էլ տարածված չէ, խաղողագործական տնտեսությունը արտադրված խաղողն առաքում է գինեգործարան, որտեղ գործարանի կողմից տվյալ բերքից ստացված գինին շշալցված և առանց պիտակավորման հետ է ուղարկվում խաղողագործին՝ կատարված աշխատանքի համար ստանալով համապատասխան վճար: Ստորև ներկայացված է պայմանագրի օրինակ կազմված Բաղեն Վյուրտենբերգի Յոհանես Կոնստանցի տարածաշրջանի Ադոլֆֆուրտ համայնքում գտնվող Ֆյուրստենֆաս գենոսենշաֆթի և Վայնգուլթ Յամմելի միջև: Պայմանագրի հիմնական դրույթները հետևյալն են.

- գինեգործարանին մեկ օր առաջ տեղեկացնել նախատեսվելիք բերքահավաքի ծավալի և սորտերի վերաբերյալ, այնուհետև նոր ստանալ բերքահավաքի սկսման թույլ տվություն,
- հստակ հաշվառմամբ առաքել բերքը գինեգործարան բուն բերքահավաքի ընթացքում,
- գինեգործարանից ստանալ շշալցված գինին գործարանի կողմից սահմանված օրը,
- կատարել վճարում ապրանքի ստացման հաջորդ 14 օրերի ընթացքում,
- գինեգործարանը պարտավորվում է հատկացնել բերքահավաքի թույլ տվություն տեղեկացումից ամենաուշը 2 օրվա ընթացքում
- գինեգործարանը պարտավորվում է ապահովել բերքից ստացված գինու ամենահավանական լավագույն որակը:

Գինեգործարանից գինին ստանալուց հետո խաղողագործական տնտեսությունը կարող է գինին պիտակավորել սեփական տնտեսությունում և պահեստավորել մառանում: Այստեղ խոսքը գնում է փոքր տնտեսությունների մասին ինչպես մեր օրինակում Վայնգուլթ Յամմել, որն ունի ընդամենը 1,5հա խաղողի այգետարածք:

Երկրորդ տարբերակի դեպքում, որն ամենաշատ կիրառելին է, տնտեսությունները առաքում են խաղողի բերքը գինեգործարան և ստանում իրենց բերքի ծավալին և որակին համարժեք գումար: Վայնգուլթ Շվաբ տնտեսությունը ունենալով 30հա-ից ավելի խաղողի այգիներ, տնտեսությունում արտադրված խաղողը սահմանված ծավա-

լ ով առաքում է գինեգործարան: Ստորև ներկայացված է Ֆյուրստենշաս Գենոսենշաֆթ գինեգործարանի և Վայնգութ Շվաբի միջև պայմանագրի հիմնական դրույթները.

- տնտեսությանը պարտավորվում է բերքահավաքից մեկ օր առաջ գինեգործարանին տեղեկացնել բերքահավաքի գործընթացն սկսվելու մտադրվածության, բերքի ծավալի և սորտերի վերաբերյալ,
- գինեգործարանը պարտավորվում է մեկ օրվա ընթացում խաղողագործին տեղեկացնել այդ ժամանակահատվածի համար սահմանված մթերման գները՝ ըստ սորտերի և ծավալների,
- խաղողագործը իրավունք ունի դադարեցնել մթերման գործընթացը, եթե գները չեն գոհացնում,
- բերքահավաքի ժամանակ այգուց բերքը անմիջապես առաքել գինեգործարան,
- գինեգործարանը մթերումից հետո բերքի դիմաց պետք է վճարի 7 օրվա ընթացքում:

8. խաղողի իրացման գործընթացի կատարելագործում:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության ուսումնական սորտի խաղողի և դրանցից ստացված գինիների իրացման կառուցակարգերը:

Ինչպես Բադեն Վյուրտեմբերգի Հողում, այնպես էլ ամբողջ Դաշնության ուսումնական գոյություն ունեն խաղողագինեգործական արտադրանքների իրացման բազմաթիվ տարբերակներ և եղանակներ:

Գերմանիայում գինու իրացումը բաժանենք երկու խոշոր կատեգորիաների:

1. խոշոր տնտեսությանների արտադրանք, որը կարելի է գնել ամբողջ դաշնության ուսումնական մեկ հստակ սահմանված խոշոր սուպերմարկետների ցանցերից:

Գոյություն ունեցող մեծ ընկերությունները ունեն հատուկ մարքեթինգային բաժիններ, որոնք զբաղվում են ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի գովազդի և վաճառքի կառավարմամբ, որտեղ հսկայական միջոցներ են ներդրվում հատկապես արտադրանքի գովազդման գործընթացների վրա: Ընդ որում, խոշոր ընկերությունների մարքեթինգային ծախսերը հիմնված են վաճառքի

ընդհանուր ծավալների ավելացման և ցածր գների պայմաններում առավելագույն շահույթի ապահովման մոտեցման վրա:

2. Տնտեսության ոլորտը, որոնք ինքնուրույն են իրացնում իրենց արտադրած գինիները:

Բադեն Վյուրտեմբերգի Յոզուև կատարված ուսումնասիրությանը ցույց են տալիս, որ շատ դեպքերում տնտեսությանները խուսափում են գովազդային ծախսերից, կարողանալով սեփական արտադրանքի շուկայական առաջխաղացումն ապահովել իրացման տարբեր ուղիներով:

Նման գինեգործական տնտեսությաններից մեկի՝ Բադեն Վյուրտեմբերգի Յոզուև գտնվող Վայնգոլթ Բիռլեռտ տնտեսության, գինու իրացման հիմնական ուղղությունները ներկայացված են ստորև.

- Գինու վաճառք վերջնական սպառողին, մշտական հաճախորդներին: Այս նկատառումով՝ ընկերությունը 2009թ. կառուցել է գինետուն, որտեղ իրականացվում են գինու համտեսներ և վաճառք: Նկար 12-ում պատկերված է հատված Վայնգոլթ Բիռլեռտի գինետնից և հաճախորդին վաճառված գինու համար տրամադրված կտրոնի օրինակ:
- Գինու վաճառք տնտեսությանը պատկանող ռեստորանից:
- Վաճառք տոների ժամանակ:
- Վաճառք առցանց տարբերակով:
- Վաճառք գործընկեր տնտեսությունների միջոցով:




**WEINGUT
BIRKERT**
 Unterheimbacher Str. 28
 74626 Bretzfeld
 Telefon: (07946) 4 84
 Fax: (07946) 33 78
 www.weingut-birkert.com
 St. Nr: 76090/58135 Ust-ID: DE283620501

Datum: 12.08.2018

Kundennr. 10001
Barverkauf

Rechnung Nr. 1500224

Anz.	Artikel	Preis	Gesamt
42 X	Ltr 105: 2014 Bacchus Qualitätswein	4,10 €	172,20 €
24 X	Ltr 406: 2013 Spätburgunder QbA trocken	4,40 €	105,60 €
Rechnungsbetrag			277,80 €
Netto			233,42 €
Enthaltene MwSt.			
19,00 % aus 277,80 € =			44,35 €
Zahlart Bar			

Wir bedanken uns herzlich für Ihren Einkauf im Weingut Birkert! Auf Wiedersehen!

Bankverbindung
Raiffeisenbank Bretzfeld
IBAN: DE51 6006 9680 0024 0550 00
BIC: GENODES1 BRZ

Նկար 12. Վայնգուլթ Բիռկերտի վիճակը և վաճառքի կտրոն 12.08.2018թ.¹¹⁴

Այս պահով, ԳԴՅ Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողագործության բնագավառում մեր կատարած ուսումնասիրության և ներսնամտության ամփոփ կերպով արտացոլելով Ցիմնական ուղղության ներքին, գտնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզում խաղողագործության հեռանկարային զարգացումն ապահովելն այդ ուղղության ներքին իրատեսական կարող է լինել միայն որոշակի նախարյալների առկայության պայմաններում: Մասնավորապես, մարզի խաղողագինեգործական համալիրում առկա են ինովացիաների կիրառմանը խոչնդոտող բազմաթիվ գործոններ, որոնցից հիմնականներն ըստ մեզ ֆինասական ռեսուրսների անբավարարության և տնտեսության ներքին չափազանց փոքր չափերն են:

Կատարված ուսումնասիրության և ներքին ցույց են տալիս, որ ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղում ստեղծված վիճակի բարելավման և ԳԴՅ Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողագործության զարգացման փորձի ներդրման հնարավորությունների ստեղծման համատեքստում ռացիոնալ և հեռանկարային լուծում կարող է հանդիսանալ խաղողագինեգործական համալիրի տնտեսավարող սուբյեկտների

¹¹⁴ Վայնգուլթ Բիռկերտ տնտեսության և վաճառքի ժամանակ հաճախորդին տրամադրվող կտրոն

բազմակողմ ինտեգրացիոն գործընթացների խորացումն ու զարգացումը: Նշված համատեքստում, խոսքն առաջին հերթին վերաբերում է խաղողագործության ճյուղում կլաստերիզացիայի զարգացմանը, ինչը կարող է լրջագույն գործոն և նախապայման հանդիսանալ ճյուղի կայուն և արմատական զարգացման համար: Մեր գնահատմամբ, խաղողագիտագործական կլաստերների ձևավորմամբ իրական հնարավորություններ կարող են ստեղծվել ճյուղի զարգացման մասշտաբային միջոցառումների իրականացման նախադրյալների ստեղծման առումով: Մասնավորապես, կլաստերների ձևավորումը հնարավորություն կստեղծի միավորել բոլոր ռեսուրսները և համագործակցված գործունեության պայմաններում ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն:

Մեր համոզմամբ, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագիտագործության զարգացման առումով կլաստերների ձևավորումը, պարզապես ժամանակի օբյեկտիվ պահանջ է, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներին միավորվել համընդհանուր տնտեսական հետաքրքրությունների շրջանակներում: Կլաստերի պայմաններում հնարավորություն է ստեղծվում ռեսուրսների միավորման շնորհիվ լիարժեք ինտեգրվել և լայնորեն կիրառել ոլորտի նորամուծությունները: Միաժամանակ, գտնում ենք, որ մարզում կլաստերների ձևավորման ու զարգացման գործընթացի պառչած իրականացման հիմք պետք է հանդիսանա տարածքային զարգացման հատուկ քաղաքականության մշակումն ու իրականացումը, իսկ կառավարման մարմինների գործողությունները պետք է ուղղվեն ոչ թե առանձին տնտեսավարող սուբյեկտներին աջակցության ծրագրերում, այլ գլխավորապես տնտեսավարող սուբյեկտների և պետական ինստիտուտների միջև համագործակցության խորացմանն ու զարգացմանը:

Կլաստերը որոշակի տարածքում կենտրոնացված փոխկապակցված ձեռնարկությունների խումբ է՝ սարքավորումների, կոմպլեկտավորող և մասնագիտացված ծառայությունների մատակարարների, ընդհանուր ենթակառուցվածքի, գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և այլ կազմակերպությունների,

որոնք փոխընդունում են միմյանց և բարձրացնում են ինչպես առանձին ձեռնարկությունների, այնպես էլ ողջ կլաստերի մրցակցային առավելությունների մակարդակը¹¹⁵:

Կլաստերի առաջին նախատիպերը գործել են ԽՍՀՄ-ում՝ գիտաարտադրական միավորումների (համալիրների) տեսքով, որոնք առավել բարեհաջող կերպով հանդես էին գալիս ռազմաարդյունաբերության բնագավառում¹¹⁶:

Հայ նշանավոր տնտեսագետ Ա. Աղանբեգյանը գտնում է, որ ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում որոշակի կլաստերների գործարկումը պարզապես անհրաժեշտություն է՝ նշելով, որ դրանց ձևավորումը առաջնահերթ է հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, ադամանդագործության ու ոսկերչության, քիմիական և պղնձամուխիբդենային հանքանյութի մշակման ոլորտներում¹¹⁷:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շուկայի և արտադրատնտեսական հարաբերությունների արդի պայմաններում կլաստերները հանդիսանում են մրցունակության ապահովման առավել արդյունավետ և ճկուն կառույցներ, որոնց դերն ու կիրառման գործնական նշանակությունն ակնհայտորեն աճում է:

Եվրոմիության անդամ երկրներում, որտեղ կլաստերները կայացած և զարգացած տնտեսական միավորումներ են, դրանց միջոցով իրացվում է գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 80%-ը: Կլաստերների ձևավորումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել արտադրատնտեսական գործունեության իրականացման համար կատարվող բազմաթիվ ծախսեր, այդ թվում նաև պահեստային և վերամշակող կարողությունների ստեղծման ու շինարարության հետ կապված ծախսերը, ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումը վերջնական սպառողներին, հնարավորություններ է ստեղծում նոր շուկաներ մուտք գործելու, նպաստում է երկարատև պայմանագրային հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև պետական

¹¹⁵Якобсон А. Я., Кириллова Т.К. Инновационный менеджмент: учеб. пособие - 3-е изд., испр. - М.: Издательство "Омега-Л", 2015, - с. 105.

¹¹⁶Проектирование и формирование инновационных промышленных кластеров: Монография/ А. П. Агарков, Р. С. Голов. – М.: Издательско-торговая корпорация "Дашков и Ко", 2016. – с. 197.

¹¹⁷<http://noev-kovcheg.ru/mag/2014-04/4359.html>

աջակցության ծրագրերի լայն շրջանակներից օգտվելու գործընթացին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես Վայոց ձորի մարզում կլաստերների և առհասարակ ինտեգրացիոն գործընթացների իրականացման և արմատավորման հարցում առկա են բազում հիմնախնդիրներ, որոնցից գլխավորներից մեկը, ըստ մեր գնահատման՝ տնտեսավարողների շրջանում կլաստերների ձևավորման առավելությունների և նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան տեղեկատվական բացն է, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների բացակայությունը:

Վերոնշյալ խնդրով պայմանավորված՝ մարզում խաղողագիտագործական համալիրի սուբյեկտների կողմից կլաստերների ձևավորման անհրաժեշտության և դրանց օգտակարության գիտակցության բացակայության խնդիրը լուծելու համար կարևոր ենք համարում համապատասխան տեղեկատվական նյութերի մշակման և տարածման գործընթացի իրականացումը: Ընդորոշում, նշված գործընթացն հնարավոր և նպատակահարմար ենք համարում պետական միջամտության պայմաններում, մասնավորապես համապատասխան գերատեսչական կառույցների և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից կլաստերների և դրանց առավելությունների մասին տեղեկատվության մշակումն ու դասընթացների կազմակերպման միջոցով դրանց տարածումը տնտեսավարողների շրջանում:

Մյուս կարևոր հիմնախնդիրը՝ կլաստերային օրենսդրության մշակումն է, որով, ըստ երկրյան պետք է կարգավորվեն կլաստերը ձևավորող սուբյեկտների հարաբերությունները: Համապատասխան օրենսդրության մշակմամբ հնարավոր կլինի սահմանել կլաստերը, դրա կազմակերպարարական կարգավիճակը, գործունեության ոլորտը, նպատակները, խնդիրները, մասնակիցները և դրանց պարտականությունները, փոխհարաբերությունների կարգավորումը, կառավարման մարմնի գործառույթները և այլն:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ Վայոց ձորի մարզում խաղողագործության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից է հանդիսանում ոռոգման համակարգի քայքայված վիճակը: Մասնավորապես, մարզի խաղողագործների և համապատասխան մասնագիտական լայն շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում խաղողագործության զարգացմանը խոչընդոտող գործոնները չեն սահմանափակվում միայն նյութատեխնիկական, ֆինանսական ռեսուրսների անբավարարությամբ, տնտեսությունների փոքր չափերով և միջարքայլ գործոններով, այլ դրանց շարքում, գրեթե բոլոր տնտեսավարող սուբյեկտներն ու ոլորտի մասնագետներն առանձնացնում են ոռոգման համակարգի հետկապված խնդիրները՝ վերջինս համարելով ճյուղի զարգացմանը խոչընդոտող գլխավոր գործոնը: Խնդիրը կայանում է նրանում, որ մարզում ոռոգման ջրի փաստացի ծավալը չի բավարարում ոռոգման ջրի ամբողջական պահանջարկը և տնտեսությունները լիարժեքորեն չեն կարողանում ոռոգել խաղողի այգիները, այն դեպքում, երբ ոռոգումն այդ տարածաշրջաններում մեծ դեր է կատարում, քանզի առանց պաշտած ոռոգման, անհնար է ստանալ բարձր բերք:

Վայոց ձորի մարզում, ինչպես և մյուս խաղողագործական մարզերում խաղողի մշակությունն իրականացվում է բացառապես ոռոգման պայմաններում, որտեղ հիմնականում կիրառվում է մակերեսային ոռոգումը, մասնավորապես ակոսային տարբերակը, որի գլխավոր թերությունն է ջրի մեծ կորուստն է, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում խաղողի ինքնարժեքի վրա:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ մարզում խաղողի բերքատվության ցածր մակարդակը գլխավորապես պայմանավորված է հենց այգիների ոչ լիարժեք ոռոգմամբ: Միևնույն ժամանակ Վայոց ձորի մարզը ոռոգման արդիական տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից հանրապետությունում հետնապահն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում ոռոգման արդիական տեխնոլոգիաների կիրառմանը խոչընդոտող գործոններից գլխավորը ոռոգման փակ համակարգի քայքայված վիճակն է: Քանզի, առանց ոռոգման փակ

համակարգի առկայություն, արդիական տեխնոլոգիաները՝ մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը, դառնում է տնտեսապես ոչ ձեռնտու, քանի որ կաթիլային ոռոգման համակարգի անխափան աշխատանքի ապահովման համար հարկավոր է ապահովել ջրի որոշակի ճնշում, որի համար անհրաժեշտ է, որպեսզի խաղողագործական տնտեսությունները հեռավոր այգիներ հասցնեն էլեկտրահաղորդման գծեր և ապահովեն անխափան էլեկտրամատակարարում, որպեսզի հատուկ սարքավորումների միջոցով ոռոգման կաթիլային համակարգին կարողանան հասցնել համապատասխան մակարդակի ճնշմամբ ջրի մատակարարում, բացի այդ՝ առաջանում է նաև ջրավազանի կառուցման անհրաժեշտություն: Նշվածից, միանգամայն պարզ է դառնում, որ այդպիսի պայմաններում ներկայումս Հանրապետությունում գործող աննախադեպ նպաստավոր պետական աջակցության ծրագրերի պայմաններում անգամ, տնտեսապես ձեռնտու չի կարող համարվել ոռոգման արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգի կիրառումը, ինչը էապես նվազեցնում է կաթիլային ոռոգման համակարգի ներդրման ոլորտում գործող պետական աջակցության ծրագրերի նպատակահարմարությունը, վերջինիս մասին է վկայում այն հանգամանքը, որ մարզում գյուղացիական տնտեսությունները պարզապես չեն օգտվում նշված ծրագրերից:

Անկասկած, ոռոգման արդիական տեխնոլոգիաների կիրառումը ժամանակի հրամայական է և այլևս չունի այլընտրանք, իսկ դրա կիրառման խոչընդոտների հաղթահարման հարցում, մեր գնահատմամբ գլխավոր լուծումը՝ մարզում ոռոգման փակ համակարգերի վերականգնումն ու բարելավումն է:

Ոռոգման փակ համակարգերի, ինչպես նաև ենթակառուցվածքային այլ ծրագրերի իրականացումն հնարավոր է համարվում պետական բյուջեյի, ինչպես նաև այլ \$ինասավորման աղբյուրների միջոցով, քանի որ կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում միայն ՀՀ պետական բյուջեյի սուղ ռեսուրսներով հնարավոր չի լինի իրականացնել նմանատիպ ենթակառուցվածքային մասշտաբային ծրագրեր ամբողջ մարզի տարածքում: Հնարավոր

Ֆինանսական աղբյուրներ, բացի պետական միջոցները, մեր գնահատմամբ կարող են դիտարկվել միջազգային դրամաշնորհային ծրագրերը, Համաշխարհային բանկի արտոնյալ վարկային միջոցների ռեսուրսները, ինչպես նաև հատուկ ֆոնդի ստեղծումը, որտեղ կարող են հավաքագրվել տարբեր սփյուռքահայ բարերարների նվիրատվությունները, գյուղացիական տնտեսությունների և գինեգործական կազմակերպությունների հատկացումները:

Եվրասիական տնտեսական միությունը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված ստեղծվել է գինեգործական ապրանքների արտահանման բացառիկ լայն հնարավորություններ, ուստի արդի փուլում, առավել քան երբևէ, հրատապլուծում պահանջող խնդիրներից է հանդիսանում հատկապես արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերում՝ խաղողագործության և գինեգործության ճյուղերում, ներդրումների նպաստավոր միջավայրի ձևավորումը և ներդրումային ներուժի ավելացմանն ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրերի իրականացումը:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ Վայոց ձորի մարզն ունի խաղողագործության և գինեգործության զարգացման դեռևս չօգտագործված հսկայական ռեզերվներ ու ներուժ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ոլորտը մեր երկրի տնտեսության զարգացման ռազմավարական առաջնահերթություններից մեկն է և կարող է ապահովել արտաքին շուկաներում հայկական արտադրանքի առաջնային դիրքեր, գտնում ենք, որ ոլորտն ունի արմատական զարգացման անհրաժեշտություն, որոնք, առանց ենթակառուցվածքային ծրագրերի մշակման և իրագործման, պարզապես անհնար է իրականացնել: Հետևաբար, գտնում ենք, որ նշված կառուցակարգերով ֆինանսական ռեսուրսների ձևավորումը, միանգամայն իրատեսական է և հիմնավորված, քանի որ Վայոց ձորի մարզն իր խաղողի բացառիկ սորտերով հանրապետության խաղողագինեգործական համալիրում ունի յուրահատուկ նշանակություն և այս մարզում ոլորտի արմատական զարգացումն ունի առանձնակի կարևորություն մեր երկրի տնտեսական զարգացման գործում:

Ուստի գտնում ենք, որ նպատակահարմար է, որպեսզի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մշակվեն տարբերակված մոտեցումներ և կառուցակարգեր՝ նպատակաուղղված մարզի խաղողագործության զարգացմանը: Մասնավորապես, մարզի խաղողագործության հեռանկարային և ռազմավարական զարգացման հիմնական ուղղություններից մեկը պետք է հանդիսանա Արենի և Խարջի խաղողի սորտերի մշակության խթանումն ու արտաքին շուկաներում Արենի գինու արոպագանդումն ու դիրքավորումը, որը պետք է ամրապնդվի պետական բրենդինգային ռազմավարության մշակմամբ: Նշված համատեքստում առաջարկվում է, որպեսզի համապատասխան ռազմավարության մշակումն ուղեկցվի կոնկրետ նպատակային ծրագրերի իրականացմամբ: Ընդ որում, ծրագիրը առաջարկվում է իրականացնել փուլային տարբերակով՝ առաջին փուլում այն իրականացնելով մարզի առավել խոշոր և զարգացած խաղողագործական համայնքներում:

Արենի սորտի խաղողի մշակության առավել տարածմանը նպաստող կառուցակարգերի մշակման շրջանակներում կարևոր ենք համարում նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը: Մասնավորապես, նշված սորտի խաղողի մշակության պարագայում՝ ոռոգման ջրի վարձավճարի և նյութատեխնիկական ռեսուրսների ձեռք բերման արտոնյալ սուբսիդավորում, ինչպես նաև աջակցության ծրագրերի մշակում կապված խաղողի մթերման երկարատև պայմանագրերի կնքման գործընթացի աջակցության և գնագոյացման կառուցակարգերի բարելավման, մասնավորապես երաշխիքային գների սահմանման հետ:

Նշված կառուցակարգերի մշակումն ու հաջող իրագործումը, մեր համոզմամբ կարող է կարևոր ու յուրահատուկ երաշխիք հանդիսանալ մարզում խաղողագործության նպատակաուղղված զարգացման և միջնաժամկետ հեռանկարում շոշափելի արդյունքների ստացման հարցում:

Առաջարկվում է, որպեսզի Վայոց ձորի մարզում իրականացվող տարբերակված նպատակային պետական աջակցության ծրագրերի հիմքում ընկած լինի պայմանագրային հարաբերություններով կարգավորվող պարտավորությունների շրջանակը, որտեղ հստակ

նշված կլինի, որ տվյալ խաղողագործական տնտեսությունն այդ հատուկ ծրագրերից կարող է օգտվել բացառապես այն դեպքում, եթե ստանձնի պարտավորվածությունն և որ հիմնված խաղողի այգին առնվազն 25 տարի պատշաճ կերպով մշակելու :

ԵՃՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրները, վերլուծվել և գնահատվել է մարզում խաղողագիտագործական համալիրի զարգացման տեմպերն ու առկա ներուժը, որոնք հնարավորություն են տվել ատենախոսության թեմայի շրջանակներում կատարելու որոշակի եզրակացություններ:

1. Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ Հանրապետությունում խաղողագործության զարգացման բեկումնային տարի կարելի է համարել 2004 թվականը: Չնայած այդ տարվա զարնանային ցրտահարություններին, խաղողի համախառն բերքը կազմեց 148.9 հազ. տոննա և առաջին անգամ գերազանցեց 1990թ. գրանցված համախառն բերքի ցուցանիշը 5600 տոննայով կամ 3.9%-ով, իսկ 2000 թվականի ցուցանիշը՝ 33.1 հազ. տոննայով՝ 1300 հեկտարով պակաս այգետարածքների պայմաններում: Հատկանշական է այն հանգամանքը, որ 1990 թվականից հետո առաջին անգամ կասեցվեց խաղողի այգիների տարածությունների կրճատման միտումը: Ավելին, 2004 թվականին 2003 թվականի նկատմամբ խաղողի այգետարածքներն ավելացան 1900 հեկտարով կամ 14.6%-ով: Բացի այդ խաղողի համախառն բերքի ավելացումն առաջին անգամ ապահովվեց, ինչպես բերքատվության մակարդակի շուրջ 77.3%-ով բարձրացման, այնպես էլ՝ այգետարածքների շուրջ 22.7%-ով ավելացման հաշվին: 1990 թվականից հետո 15 տարի անց՝ 2004թ. գրանցվեց միջին բերքատվության ամենաբարձր մակարդակը՝ 108.9 ց/հա, ինչը 1990 թվականի ցուցանիշից բարձր էր 2.2 անգամ:
2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողի միջին բերքատվության ցուցանիշներն ըստ մարզերի էապես տարբերվում են: 2018 թվականի տվյալներով ՀՀ մարզերից բերքատվության մակարդակով առաջատարը Արարատի մարզն է՝ 157 ց/հա: Հատկանշական է, որ նշված ցուցանիշով Արարատի մարզը

գերազանցում է Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի նույն ցուցանիշին 2-3 անգամ, Սյունիքի, Կոտայքի, Լոռվա և Երևանի խաղողագործական շրջանների նույն ցուցանիշին 4.5-7 անգամ, իսկ զարգացած խաղողագործական մարզի՝ Արմավիրի մարզի խաղողի բերքատվության ցուցանիշին՝ շուրջ 1.15 անգամ: 2018 թվականին ՀՀ խաղողի համախառն արտադրանքի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը զբաղեցնում է Արմավիրի մարզը՝ 47.5%, իսկ Արարատի մարզը, որը Արմավիրի մարզից շուրջ 1776 հեկտարով պակաս բերքատու հասկում գտնվող խաղողի այգետարածք ունի, համախառն բերքի մասնաբաժնի ցուցանիշով Արմավիրի մարզից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 39.1%: Փաստորեն, միայն Արմավիրի և Արարատի մարզերը միասին ապահովում են ՀՀ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 86.6%-ը:

3. Խաղողի այգիների տարածությամբ ՀՀ մարզերից առաջատար է Արմավիրի մարզը՝ 41.8%, որը նշված ցուցանիշով էապես գերազանցում է հանրապետության մյուս մարզերի նույն ցուցանիշներին: Բավական է նշել, որ Արմավիրի մարզը խաղողի այգետարածքների տեսակարար կշռով երկրորդ տեղում գտնվող Արարատի մարզին գերազանցում է շուրջ 1.4 անգամ: Փաստորեն, Արմավիրի և Արարատի մարզերի խաղողի այգիների տարածության մասնաբաժինը հանրապետության խաղողի այգիների ընդհանուր տարածության կառուցվածքում կազմում է շուրջ 71.7%-ը, նշված ցուցանիշով 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղերը զբաղեցնում են Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերը, համապատասխանաբար՝ 9.7; 7.9 և 6.8%: Մյուս մարզերը, որտեղ առկա են խաղողի այգետարածքներ զբաղեցնում են հանրապետության խաղողի այգետարածքների ընդամենը 2.9%-ը, դրանք են՝ Կոտայքի, Սյունիքի, Լոռու մարզերը և Երևան քաղաքի խաղողագործական շրջանը, իսկ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում խաղողի այգետարածքներն ընդհանրապես բացակայում են, ինչը բացատրվում է նշված մարզերում խաղողի մշակության համար կլիմայական պայմանների անպատվոթությունով:

4. Խորհրդային տարիներին Չայաստանում մշակվում էին հիմնականում տեխնիկական սորտի խաղողներ, որոնք միջին հաշվով կազմում էին ՉՉ-ում արտադրված խաղողի մինչև 95%-ը: Ներկայումս խաղողի համախառն բերքի, ինչպես նաև խաղողի տարածությունների կառուցվածքն ըստ խաղողի օգտագործման ուղղությունների ունի հետևյալ պատկերը՝ տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքները կազմում են ընդամենը խաղողի 73,8%-ը, սեղանի սորտինը՝ 18,4%-ը և ունիվերսալ սորտինը՝ 7,8%-ը: Տեխնիկական սորտերի խաղողի այգետարածքների մասնաբաժնով հանրապետությունում առաջատարը Տավուշի մարզն է, սեղանի՝ Արարատի, իսկ ունիվերսալ խաղողի սորտերի մասնաբաժնով՝ Արագածոտնի մարզը: Իսկ նշված սորտերի՝ տեխնիկական, սեղանի և ունիվերսալ, խաղողի այգետարածքների ամենացածր մասնաբաժիններն ունեն համապատասխանաբար՝ Արարատի, Տավուշի և Արմավիրի մարզերը:
5. Վերջին 3 տարիների պաշտոնական տվյալներով գինու և կոնյակի տեղական արտադրության և արտահանման ցուցանիշները դրսևորել են աճի միտում: Չետաբրքիրն այն է, որ 2015-2017թթ. արձանագրվել է գինու և կոնյակի ներմուծման ծավալների բնեղեն արտահայտությամբ աճ, իսկ իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը կրճատվել է: Մեր գնահատմամբ, վերջինս արդյունք է գինու և կոնյակի շուկայի բարձր գնային սեգմենտում ներկրված արտադրանքի ուղղությամբ սպառողական նախընտրության փոփոխության: Խաղողի վերամշակման ծավալները 2016թ. շուրջ 2 անգամ կրճատվել են նախորդ տարվա նկատմամբ, ինչը համահունչ է խաղողի արտադրության ծավալներին, սննդի սպառման համար խաղողի ծավալները երեք տարիների տվյալներով գրեթե չեն փոփոխվել: Պատկերը նույնն է նաև մեկ շնչի հաշվով սպառման ծավալների առումով, ինքնաբավության մակարդակի ցուցանիշը 2014-2015թթ., գրեթե անփոփոխ է մնացել, համապատասխանաբար 101.9 և 101.2%, սակայն 2016թ. Տվյալ ցուցանիշը բարելավվել է շուրջ 18.1 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է խաղողի արտաքին ապրանքաշրջանառությանը, ապա հարկ է նշել, որ այստեղ

նկատվող միտումը ուրախալի է, քանի որ 2016թ. նախորդ երկու տարիների նկատմամբ արտահանման ծավալներն ավելացել են 4-4.5 անգամ, իսկ ներմուծման ծավալներն ավելացել են ոչ շոշափելի չափերով: Այսպիսով, խաղողի արտահանման ծավալները 2017թ. գերազանցում են ներմուծման ծավալներին շուրջ 8 անգամ:

6. Ուսումնասիրության ընթացքում ցույց են տալիս, որ ինչպես գյուղացիական տնտեսության ընթացքի կողմից բոլոր ուղիներով իրացված գյուղմթերքի գների միջին մակարդակը, այնպես էլ՝ մանրածախ գների մակարդակը վերջին հինգ տարիների ընթացքում ունեցել են տատանողական բնույթ: Յարկ է նշել, որ խաղողի մանրածախ գները բոլոր ուղիներով իրացված միջին գներին գերազանցում են մի քանի անգամ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 70%-ը մթերվում է վերամշակող կազմակերպության կողմից ցածր գներով, իսկ մնացած 30%-ի մեծ մասը մտնում է ապրանքաշրջանառության ոլորտ, մասնավորապես մանրածախ առևտրի ոլորտ, որտեղ իրացման գներն էապես գերազանցում են վերամշակման համար մթերված խաղողի գներին: Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ տարվա տարբեր ամիսների ընթացքում սառնարանային պայմաններում պահպանվող խաղողը վաճառվում է սեզոնային գներից էապես բարձր գներով, ապա դրանով էլ հիմնականում բացատրվում է երկրում խաղողի մանրածախ գների և բոլոր ուղիներով իրացման միջին գների միջև հարաբերակցության այդքան բարձր մակարդակը: Նշված գործոններին գումարվում է նաև այն հանգամանքը, որ շուկայական կառուցակարգերի վրա որոշակիորեն ազդում է խաղողի արտահանման ծավալների աճի միտումը, ինչը բացասական է ազդում ներքին շուկայում խաղողի գների ձևավորման վրա:

7. Ուսումնասիրության ընթացքում ցույց են տալիս, որ գինեգործությանը երկրում վերջին տարիներին զարգացում է ապրում, սակայն ինչպես պարզ է դառնում կատարված վերլուծության ընթացքում, ^{ՀՀ} վերամշակող կազմակերպության կողմից խաղողի գնումների

ծավալների մասնաբաժինը համախառն բերքի կառուցվածքում 2014թ. հետո նվազել է. արդյունքում՝ 2017թ. տվյալ ցուցանիշը 2013թ. նկատմամբ նվազել է շուրջ 16.6 տոկոսային կետով: Նշված միտումը վկայում է այն մասին, որ երկրում, դեռևս առկա են Լրջագույն խնդիրներ խաղող արտադրող-վերամշակող կազմակերպություն շղթայի օղակներում: Բացի այդ, գտնում ենք, որ բացահայտված միտումը արդյունք է նաև վիճակագրական անճշտությունների, քանի որ խաղողի մթերումների ծավալների վերաբերյալ տվյալները առկա են միայն ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջում, որտեղ հրապարակված տվյալները հիմնված են վերամշակող կազմակերպությունների տրամադրած տեղեկատվության վրա, որոնք, սակայն անհամադրելի են ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեյի կողմից հրապարակված Պարենային հաշվեկշիռի տվյալների հետ: Ելնելով վերոնշյալից, գտնում ենք, որ խաղողի արտադրության և մթերումների ծավալների վերաբերյալ իրական պատկերն արտացոլող ճշգրիտ տվյալների առկայությունը պարզապես անհարժեշտություն է, քանզի առանց հավաստի տվյալների առկայության անհնար է ոլորտի զարգացման առաջնահերթություններն արտացոլող իրատեսական ազգային ռազմավարության մշակումն ու վերջինիս իրացումը: Հետևաբար, կարևոր ենք համարում խաղողի մթերումների միասնական վիճակագրական ռեգիստրի ստեղծումը, ինչը հնարավորություն կընձեռի ձևավորել յուրաքանչյուր տարվա կտրվածքով խաղողի մթերումների ծավալների վերաբերյալ հավաստի տեղեկատվական բազա: Նշված տեղեկատվական բազայի առկայությունը հնարավորություն կընձեռի կատարել ոլորտի համակողմանի ուսումնասիրություններ և վերլուծություններ, արդյունքում՝ առավել խորքային կբացահայտվեն ոլորտում առկա հիմնախնդիրներն ու առկա ռեզերվները և կմշակվեն ոլորտի զարգացման արդյունավետ ու հիմնարար ծրագրեր:

8. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների առկայության և օգտագործման ուղղությամբ

կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում առկա է լրջագույն խնդիր գյուղատնտեսության բոլոր հիմնական ռեսուրսների գծով: Ըստ էության, չափազանց անբավարար կարելի է գնահատել հողօգտագործման վիճակը մարզում, քանի որ ցածր է գյուղատնտեսական հիմնական հողատեսքերի օգտագործման մակարդակը, այդ թվում՝ վարելահողերի: Մարզում աշխատանքային ռեսուրսները ընդհանուր զբաղվածության կառուցվածքում գնալով նվազում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների մասնաբաժինը, ինչը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ աստիճանաբար գյուղատնտեսության ոլորտը մարզում դառնում է ելավելի ոչ գրավիչ գործունեության ոլորտ: Մարզում գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման բարելավման ուղղությամբ կարևոր ենք համարել պետական նպատակաուղղված քաղաքականության իրականացումը համապատասխան աջակցության ծրագրերի գործիքակազմով, մասնավորապես՝ գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացման կատարելագործում, հողաբարելավման միջոցառումների իրականացում, հատկապես քարքարոտ և անհարթ հողերի բարելավման աշխատանքներ, ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում, ոռոգման նոր ջրագծերի կառուցում:

9. Ատենախոսության շրջանակներում Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման վերլուծության համատեքստում կարևոր ենք համարել ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում մարզի խաղողի այգետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկայի վերլուծությունը, որի վերաբերյալ հաշվարկային տվյալները հնարավորություն են տվել ոչ միայն որոշակի պատկերացում կազմել մարզում խաղողագործության զարգացման արդի վիճակի և դինամիկայի մասին, այլ նաև բացահայտելու մարզի տեղն ու դերը ՀՀ խաղողագործության զարգացման համատեքստում: Այսպիսով, ՀՀ

խաղողի այ գետարածքների և համախառն բերքի կառուցվածքում Վայոց ձորի մարզի խաղողի այ գետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում խաղողի այգիների տարածությունների տեսակարար կշիռները ՀՀ խաղողի ընդհանուր այ գետարածքների նկատմամբ տարեց տարի աճել են, 2018 թվականի դրությամբ հասնելով ամենաբարձր մակարդակին՝ շուրջ 6.8%: Այսպիսով, ստացվում է, որ մարզում խաղողի այ գետարածքները հանրապետության համանման միջին ցուցանիշներից ավել անում են առաջանցիկ տեմպերով, ինչը ևս վկայում է այն մասին, որ մարզն ունի խաղողագործության զարգացման համար լուրջ ներուժ և գնալով ավելի կարևոր տեղ է զբաղեցնում երկրի խաղողագինեգործական համալիրում, քանզի առկա միտումները նշվածի վառ ասպցույցն են: Ինչ վերաբերում է ՀՀ խաղողի համախառն բերքի կառուցվածքում մարզի խաղողի համախառն բերքի տեսակարար կշիռի դինամիկային, ապա հարկ է նշել, որ նշված ցուցանիշն էականորեն բարելավվել է սկսած 2004 թվականից՝ նախորդ տարիների 1% ցուցանիշից հասնելով 2.1%-ի: Տվյալ ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2013 թվականին՝ 2.2%, իսկ դրան հաջորդող տարիներին 2014-2016թթ. կայուն անկում է գրանցվել, սակայն 2017-2018թթ. արձանագրվել է նշված ցուցանիշի կայուն աճ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ վերջինս, չնայած խաղողի այ գետարածքների ավելացմանը, պայմանավորված է մարզում խաղողի բերքատվության մակարդակի աճի ցածր տեմպերով՝ միջին հանրապետականի նկատմամբ: Վերջինս արդյունք է, ինչպես բնակլիմայական պայմանների առումով ոչ բարենպաստ տարիների, այնպես էլ միջարքայլ գործոնների, այդ թվում նաև խաղողի այգիների նոսրության, մաշվածության բարձր մակարդակի և կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների անբավարար մակարդակի:

10. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների արտադրատնտեսական

գործունեության վրա էական ազդեցություն ունեցող արտաքին և ներքին միջավայրերի գործունեությունը սուսունմասիրության և համակողմանի վերլուծության նպատակով կատարվել է SWOT վերլուծություն, որի իրականացման համար հիմք են ծառայել մարզում գործող խաղողագործության և գինեգործության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների շրջանում մեր կողմից կատարված հարցումների, հետազոտությունների և տարբեր մասնագիտական ու գիտական հրապարակումների վերլուծության արդյունքները: Նշված հետազոտությունները հնարավորություն են տվել բացահայտել ու ՅՅ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրները, ուժեղ և թուլյլ կողմերը, ինչպես նաև առկա սպառնալիքների համատեքստում համակողմանիորեն գնահատել ոլորտի զարգացման հնարավորությունները:

11. 2006-2018թթ. ՅՅ Վայոց ձորի և ԳԴՅ Բաղեն Վյուրտենբերգի մարզերի խաղողագործության հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել է հիմնական ցուցանիշների զարգացման և փոխկախվածությունների օրինաչափությունները: Ըստ տրենդներկայացնող մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 28.1 հեկտարով ($a_1 = 28.1$): Խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով ավելացել է 0.488 հազ. տոննայով ($a_1 = 0.488$), սակայն բնութագրվել է տեմպերի դանդաղեցմամբ ($a_2 = -0.02$): Վայոց ձորի մարզում խաղողի բերքատվության մակարդակը տարեկան միջին հաշվով բարձրացել է 4.45 g/հա-ով ($a_1 = 4.45$), որը ունեցել է դանդաղեցման բնույթ ($a_2 = -0.28$): Միմյանց հետ համեմատելով ՅՅ-ում և ԳԴՅ-ում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշների զարգացման միտումները՝ նկատվում է, որ ՅՅ-ում և Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշները տարեկան ունեցել են աճի

միտուլմներ, սակայն բնութագրվել են դանդաղեցման տեմպերով, որը կհանգեցնի նշված ցուցանիշների փաստացի կրճատմանը: ԳԴՅ-ում և Բադեն Վյուրտենբերգի հողում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշները ուսումնասիրվող տարիներին ունեցել են կրճատման միտուլմներ, սակայն դրանք բնութագրվել են աճի տեմպերի արագացմամբ, որը հաջորդող տարիներին կհանգեցնի խաղողի համախառն բերքի և բերքատվության մակարդակի կայուն աճի տեմպերին:

12. Կիրառելով ռեգրեսիոն կոռելյացիոն մեթոդը 2006-2018թթ. ժամանակահատվածի կտրվածքով բացահայտվել է ՀՀ-ում, Վայոց ձորի մարզում, ԳԴՅ-ում և Բադեն Վյուրտենբերգ հողում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի և տարածությունների ազդեցությունը: Կատարված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, այգետարածքների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F=1057.9 > F_{crit}=4.1$), ինչպես նաև նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները ($t_{b1}=16.5; t_{b2}=38.6 > t_{crit}=2.22$): Ուսումնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{y \times x2}=0.997$): Համաձայն կառուցված ենաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացման հետ զուգահեռ համախառն բերքը ավելացել է 4.0 տոննայով ($a_1=0.004$), իսկ բերքատվության մակարդակի մեկ ց/հա-ով ավելացման հետ զուգահեռ խաղողի համախառն բերքը ավելացել է 94 տոննայով ($a_2=0.094$): Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, տարածության և բերքատվության մակարդակի միջև փոխկախվածությունները էլաստիկ չեն ($\mathcal{E}_1=0.00002; \mathcal{E}_2=0.008$): Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի է ակնհայտ է ազդում, քան

տարածությունների փոփոխությունը: Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսումնասիրվող տարիներին Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.5%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R_{yx}^2 = 0.995$):

13. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են ինչպես ՀՀ Վայոց ձորի մարզի, այնպես էլ Գերմանիայի դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրտեմբերգ հողի խաղողագործության ոլորտները և դրանցում առկա հիմնախնդիրները, հետևաբար Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները առաջադրվել են Գերմանիայի Դաշնության Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողագործության ոլորտում կիրառվող այն ինովացիաների ու ոլորտի կարգավորման մոտեցումների ներդրման համատեքստում, որոնք, ըստ մեր գնահատման, իրատեսական կարող են լինել մարզում ներդնելու առումով: Մասնավորապես, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման համատեքստում դիտարկվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝ տրակտորների GPS և ուլտրաձայնային համակարգի ներդրում, խաղողի այգիների հիմնման գործընթացի օպտիմալացման համար CoGIS Rebpflanzenmodul ծրագրային համակարգի ներդրում, գոնայավորված քարտեզների ստեղծում, եղանակի տեղեկատվական կայանների ներդրում և կիրառություն, խաղողագիտագործության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին ուղղվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործում, խաղողի և գինու գնագոյացման պետական կարգավորում, խաղողագործական տնտեսությունների պայմանագրային հարաբերությունների կատարելագործում, խաղողի իրացման գործընթացի կատարելագործում: Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ նշված ուղղություններով մարզում խաղողագործության հեռանկարային զարգացումն ապահովելն իրատեսական կարող է լինել միայն որոշակի նախադրյալների առկայության

պայ մաններում: Մասնավորապես, մարզի խաղողագիտագործական համալիրում առկա են ինովացիաների կիրառմանը խոչնդոտող բազմաթիվ գործոններ, որոնցից հիմնականներն ըստ մեզ ֆինանսական ռեսուրսների անբավարարությունն ու տնտեսությունների չափազանց փոքր չափերն են:

14. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղում ստեղծված վիճակի բարելավման և ԳԴՀ Բադեն-Վյուրտեմբերգի հողի խաղողագործության զարգացման փորձի ներդրման հնարավորությունների ստեղծման համատեքստում ռացիոնալ և հեռանկարային լուծում կարող է հանդիսանալ խաղողագիտագործական համալիրի տնտեսվարող սուբյեկտների բազմակողմ ինտեգրացիոն գործընթացների խորացումն ու զարգացումը: Նշված համատեքստում, խոսքն առաջին հերթին վերաբերում է խաղողագործության ճյուղում կլաստերիզացիայի զարգացմանը, ինչը կարող է լրջագույն գործոն և նախապայման հանդիսանալ խաղողագործության ճյուղի կայուն և արմատական զարգացման համար: Մեր գնահատմամբ, խաղողագիտագործական կլաստերների ձևավորմամբ իրական հնարավորություններ կարող են ստեղծվել ճյուղի զարգացման մասշտաբային միջոցառումների իրականացման առումով: Մասնավորապես, կլաստերների ձևավորումը հնարավորություն կստեղծի միավորել բոլոր ռեսուրսները և համագործակցված գործունեության պայմաններում ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն: Մեր համոզմամբ, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագիտագործության զարգացման առումով կլաստերների ձևավորումը պարզապես ժամանակի օբյեկտիվ պահանջ է, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին միավորվել համընդհանուր տնտեսական հետաքրքրությունների շրջանակներում: Կլաստերի պայմաններում հնարավորություն է ստեղծվում ռեսուրսների միավորման շնորհիվ լիարժեք ինտեգրվել և լայնորեն կիրառել ոլորտի նորամուծությունները:

15. Վայոց ձորի մարզում խաղողագործության նախընտրելի մասնագիտացմանը, մասնավորապես Արենի սորտի խաղողի մշակության առավել տարածմանն ու զարգացմանը նպաստող կառուցակարգերի մշակման շրջանակներում կարևոր ենք համարել պետական աջակցության տարբերակված ծրագրերի մշակումն ու իրագործումը, ինչը մեր համոզմամբ խիստ հրատապ է մարզում խաղողագործության զարգացման և ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման համատեքստում: Մասնավորապես, որոշակի կոնկրետ սորտի խաղողի մշակության պարագայում՝ պետական աջակցության տարբերակված կառուցակարգերի շրջանակներում, նպատակահարմար ենք համարում ոռոգման ջրի վարձավճարի և նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերման արտոնյալ սուբսիդավորման կառուցակարգերի, ինչպես նաև աջակցության ծրագրերի մշակումը կապված խաղողի մթերման երկարատև պայմանագրերի կնքման գործընթացին աջակցության և գնագոյացման կառուցակարգերի բարելավման, մասնավորապես երաշխիքային գների սահմանման հետ: Առաջարկվում է, որպեսզի, ԳԴՅ Բաղեն Վյուրտենբերգ հողի փորձից ելնելով, Վայոց ձորի մարզում նույնպես իրականացվող տարբերակված նպատակային պետական աջակցության ծրագրերի հիմքում ընկած լինի պայմանագրային հարաբերություններով կարգավորվող պարտավորությունների շրջանակը, որտեղ հստակ նշված կլինի, որ տվյալ խաղողագործական տնտեսությունն այդ հատուկ ծրագրերից կարող է օգտվել բացառապես այն դեպքում, եթե ստանձնի պարտավորվածություն և նոր հիմնված խաղողի այգին առնվազն 25 տարի պատշաճ կերպով մշակելու:

Օգտագործած գրականություն

1. Այվազյան Պ. Կ., Այվազյան Գ. Պ. - Խաղողագործությունը և սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, «Սարվարդ հրատ.», Երևան, 2003թ. - 632 էջ:
2. Ալեքսանյան Վ.Ս., Թամոյան Յ. Ս. - Խաղողագործության զարգացման հիմնախնդիրները ՀՀ Վայոց Ձորի մարզում, Այլընտրանք գիտական հանդես N2 Երևան 2019թ. 174-184 էջ:
3. Ալեքսանյան Վ.Ս., Թամոյան Յ. Ս. - Խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ Վայոց ձորի մարզում, Այլընտրանք գիտական հանդես N3 Երևան 2019թ. 77-87 էջ:
4. Ավետիսյան Ս. Ս. «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը»: Երևան: «Լիմոն» հրատարակչություն, 2010թ., 233 էջ
5. Բարսեղյան Յու. Զ. - Խաղողագործություն. / Լաբորատոր-գործնական պարապմունքների ձեռնարկ. Եր.: ՀՊԱՀ, 2010. - 194 էջ:
6. Գինին հայոց ավանդական մշակույթում/ Հարությունյան Ս. և ուրիշներ: Երևան, 2005.
7. Գյուղատնտեսության նախարարության տարեկան հաշվետվություն, 2017թ., 103 էջ
8. Գրիգորյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Կ., Մանասարյան Ա. Ա. - Խաղողի արտադրության, վերամշակման էկոնոմիկայի և մաքթեթինգի հիմնահարցերը ագրարային բարեփոխումների անցումային փուլում, ՀԳԱ, Երևան, 2000թ., 60 էջ:
9. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2015 թվականի նոյեմբերի 13-ին. - 15 էջ:
10. Դավթյան Գ., Մարգարյան Լ., Աբգարյան Վ. և ուրիշներ, Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Ուսումնական ձեռնարկ - Եր.: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004. - 430 էջ:
11. Թամոյան Յ. Ս. - Խաղողագործության վիճակը և զարգացման միտումները ՀՀ Վայոց Ձորի մարզում, ՀԱԱՀ Ագրոգիտություն եվ տեխնոլոգիա 2/66 Երևան 2019թ. 38-42 էջ:

12. Թամոյան Յ. Ս. - Վայոց Ձորի մարզի բնատնտեսական պայմանները և դրանց նպաստավորությունը խաղողագործության զարգացման համար, Այլընտրանք գիտական հանդես N2 Երևան 2019թ. 165-173 էջ:
13. Թամոյան Յ. Ս. - ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բաղեն Վյուրտենբերգի հողի խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծությունը, Այլընտրանք գիտական հանդես N3 Երևան 2019թ. 67-76 էջ:
14. Խաղողագործության զարգացման հիմնահարցերը Արագածոտնի մարզում: Ատենախոսություն/Դանիելյան Վահե. Երևան 2007. – 156 էջ:
15. Խաղողագործության զարգացման հիմնախնդիրները ՀՀ Արմավիրի մարզում: Ատենախոսություն/ Ջրադացպանյան Աշոտ. Երևան, 2007. – 150 էջ:
16. «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2008 թվականի հունիսի 10-ին, 20 էջ:
17. Կազումով Ն. Բ., Կազումյան Կ. Ն. - Հայաստանի խաղողի ու պտղահատապտղային գինիների տեխնոլոգիա. Երևան: Առաջընթաց, 1992. - 488 էջ
18. Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն/ Ուսումնական ձեռնարկ: Երևան, տնտեսագետ 2004. - 373 էջ:
19. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2017թթ. տարեգրքեր:
20. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Հրապարակումներ ըստ տարիների: Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2014, 2015, 2016, 2017, 2018թթ.:
21. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թվականի հունվար-դեկտեմբեր, վիճակագրական տեղեկագիր. - 110 էջ:

22. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Վիճակագրական ժողովածուներ: Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետության նույն, 2015թ. – 199 էջ:
23. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Վիճակագրական ժողովածուներ: Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետության նույն 2017թ. – 239 էջ:
24. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014:
25. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան, 2017. – 354 էջ:
26. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2000-2018 թվականներին, Երևան 2000-2018թթ.:
27. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Գյուղական համայնքների հետազոտության հիմնական արդյունքների մասին հաշվետվություն, Երևան 2009թ. – 46 էջ:
28. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Պարենային ապահովություն և աղքատություն 2017թ. – 110 էջ:
29. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը թվերով, Երևան, 2018. – 103 էջ:
30. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2016. - 157 էջ:
31. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը: Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2016, 2017 և 2018թթ. վիճակագրական տեղեկագրեր:
32. «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կողմից Հայաստանում խաղողագործության և գինեգործության շուկայի ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվություն, Երևան

2017. - 102 էջ : <http://freda.am/wp-content/uploads/Final-Report-Grape-and-Wine-Final1.pdf>

33. «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան վարչատարածքային բաժանման մասին» ՅՅ օրենք՝ ընդունված 04.12.1995թ. – 24 էջ :
34. «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան վարչատարածքային բաժանման մասին» ՅՅ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՅՅ օրենք՝ ընդունված 17.06.2016թ. - 51 էջ :
35. Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան տնտեսական աշխարհագրություն : Ուսումնական ձեռնարկ/ Վ. Գրիգորյան, Ա. Ոսկանյան. – Եր. : Մեկնարկ, 2016. - 331 էջ :
36. ՅՅ կառավարություն «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարություն, 2011թ. - 29 էջ :
37. ՅՅ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն, Եղեգնաձոր 2017. - 55 էջ :
38. «Յայ կական բերքի առաջնության կենտրոն» ՓԲԸ, Քիշմիշային սորտերի խաղողի արտադրության ընդլայնման ծրագիր, Երևան 2013. – 33 էջ :
39. Յայ կական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան, 1982թ.:
40. Յայ րապետյան Է. Մ. Յողագիտություն, «Ասողիկ» հրատ. Երևան, 2000թ.:
41. Ղազարյան Է. - ՅՅ ագրարային տնտեսագիտությունն դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում: Երևան, Յայ ագիտակ, 2003, 184 էջ :
42. Ղազարյան Է.Ս.,Թամոյան Յ. Ս. - Խաղողագիտագործական արտադրանքի շուկայական եվ տնտեսական նշանակությունը Յայ աս տանում, ՅԱԱՅ Ագրոգիտություն եվ տեխնոլոգիա 2/66 Երևան 2019թ. 42-46 էջ :
43. Միրիմանյան Ա. - Յողագիտություն, Երևան, 1954:
44. Ներսիսյան Ա. - Յայ աս տանի կլիման: Երևան, 1964:
45. «Ձրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՅՅ օրենք, ընդունված 24.10.2011թ. – 3 էջ :
46. Սևալան Գ. Գ. Պտուղների և բանջարեղենի սառնարանային տեխնոլոգիան. - Երևան: «Ասողիկ», 2001. - 342 էջ

47. Սուվարյան Յու.Ս., Մենեջմենթ, Երևան: Տնտեսագետ, 2002. - 560 էջ
48. Տեղեկանք 2017թ. Վայոց ձորի մարզպետարանի գործունեության արդյունքների և 2018թ. ծրագրերի մասին, Եղեգնաձոր 2018. - 14 էջ:
49. Ֆերմեր «Գործնական ձեռնարկ», Եր.: ՀԱԱՀ, 2018. 512 էջ:
50. Арутюнян А. Ф. Виноградарство и виноделие в Армении. Ереван, 2007. - 701 с.
51. Арутюнян А. Ф. Природная среда армянского вина. Мезо – и микроклимат. Почвенный покров. Системная оценка потенциала. – Ер.: Авторское издание, 2009. – 952 с.
52. Арутюнян А., Арутюнян Ф., Погосян А. О состоянии виноградарства и винодела Шаруро-Даралагезского уезда Эриванской губернии в конце 19 и в начале 20 веков // Բանբեր Հայաստանի արխիվների.- N1(111).-2008. - с. 271-276
53. Баграмян Г. “Повышение эффективности комплексного использования водных ресурсов Армянской ССР”, 1973.
54. Богомолова Е. В., Толстых Т. Н. Идентификация потенциала конкурентоспособности предпринимательских структур как резерва // Вестник ТГУ. 2011. №12. С. 61-65.
55. Бунина А.Ю. Ресурсный потенциал в современных условиях хозяйствования предприятий АПК// Вестник Воронежского государственного аграрного университета. 2011. №2. С. 76-81.
56. Вавилов Н. И. Дикие родичи плодовых деревьев азиатской части СССР и Кавказа и проблемы происхождения плодовых деревьев. –Избр. труды: - М. -Л., 1960.
57. Дедю И.И., Экологический энциклопедический словарь Кишинев: Главная редакция Молдавской советской энциклопедии, 1989.
58. Малыш М. Н. Аграрная экономика: Учебник. 2-е изд.- СПб.: Изд-во “Лань”, 2002. - 688 с.
59. Мкртчян Р. С., Погосян А.С. – Научно обоснованная микрорайонная специализация виноградарства и виноделия горных регионов ведет к выходу на внешний рынок: Международный форум, посвященный проблемам рынка и права виноградао-винодельческой продукции, Ереван, 2003. – с. 41-43
60. Проектирование и формирование инновационных промышленных кластеров: Монография/ А. П. Агарков, Р. С. Голов. – М.: Издательско-торговая корпорация “Дашков и Ко”, 2016. – с. 197.

61. Проектирование и формирование инновационных промышленных кластеров: Монография/ А. П. Агарков, Р. С. Голов. – М.: Издательско-торговая корпорация “Дашков и Ко”, 2016. – с. 197.
62. Ресурсный потенциал экономического роста / под ред. М. А. Комарова и А.Н. Романова. М.: Путь России, 2012. - с. 218-225.
63. Субботин А. С., Хаустов В. А. "Гидротехника и Мелиорация" Российский государственный гидрометеорологический университет, 2006г.
64. Теория статистики: Учебник/Под ред. проф.Г.Л. Громыко.- 2-е изд., перераб. и доп. –М.: ИНФРА-М, 2005. – 476с.
65. Эконометрика: учебник для магистров /И.И Елисеева [и др.]; под ред. И. И. Елисеевой. – М.: Издательство Юрайт, 2014. – 449с.
66. Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я.Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.- М.: ЮРКНИГА, 2004. - 384 с.
67. А. С. Тамоян, Экономический анализ состояния виноградарства в Республике Армения, Аграрная экономика России: проблемы и векторы развития: монография Краснодар 2018 с. 84-91.
68. Э. С. Казарян, В. С. Алексанян, А. С. Тамоян, Эконометрический анализ взаимосвязи между площадью виноградников, валовым урожаем и уровнем урожайности винограда в Вайоц Дзорском Марзе республики Армения, НИИ ИЭП Экономико-правовые и социально-культурные аспекты взаимодействия и сотрудничества в интеграционном обществе Москва 2019 с. 88-91.
69. Якобсон А. Я., Кириллова Т.К. Инновационный менеджмент: учеб. пособие - 3-е изд.,испр.- М.: Издательство "Омега-Л", 2015, Е 2 105
70. Malathronas, J. (12.03.2016). World's best wine tours and trails, CNN Travel` <http://edition.cnn.com/travel/article/wine-trail-destinations/index.html>:
71. Statistisches Bundesamt, <https://www.destatis.de>
72. www.hxm.am
73. www.vwfa.am
74. www.minagro.am
75. www.armstat.am
76. www.ahpc.am
77. www.geo-konzept.de
78. www.fieldclimate.com

79. www.pesslinstruments.com

80. www.ble.de

81. <https://www.lwg.bayern.de>

82. <http://noev-kovcheg.ru/mag/2014-04/4359.html>